

This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.


We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + Keep it legal Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/





•

•

.

· · •

. ----L • and the second of the second

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ 186p, PLATE UNITANA սվ գիտեմ ու 1907 UNIVERSITY OF MICHIGAN

Grad EREN 953 EU#R

59UPU5, 4PU999950P5 PP 408U80P5 8. UUSPEAUUUU

Phi 27, Shuawliappur bognigni, 4. Anghu

معارف عمومیه نظارت جلیلهسنک ۵ محرم ۳۲۵ و ۵ شباط سنه ۳۲۲ تاریخلی و۳۹۹ نوم,ولی رخصتنامهسیله نشراولنمشدر

ՆԱԽԱԲԱՆ

0.000

1902 ծառւոյ «Աւեծարեր»ի ըններցողներս ջերմ ընդունելունիւնով մը ողջունած էինը սոյն ներնին մէջ Յովհ էֆ. Պուճիգանեանի հեղինակունեամը հրաձարակուսծ «Ընտա. նիքի Վերլուծոււքներ»ու երեւումը, որ հաճոյք եւ շինունիւն կրցած էր ներշնչել ամէն ըններցողի։

Անկէի վեր շա×եր փափաք յայնած էին աղն յօդուածնեու շարքը հատոր մը մէջ ամփոփելով հրատասկունեան տալ Նոյն իսկ ոմանց կողմանէ այս մասին դիմումներ ալեղած էր երիտասող հեղինակին, բայց ինչ ինչ պատճառներով հետաձգուած էր ցարդ

Վերջերս Թոգացի ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԸՆԿԵ-ՐԱ ԿՑՈՒԹԻՒՆը հանրունեան ծառայունիւն մը մացուցած ըլլաքու յուսով յարմար դացեց ի գլուխ հանել այս օգցակար ձեռՆարկը ։ Մանասանդ կարեւոր է յիշել նէ այս ձեռՆարկէն գոյացած հատոյնը կը սեփականի․ Երից. Քրիսց. Ընկերակցունեան Աղքացաց Հիւանդանոցին, ուր ձրիաքար կը դարմանուին անցէր հի անդներ ԱՌԱՆՑ ԱՉԳԻ ԵՒ ԿՐՕՆԻ ԽՏՐՈՒԹԵԱՆ․`

Արդ սիրելի է մեզ յուսալ Ձէ մեր այս sկար ձեռնարկը հանունեան ընտչալերունեան եւ գնահացման պիցի արժանանայ, որուն օգուցը կրկնակ է։ «Ընտանիքի Վերլուծումներ»էն գնող անձ մը Ձէ ճշմարից ուղեցոյց մը ունեցած պիցի ըլլայ իր ընտանեաց համար եւ Ձէ նպաստած պիցի ըլլայ բարեսիրական համտացունեան մը օգցին։

*Թ*ՈԴԱՏ

1/14 Bnianiur 1907

3 U A U A U A U A U C

(Դատանի քը անհատական կեսն քի Օմեզան ու ընկերական կեսն քի Ալֆան է, Չուկէտն է ընկե րային ամեն կարգի հիմնարկութեևանց, ձուլարանը նկարագրի, ընկերային զեղծումներու ծորակը։ Ընտանի քը մարդկային ցեղի աձումին գործարանն է։ Վայր մը ուր բնազդն ու դատողութիւնը, հարկն ու սէրը իրարու հետ հաչտուած՝ կեսն քի ներդաչնակութիւնը կը յօրինեն ւ

Մարդկային ճակատադրին, ընկերութեան կարդուսարջին որոչիչ թեափ տուող պատկառելի օրէնսգէտները, լուրջ բարոյադէտները, տաղան դաւոր իմաստասէրները, վերլուծող ընկերաբան ները, ամէնն ալ իրենց գրիչը փորձած, ուղեղը յոդնեցուցած են այս ուղղութեամբ, որով հետև որոչ ըմբռնած են նիւթեն կարեւորութեւնը, գործ նականութերնը և այն հղօր աղդեցութերնը որ այդ հաստատութերնը ընկերութեան ներկային ու ապա գային վրայ կը ձգէ, այն կչիուր որ ունի մարդկա յին երջանկութեան դարաւոր գաղափարական իրա գործումին մէջ։

Կարժե ուրեմն, անգամ մ՝ալ հրապարակ նեւ տել այս նիւԹը և զայն վերլուծօրէն զննել՝ աւելի կարոզ գրիչներու Թողլով աւելի ընդարձակ, խոր ու հիմնական ուսումնասիրուԹիւն մր։

• ्री - अन्न -بى --,

Ընտանիքի Վերլուծումներ

U

Բնութիւնը մարդկային սեռի աճումը պահպանելու եւ ընկերական կեանքի յարմար խարիսխ մը շինելու նպատակաւ մարդուն մէջ դրած է այս անդիմադրելի, ինքնաբերական շարժումը, որոյ դէմ միայն խելագարները, մոլեռանդները, ծայրայեղ յոռոտեմները ու կեանքի պայքարին մէջ դասալիք եղողները կը հակառակին։

ሮኒያዬኒኮՔኮ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ամուրիութինսը ընկերային ամէն կարգի գեղծումներու ծնողն ու քաջալերողն է, ծայթայեղ գաղափարներու, մոլար վարդապետութեանց փաստաբանը, մոլութեանց դաշնակիցը եւ ապստամբապետը Բնութեան բարերար ու յաւիտենական օրէնքին դէմ։ Ամուրիութինը գատապարտելի է, որովՏետեւ ինչ որ անբնական է՝ անէծքն ու փտութինսը իր ողնածուծին մէջ ունի։

Ուրեմն ամումնութիննը բաղձալի իտէալը ըլլալու է ամէն անոնց որոնք առոյգ երիտասարդ-Ներ են, պարտաւորիչ օրէնքը ընկերային բջիջներու եւ օրինաւոր վիճակը կեանքի։ Սակայն ամուս-Նութիննը առեղծուած մ՚է որ քիչեր կրնան լուծել, եւ հետեւաբար կեանքի այդ կեդրոնական կէտը կոխելէ առաջ՝ պէտք է լրջօրէն մտածել կշռադատել եւ ապա վճիռ արձակել։

Ամումսութինսը քանի որ տեւական միութինն մ՚է՝ երկար մտածում կը պահանջէ, որովհետեւ ամումսութինններ կան որ Տարպեան ժայո մը կը դառնան պսակուող ամոլին եւ համայնքին որուն կը պատկանին։ Ամումնութեան ձեռնարկելէ առաջ յետագայ պայմանները նկատողութեան առնելու է։

Ո՛ չ էսեսել, ո՛ չ եսեսենն է։ Գիւղերու մէջ տարիքը յարմարագոյն ատենն է։ Գիւղերու մէջ ընդհանրացած կանխամուսնուԹիւնը եւ քաղաք-

ներու մէջ օրըստօրէ շեշտուող ուշ ամումնանալու սովորոյթը ծայրայեղութիններ են, որոնք թէ բնախօսական եւ թէ բարոյական տեսակէտով վնասակար են։ Առաջինները կեանքի ընդհանուր նպատակը, ապրելու որոշ միջոց մը, ընտանիք մը վարելու ձեռնչասութինը չունեցած ասպարէզ կ'ելլեն, եւ երկրորդները իրենց առողջութեան կորովը սպառած, սիրոյ մոգական բնազդը մարած, կեանքի պայքարէն սարսափահար՝ միութին մը կը կնքեն։ Մէկուն մէջ լրջութինը, միսին մէջ զուարթութինը կը բացակայի։ Միոյն մէջ ընտանիքը խաղարան, միսին մէջ սառնարան կը դառնայ։

Սեռերու տարիքի հաւասառակշռութինն ալ կարեւոր կէտ մ՚՛է շատ մը դիտակէտներէ, Թէ առողջութեան, Թէ փոխադարձ սիրոյ եւ Թէ ըն~ տանեկան երջանկութեան։ Շատերը զոհ կ՛երթան այս յիմար մղձաւանջին։ Ամումնական մասնաւոր օրէնքներ դրուելու են եւ քահանաները պատաս~ խանատու ըլլալու են այս կարգի զեղծումներու։ Հասարակաց կարծիքը լուսաւորելու է որ խըս~ տապահանջ ըլլայ եւ պատուար կանգնի քմածին ամուսնութեանց ընդդէմ։

Ամումնանալէ առաջ նկատելու պայման մ'ալ է ապելը է էրաչիասուրըները, Մէկը որ չկրնար ինքը զինքը հոգալ՝ պէտք չէ որ ամումնանայ։ Իր օրաշ պահիկը հազիւ ճարող մը ինտո՞ր կրնայ ընտաշ

Նիքի մը ՆիւԹական գոյուԹիւնը ապահովել։ Ըն~ տանիք մի առանց տնտեսականի ո՛չ կանգուն կինայ մնալ, հչ ալ պատշաճ խնամը տանիլ զաւակաց։ Առանց տնտեսական ապահովութեան էրկան գտնկր մտատանջութեան բոյն մը կը դառնայ, զգացումները մելամաղձոտ, դէմքը կնձռոտ, լեզուն շարունակ դժգոհանք ու գանգատ կը Թափէ բաղդին ու կեանքին դէմ։ Տնտեսականի պակասը ամուսիններու սէրը իսկ կը պաղեցնէ։ Դրամ վաստկող այր մր աւելի հեղինակութիւն կ'ունենայ քան անճարակը , որովհետեւ յարգանքը գերազանցու~ Թեան մը հանդէպ կը ծնանի։ Տնտեսականի պակասը կը սպառնայ զաւակներու ներկայ երջան~ կուԹեան եւ ապագայ բարօրուԹեան։ Կեանքի նախ-Նական պէտքերէ ու վայելքէ զրկումը առողջու~ Թիւնը կը քայքայէ։ Կանոնաւոր ու կոկիկ դաստիարակութեան մր չգոյութիւնը զանոնը ընկերա~ կան սանդուխին ստորոտը կը նետէ։

Երիտասարդ մը որ չունի առողջ մկանունը, կարմիր արիւն, կայտառ դէմը, ջղուտ կազմ, երիտասարդ մը որ չունի ֆիզիքական ոյժ եւ զայն գործածելու յօժարուԹիւն՝ պէտը չէ որ ամուսնա~ նայ ։Երիտասարդ մը որ ոսկիէ ապարանջան մը չունի դաստակը կամ մասնաւոր արհեստ մը, եւ այդ արհեստին մէջ գէԹ չափաւոր ճարտարուԹիւն չցուցնէ՝ պէտք չէ որ ամուսնանայ ։Արհեստը եկա~

łO

ጣէS₽ է ฃฃՈՒՍՆԱՆԱԼ ԵՒ Ե°ՐԲ

մուտի կանոնաւոր եւ մշտնջենական աղբիւր մ'է։ Անոնք որ բարձրագոյն կրԹուԹիւն մը առած չեն կամ պապենական ժառանգուԹիւն չունին, պէտք է որ ընԹացիկ արհեստ մը իւրացնելու հետամտին ամումնանալէ առաջ ։ Երիտասարդ մը որ բարձրագոյն կրԹուԹիւն առած չէ ու գիտուԹեան դրամագլուխը չունի, որով կարող ըլլայ ազատ արուեստի մը հետամտիլ՝ պէտք չէ որ ամումնանայ ։ Երիտասարդ մը որ իբր ժառանգուԹիւն դրամագլուխ մը չունի, որով կարող ըլլայ առեւտրական ձեռնարկ մը ի գլուխ հանել՝ պէտք չէ որ ամումնանայ ։

Մէկ խօսքով, անոնք որ մարմնոյ ոյժ, ձեռքի ճարտարութիւն, մտքի պաշար, հայրենական օժիտ մը չունին կամ ապրելու երաշխաւորութիւն՝ պէտք չէ որ կեանքի միութիւնը կազմեն, որովհետեւ Թէ իրենք եւ Թէ իրենց բունէն ծլող մանկիկները Թշուառ կ'ըլլան եւ ընկերութեան մարմնոյն վրայ մակաբոյծ մուրացկաններ կ'աւելնան։

H

ԱՄՈՒՍԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ազատ սիրոյ վարդապետուԹիւնը եւ սիրոյ իբր որոշիչ տարը ըլլալը միուԹեան բաղձալի իտէալ-Ներ են, որ այլ եւ այլ կլիմաներու եւ սովորու-Թեանց ազդեցուԹեամբ իրենց եղանակաւորում-Ները կը ստանան։

Սէրը սրտեր միացնող է՞ն զօրաւոր կապնէ, զգացումներ ներդաշնակող ու կեանքեր ի մի ձուլող լաւագոյն ազդակն է։

Ցիմարական մոլեգին սիրահարուԹիւ՜նք ժա~ մավաճառուԹիւն են եւ խելագար ուղեղներէ կը բըղ~ խի՞ս։ Այս կարգի յիմարուԹիւններ չէ որ կը քա~ Ջալերեմ։

Ծնողջ երբեմն բռնապետ կը դառնան՝ իրենց քմահաճոյից զոհելով իրարու նուիրուող երկու սրտեր։ Ծնողջ շատ զգոյշ ըլլալու են այս մասին։ Երբ կը տեսնեն Թէ սէրը հարազատ է, կըրակ է, փոխան մոխիր ցանելու՝ պէտջ է լռելեայն քաջալերել։ Ասոր հակառակ ընԹացջ մը դաւաճանուԹիւն է, մարդասպանուԹիւն։ ԱմուսնուԹիւնը իրեն վէջ այնչափ մը Թնճկոտ առեղծուածներ ունի, որը միայն սիրող սիրտ մր կրնայ

ԱՄՈՒՍԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

լուծել։ Առանց սիրոյ՝ կեանքի ու մահու դաշ-ՆակցուԹիւն մը տեւական չըլլար։

Չեմ րսեր Թէ ծնոդքը ռեւէ իրաւասուԹին։ չունի այս մասին։ Քա՞ւ լիցի։ ԸնդՀակառակն, ծնողաց պարտքն է իրենց զաւկին միտքը լուսա~ ւորել փորձառութեան տուած թելադրութիւննե֊ րով , անոր զգացումին կրակը մտածութեամբ մեղմել, խաթուսիկ ու իրական սիրոյ տարբերուԹիւնը ցուցնել, պաղարիւն ու խենդ սիրոյ զուգակշիդը րնել։ Վերջապէս տղան հատելել որ լաւագոյն ընտրութիւնը ընէ, չէ թէ կամքին վրայ թռուու։ Սէրը անպարտելի է։ Մանաւանդ այս կէտին ծայ~ րագոյն աստիճանի ուշադրութիւն տալու է։ Երբ աղջիկն ուտղան կ'ատեն զիրար, ծնողը պէտը չէ որ բռնի ամումնացնեն ։ Ծնողաց աչքին տղան որքան այ գեղեցիկ երեւնայ, որչափ այ ազնիւ, 2[‡]+, ընտիր երեւնալ, աղջկան աչքին դեւ մր կը Թուի, անգութ գազան մը, որուն միացնել ստիպուած է իր ճակատագիրը։ Երբ սրտերը սիրով պսակուած չեն, մանաւանդ ատելուԹեամբ անջատուած են, եկեղեցական ձեւակերպութինըները, օրհնէքները սոսկ հեգնութինններ են։ Զաւակը ծնողաց գերին չէ, այլ աւանդը. այս գաղափարը Հրեղէն տառերով քանդակելու է ծնողաց յիշողուԹեանը մէջ։ Թէ ի՞նչ աստիճանի ազատու-Թիւն տալու է ամուսնուԹեան Թեկնածուներուն

[3

իրենց նշանած գտնելու մասին՝ բաւական դրժուար է ըսել, մանաւանդ գաւառներու մէջ։ ԼուսաւորուԹեան աստիճանը եւ տեղական բարքերը կը վճռեն այս կէտը։ Պէտք է յարգել սովորոյԹները. նախապաշարումները մէկէն բզքտելու չէ. սակայն քիչ մ'ալ ազատամիտ ըլլալու է, սրտի օրէնքներն ալ ուշադրուԹեան առնելու է։ Նշանուածներու Թուլատրելու է տեսակցիլ, նամակակցիլ։ Անոնք զգայուն ապակիներ են, այդ ատենի փոխադարձ տպաւորուԹիւնները անջնջելի կը մնան։ Ատով ապագայ միուԹեան գետինը կը պատրաստուի։

Սէրը ընտրուԹեան առաջին պայմանը նկատեցինք։ Երկրորդ պայման մը կրնանք նկատել նիւԹական, իմացական եւ բարոյական պայմաններու ներդաշնակուԹիւնը։ Մակարդակի ՀաւասարուԹիւնը լաւագոյն խարիսխն է միուԹեան։ Երբ աղքատ երիտասարդ մը Հարուստ օրիորդ մը առնել կը նկրտի, քրտինքով ԹշուառուԹիւն կը գնէ։ Հարուստ կիներ պաՀանջկոտ կ'ըլլան, հեղինակուԹիւն կը ծախեն իրենց աղքատ էրիկներուն վրայ։ Իրենց քմայքը պէտք է որ յագենայ. պերճանքը կատարեալ ըլլալու է։ Այս կարգի տուն մը կռուղյ բոյն է, դժոխքի մանրանկար մը։ Երբ գիտուն օրիորդ մը իր բաղդը տգէտ ամուսնոյ մը կը կցէ, տառապանքի ծովը կ'իյնայ, որովՏետեւ իր իտէալները, ճաշակները, մտածելու եղանակր,

ԱՄՈՒՍԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

փափուկ փափաքները կ՝արհամարուին կոշտ հրամայականութեամբ եւ բիրտ վարմունքով։ Կրթեալ այր մը դիւրաւ կրնայ անուս կնոջ մը հետ ապրիլ՝ օրըստօրէ անոր ճաշակները փոխելով, զայն իր ներքին պատկերին նման ստեղծելով, քանի որ կրթեալ կին մը անհուն մարտիրոսութիւններ կը կրէ գռեհիկ մարդու մը հետ ապրելու դատապարտուելով։

Նկարագրի ՆոյՆուԹիւՆը պզտիկ պայման մը չէ միուԹեան ։ Մաքրասէր այր մը կեղտոտ կնոջ մը , փափկասիրտը դաժանաբարոյին , լուրջը ԹեԹեւաբարոյին , կրօնասէրը զուարձասէրին , առաքինին անպարկեշտին հետ դժուարաւ կրնան ապրիլ ։ Ընտանեկան ահռելի տռամներ , ցուրտ վերաբերումներ , Թագուն ատելուԹիւն , անդադրում վէճ եւ քստմնելի կռիւներ ճիշդ այս պատճառաւ կը ծընանին ։ Վիճակի , մտքի ու նկարագրի նմանու-Թիւնը ընտանեկան կեանքի ներդաշնակուԹեան լաւագոյն սատարներէն մին է ։

Քանի որ կինը ճակատագրուած է մարդկային ցեղի ածումին արտադրիչն րլլալ, շատ մր տկարութեանց եւ Հիւանդութիւններու ենթակալ է։ Քանի որ տան մր չորս պատերուն մէջ բանտ~ ուած է եւ Նստողական կեանքի դատապարտուած, քանի որ տնական՝ գործերը մելամաղձոտ կեանք մը կը շինեն, քանի որ մաքուր օդի, ազատ շրջա~ գայուԹեան, առատ լոյսէ եւ մարմնոյն հիւսկէնները մարզող գործունէութենչ զուրկ է, պէտը է առողջութիւնը իբր առաջին պայման փնտռուի րնտրելիի մը վրալ։ Մանաւանդ ժառանդական ՀիւանդուԹեանց ենԹակայ ախտավարակ ընտա-Նիքներէ սերող անհատներէ զգուշանալու է, որով~ հետեւ Թէ ամուսնագողներու կեանքը կր Թշուառանալ եւ Թէ հիւծախտաւորներու սերունդ մր կը կտակուի ընկերութեան։

Գեղերդա-Բե-եր ոմանց Համար միայն պայմանն է ընկեր մը ընտրելու։ Ոմանք գեղեցկու-Թեան Հրապոյրէն, շնորՀքէն Թովուած՝ իրենց բաղդը, պատիւը, կեանքը կը զոհեն աստղիկի մը քմայքին եւ կը մոռնան այն բոլոր բարեմասնու-Թինները որ տիպար կինը կը շինեն։ Իրաւ, Բնու-Թիննը մարդուն մէջ դրած է գեղեցիկը գնահատելու զգացումը, բայց այդ զգացման զոհ տալու չենք ընտանիքի մը բարոյականը։ Բնընտրողու-Թեան օրէնքը կը տրամադրէ որ գեղեցիկը ընտրուի

ու մարդկային սեռը այս տէսակէտով ալ բարեշրջի։ ԳեղեցկուԹիւնը չափաւոր կարեւորուԹիւն մը ու-Նի։ Գողտրիկ մանուկներ ունենայր ծնողական մնափառուԹինը կը յագեցնէ, գեղագիտական զգացումը կը փայփայէ եւ իգական սեռին համարյաւագոյն ճակատագիր մը ունենալու պատճառ կ'րլյալ ։ ման մ՝է, որ նկատողութեան առնելու ենք ընկեր փնտռելու ատեն։ Դաստիարակութիւնը նկարա-՝ գրին կեղեւր կր ջրդեղէ, քիչ անգամ ներքին հակումները կը փոխէ․ ընդՀակառակը ժառանգակա-ՆուԹիւնը մտքի Հիմնական տրամադրուԹիւնները, նկարագրի արմատական գիծերը, հակամիտու~ առանգքը, ճաշակներու ուղղուԹիւնը Թեանգ կը ստեղծէ։ Յոռի ունակութիւններ, բարի բնոյթ-Ներ ասով կը փոխանցուին։ Այս տեսակէտով ար~ եան ազնուականութիւնը փիլիսոփայական հիմ ու-Նի։ Տարափոխիկ ՀիւանդուԹիւններ, ներքին ախտեր, եղեռնական հակումներ այս միջոգով սե~ րունդէ սերունդ կը կտակուին ։ Վիճակագրութինը դրական փաստեր կուտան այս մասին։

Տաղանդը կեանքի դրամագլուխն է․ տաղանդաւոր կին մը դիւրաւ, զուարԹուԹեամբ եւ օրինաւորապէս կընայ կառավարել տուն մը։ Ընտանեաց տնտեսուԹիւնը, զաւակաց վարչուԹիւնը, պատահականուԹեանց դեղԹափն է տաղանդը։ Աւելի

303 - C>+->++ 4++1 --+++

լաւ է տաղանդաւոր կին մը ունենալ քան բթեամիտ ուսումնաւարտ մը։ Տաղանդաւոր՝ զաւակներ ունե~ Նալու Համար ալ կարեւոր է այս պայմանը։

ԿրԹեալ կին մը ունենալ գանձ մը ունենալ է, եԹէ դաստիարակուԹիւնը անոր զգացումները յըղկած, իմացականուԹիւնը մշակած, կամքը կրԹած, ճաշակը ազնուացուցած է։ Թերուս կին մը յաւակնուԹեանց ենԹակայ է եւ տեսակ մը պատիժ իր էրկան։ Դաստիարակուած կին մը ընտիր կրԹիչ մը կշլլայ զաւակաց եւ անոնց մէջ առողջ բարոյականի հիմեր կը ձգէ։

ՀամեստուԹիւնը կնոջ վրայ փնտռուելիք է՞ն յատկանշական երեւոյԹն է։ ՀամեստուԹիւնը կնոջական շնորհաց հոգին է, կնոջական առաքինու-Թեանց պսակը, անոր գրաւչուԹեան գաղտնիքը, գեղեցկուԹեան վարդը, հեղինակուԹեան էուԹիւնը ՀամեստուԹիւնը ընտանեկան արժանապատուու-Թեան պահապան հրեշտակն է, համեստուԹիւնը ընտանեկան սրբուԹեան օծուԹիւնն է։ Անպարկեշտ կին մը Սադայէլ մ'է, որ կը պղծէ ընտանեկան խորանը, ապականուԹեան սերմեր կը ներարկէ իր սրտի հատորներուն ու այսպէս անէծքի կեդրոն մը կը դառնայ։

Հաշակ եւ բարեկրԹուԹիւն կնոջական բարեմասնուԹեանց բնորոշ տարրերէն են։ Ատով տան արտաքին բարեկարգուԹիւնը կը լրանայ։ Այդ

ԱՄՈՒՍԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

կարգի կին մը երեկոյԹներու, խնճոյքներու, տօ-ՆախմբուԹեանց, այցելուԹեանց ատեն կը փայլի։ ԲարեկիրԹ կինը քաղաքավար ալ կ'ըլլայ խօսուածքին, քալուածքին, նիստ ու կացին ու ընդ-Հանուր կենցաղավարուԹեանը մէջ։

12

K

.

կը փնտռեն՝ հարուստ կինը Շատեր իրենգ քսակը գիրցունելու ու մեծատան գերդաստանի մը փեսալ ըլլալու դիտումով։ Հոս մնափառութինը եւ Հարստութեան տենչը վարագոյը կր քաշեն րնտրելիին խոշոր ԹերուԹեանց վրալ։ Ասոնք ոսկեզօծ անէծք մը կր հիւրընկայեն։ ՀարստուԹիւնը առաւեյուԹիւն մ՚՛է, եԹէ կարգ մր ԹերուԹիւններ, մոռցնել չտար։ Աղքատ գերդաստանի մր կապուհլ կարգ մը ԹշուառուԹեանց ենԹարկուիլ է։ Դժբաղդութեան գոհերուն արցունքը տեսնել, անոնց օգ-Նելու պատասխանատուուԹիւնը զգալ եւ անոնց ցաւերը մեղմելու անկարող գտնուիլ՝ սրտաձմլիկ պարագայ մ'՛է։ Բարեկեցիկ ընտանեաց մր շառաւիդը կազմել՝ կեանքի բարեբաղդուԹիւններէն է։ Աղջատութեան ծոցէն ազնուութեան շուշաններ կը փԹԹին, անոնք տիպար ամուսին կ'րլլան, անոնը Հակառակ խօսիլ չէ նպատակս։ Կ'ուզեմ՝ շեշտել սա կէտը Թէ կան ազգակցուԹեան անո֊ ղոք կապեր, որ ամբողջ կեանքը կր Թշուառազնեն խշճամիտ երիտասարդներու։

Ակնարկուած բարեմամնուԹիւնները բոլորը

*վիասի*ն անհնար է գտնել ընտրելիի մը վրայ. այս մասին ոեւէ աշխատանք յուսախաբուԹեան կ'առաջնորդէ։ Սակայն ասոնց մէջէն գէԹ ան~ հրաժեշտ յատկանիշները ուշադրուԹեան առնելու են ։ ԱռողջուԹիւն, լաւ ժառանգականուԹիւն, համեստուԹիւն եւ տնաշինուԹիւն քառեակ յատ~ կուԹիւններ են, որ ամէն ընտրելիի վրայ փընտ~ ռուելու են ։ Իմաստուն երիտասարդ մը խոհեմ կ'ըլլայ իր ընտրուԹեան մէջ, որովհետեւ իր ընտրուԹենէն կախում ունի իր եւ սերունդին ճակատագիրը ։

ԱՆշուշտ օրիորդներ ալ իրաւունք եւ պարտք ունին փնտռել կարգ մը բարեմասնուԹիւններ այն մարդոց վրայ, որոնց կը յանձնեն իրենց կեանքն ու բաղդը, ներկան ու ապագան։

Կինը մեքենայ չէ, ոչ ալ ողջակէզ, այլ ամուսնական միուԹեան մէջ իր պահանջները ունի։ Կին մը որ առանց կշռադատելու, ծնողաց քմայքը յագեցնելու համար կամ բնազդական մղումներէ դրդեալ՝ իր ձեռքը ուրիշի մը կու տայ, իրեն համար դժբաղդուԹեան վիճակ մը կը պատրաստէ։ Կարգ մը ծնողքներ այնպէս կը խորհին Թէ տիպար կինը համը կինն է, ու էն ազնիւ օրիորդը այն է որ իր ծնողաց վճռին կը համակերպի անտրտունջ, անմըմունջ։ Անհամեստ կը նկատուին ամէն անոնք որ իրենց կարծիքը կը յայտնեն

ԱՄՈՒՍԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

խնդրարկու երիտասարդին նկատմամբ։ Ըստ իս, օրիորդ մը գիտակցաբար նետուելու է կեանքի մէջ ու Արգոսի աչքերով վերլուծելու է իրեն ձեռքը խնդրող երիտասարդաց նկարագիրը, անոնց ֆիզիգական ու իմացական ոյժերը։

Օրիորդ մը Հետեւեալ յատկանիշները փընտ~ ռելու է ամումնական ընտրելիներուն վրայ։

Առողջութիւն, որ այրը կարենայ օրապահիկը շահիլ․ վատառողջ այր մը մելամաղձոտ, ցասկոտ կ'ըլլայ։ Անոր կինը ստիպուած է շարունակ հիւանդապահի պաշտօնը վարել։ Տնական տաժանելի աշխատանքը, իր բոցակէզ սէրը զինք կը հիւծեն երբ իր սիրելին մահիճին գերի կ'ըլլայ։

Առողջ նկարագիրը կարեւոր տարը մ'է որ փնտռուելու է փեսացուին վրայ։ Աննկարագիր այրը իր կնոջ կեանքին խարտոցն է, անոր զգացումներուն դահիճը։ Անառակ ԹեԹեւաբարոյ հարուստը կեանքի պատահականուԹեանց մէջ իր ինչքը կը կորմնցնէ, զուարճուԹեամբ իր դրամը կը մսխէ եւ մուրացկանուԹեան աստիճանին կը հասնի, քանի որ նկարագրի տէր աղքատ երիտասարդ մը ամենէն դժբաղդ պարագաներուն տակ իսկ կընայ գործ գտնել ու ապրիլ։ Ուրիշներուն համար կը խորհին եւ գործ մը կը գտնեն։

12

たい

Պատուաւոր այրը կնոջ պարծանքն է, հա~

Օրիորդ մը իր ընտրուԹեան մէջ իմաստուն ըլլալու է։ ԵրեւուԹէն շլանալու չէ։ Չէ Թէ հարուստը, գեղեցիկը, անուշ լեզուն ընտրելու է, այլ զայն որ իր կոչումին գիտակցուԹիւնը ունի, կեանքը վերլուծած է, կնոջ յարգը գիտէ։

P

ኄፘԱኄԱԽ᠐ሀበՒԹԻՒՆ

Երբ երկու հոգի յարմար ընտրուԹինսը կ'ընեն, բրենց կեանքի սեմին՝ վրայ կը գտնեն նշանախօսուԹինը ։

Ընկերային արարողութեանց դէմ չեմ, անոնք տափակ կեանքին հրապոյր կուտան, յարաբերու-Թիւնները աւելի կանոնաւոր ու անուշ կը շինեն։ Պահիկ մը մոռցնել կուտան տառապանքները ու զուարթութեան կազդուրիչ ոյժը կը ներարկեն Թշուառ կեանքին մէջ։ Սակայն արարողութիւններ կան որ միահեծան կը տիրապետեն ժողովըրդոց վրայ, եւ ժողովուրդը գառնուկի մը համա-

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

կերպուԹիւնը ունի անոնց հանդէպ՝ առանց բողոքելու զեղծումներուն դէմ։ Ինչպէս որ հասարակաց կարծիքը կը պաշտէ՝ դժուար է արմատաքի խլել։ Նշանուած կեանքի մէջ բաւական կարեւոր դիրք կը բռնեն խնձոյքները։ Այս խնձոյքները պարտաւորիչ են։ Կեանքը կը պահանջէ որ մարդ իր ուրախուԹեան րոպէներուն մանկան մը ժպիտը ունենայ, բայց երբ հաձոյքները ինքնաբուղխ չեն եւ սոսկ արարողուԹիւն, երբ օրական ուրախու-Թեան փոխարէն ամիմներով մտածել ու տառապել կու տան, երբ հազիւ օրապահիկը ճարողի մը տնտեսականը կը խախտեն, երբ գինովուԹիւնը, զեղխուԹիւնը, խեղկատակուԹիւնը, շռայլուԹիւնը եւ ԹշուառուԹեանց դուռ կը բացուի։

Խնձոյքները Համեմատական ըլլալու են տնտեսական կարողուԹեան։ Հարուստները այս մասին ինայուԹեանց օրինակ ըլլալու են։ Բարեկեցիկը իր եւ աղքատը իր դիրքին Համեմատ շարժելու է։ Հասարակաց կարծիքը լուսաւորուելու է այս մասին, եւ անՀատականուԹեան ոզին շեշտուելու է ընկերային անիմաստ արարողուԹեանց դէմ։

1

5

Թշնամիներու փոխադարձ նուէրները մտածուԹեան ուրիշնիւԹ մ՝են։ Այս պարգեւները տօներու առԹիւ կը տրուին, սիրոյնշանակներ են եւ ինամուԹինը գօրացնող միջոցներ։ Ասոնք

Հաճոյքի պայմաններ են եւ բարեկամական կապերը կ՛ամրապնդեն։ Այս նուէրները ըլլալու են չափաւոր եւ սրտաբուղխ։ Փոխադարձ մեղադրանքները կը ցուցնեն Թէ սէրը Հարաղատ չէ եւ այդ արարողուԹիննները շահու քաղաքականուԹեան վրայ կը դառնան։

Փեսացուին կողմէն Հարսնցուին տրուելիք ըն~ ծաները խելագար սիրով գրգռուելու չեն։ Նշանօրերու մէջ զգացումը այնչափ пгтр ուժգին կը գործէ որ տրամաբանութիւնը կըստիպուի լը~ ռել։ Փեսացուն իր սիրոյն անհունուԹիւնը ապա- ցուցանելու, իր կարողութեան մակարդակը ցուցադրելու — պատիւ վաստկելու — Համար իր քրսակը կը պարպէ։ Երբեմն ուրիշին քսակէն կը մուրայ պարտքի կամ խարդախութեան ձեւով , եւ օքէ օր ոսկիներու շարքեր, օղերու գոյգեր, ոսկիէ ու եակ ականակուռ մատանի կը խրկէ իբր նշան, կարծես Ռոչիլտի Թոռնիկն րլլար։ Երիտասարդ-Ներ կան որ այս պատճառաւ իրենք տնտեսական տագնապը կը ստեղծեն, ուրիշներ իրենց դրամա~ գյուխը պերճանքի կը զոհեն ու բերանաբաց ճանճ կը կլլեն՝ Հոս Հոն գործ մուրալով։

Երիտասարդներ կան որ ամուրիուԹիւնը կամ ուշ ամուսնանալը կը Նախընտրեն այս պատճառաւ։ Ընկերային անիմաստ արարողուԹեան մր

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

զոհ կ'երԹան երիտասարդներ, ու համայնքը կը կորմնցնէ իր ապագայ բազմամարդուԹիւնը։

ԱՆշուշտ այս ՆուէրՆերը իրեՆց ՀոգեբաՆակաՆ Հիմը ուՆիՆ, բայց սովորուԹիւՆՆերը շարուՆակ չափազաՆցուԹեաՆ ու մեքեՆակաՆուԹեաՆ կը միտիՆ։ Օժիտ, դրամօժիտ եւ « դաշաք » ՆոյՆ ՆիւԹը շօշափող թՆկերայիՆ ԹՆՀկոտ Հարցեր եՆ ։

Ծժիտը իբր նուէր Հարմնցուին ծնողքը կու տայ, բայց քանի որ Հարմնեւորներու ներկայու-Թեան ելլելով խծբծանքի ու քննադատուԹեան են-Թակայ է, պարտաւորիչ ու ակամայ Հանգամանք մը կ'առնէ։ Հինգ, վեց, տասը ձեռք զգեստ է՞ն սուղ կերպասներէն շինուած ու ժանեակներով եզերուած 20–50 ոսկիի կը նստին ծնողաց վրայ։ Այդչափ ստակ գաւառներու մէջ Համեստ դրամագլուխ մ'է։ ԵԹէ ծնողք բարեբաղդաբար կամ դժբաղդաբար չորս Հինգ աղջիկ ունին, պարտին գիշեր ցորեկ ոգի ի բռին աշխատիլ 100 ոսկիի գումար մը պատրաստ ունենալու նպատակաւ։ Աստուծոյ ընծայած այդ Հրեշտակները անէծք կը դառնան ընտանեաց։

Odhտը երբեմն խնավիներու գժտուԹեան խըն-Հորն է։ Odhտի սէրը երբեմն խայծ կ`ըլլայ ըստեղծումով անօժիտ ընկերներ ընտրելու։

Դրամօժիտը աղջկան տէրը կուտայ փեսացուին՝ զայն որսալու Համար։ Դրամօժիտը խիստ

 Աստակար է։ Անով շատ մը անյարմար աղջիկներ մայր ըլլալով յոռի սերունդի մը ծնունդ կու տան։ Շատ օրիորդներ իրենց Հօր քսակին կըռԹնած, փոխանակ տնական գործեր ընելու եւ ապագայ մայրուԹեան կարեւոր պատրաստուԹիւնը տեսնելու, մինչեւ երեկոյ կը շաղակրատեն։ Մնամէջ սիրաբան։ւԹիւններով, գինով սիրաՀարուԹիւններով կ՚անցնեն իրենց կեանքին ծաղիկ օրերը։

Դրամօժիտը սրտերու միուԹեան փոխարէն արծաԹի միուԹիւնը հաստատելով՝ ընտանեկան կեանքը մեքենական, մաԹեմաԹիքական հաշիւներու շղԹայ մը կը շինէ, կը կորմնցնէ էրիկին հեղինակուԹիւնը եւ կնոջ քմայքը օրէնքի կը վերածէ ։ Ընտանիքի վարչուԹիւնը անիշխանուԹիւն կ'ըլլայ ։ Դրամօժիտը փեսացուին արժանիքն ու արժանապատուուԹիւնը կը վիրաւորէ եւ անոր մէջ կը սպաննէ ինքնավարուԹեան, անկախ գործունէուԹեան ոգին ։

Պ.--2227 . Տղին տէրը կուտայ աղջկան ծնողաց, աղջկան ծնողքն ալ եսասիրական ու շահադիտական նկատումներով իրենց աղջիկը կուտան շատ դրամ տուողին : Լռելեայն աճուրդի կը դրուի աղջիկը : Այս դրուԹեամբ սիրոյ վարդապետուԹինը սակարկուԹեան կը զոհուի ։ Գաւառներու մուԹ խորշերը , գիւղերու մէջ դեռ այս նզովեալ սովորուԹինը կը տիրէ իր քստմնելի երեւուԹով ։

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Վերջապէս այն բոլոր սովորուԹիննները որոնք սիրոյ վիուԹեան տեղ հաշիւի վիուԹինը կը հաստատեն, ինքնաբուղխ նուէրը պարտաւորիչ հարկի կը վերածեն, խնամիներու ելեւմուտքը կը խանգարեն, ստեղծումի բնածին օժիտէն աւելի արտաքին օժիտի յարգ կու տան, սրտի ազնի զգացումները կը հեզնեն, մտքի առողջ սկզբունքները կը ջլատեն, պէտք է արհամարհանօք վտարել մեր ընտանեկան բարքերէն ու հետզհետէ ընտանեկան կեանքի հիմնարկէքը աւելի հաստատուն կռուանի մր վրայ հաստատել ։



ጉ

ባሀԱԿ በՒ ՀԱՐሀԱՆԻՔ

Պսակը է՞ն մեծ խորհուրդն է, է՞ն խորհրդաւոր արարողուԹիւնը որ երբէք կրնայ ըլլալ։ Անով չէ Թէ երկու ձեռքեր իրարու կը միանան , այլ երկու սրտեր իրարու մէջ կը լուծուին։ Երկու կեանք կը լծակցի , երկու ճակատագրի եզրեր կը միանան , երկու գերդաստան յարաբերական Թելով մը իրարու կը կցուին եւ ընկերուԹեան հատուածները կը կեդրոնանան ։ Պսակներուն գերագոյնն է գրտէ պսակը ։ Երբ երկու սրտեր սիրով պսակուած են , միուԹեան

150

5

ŝ.

ંદ્ર

էական կէտը գործադրուած է, երբ չեն՝ դեւէ պսակ անարժէք է։ Բայց քանի որ սիրտր լեղլեղուկ է, սէրը շրջմոլիկ, զգացումները ոստոստուն՝ մանաւանդ երիտասարդական տարիներու մէջ, ընկերային կազմածին խարիսխ եղող ընտանիքը՝ միայն այս կարգի միուԹեան մր վրայ Հաստատել Հիմնովին Հակառակ է առողջ դատողութեան։ Ուս-սակը պէտք, մին է։ Պետական շահն ու արդարութիւնը քաղաքական ամուսնութեան հիմերը կը կազվեն։ ՏէրուԹիւն մը պարտաւոր է հոգ տա-Նիյ երկրին աճեցուն բազմամարդուԹեան, առանց անոր երկիրը օր ըստ օրէ կը տկարանայ ները-Նապէս՝ ու չկրնար իր միջազգային կշիռը պա-Հել ։ Քաղաքական ամումնութիւնը միութիւնը պաշտօնապէս կը կնքէ՝ անոր լուրջ հանգամանք մր տալով ։ Ամումնալուծմանը պարագային օրէնքը կնոջ դատը պաշտպանելով այդ լուծ դրութիւնը գաղտնի ու սովորական բան մր չդառնար։ Կտակի ժառանգութեան վէճերը կը լուսաբանուին եւ արդարութեան պահանջը կը գործադրուի։

Կան կարգ մը երկիրներու խումբ մը մարդեր, որ քաղաքային արձանագրուԹիւնը բաւական նըկատելով, եկեղեցւոյ պսակը աւելորդ արարողու-Թիւն մը կը նկատեն։ Այս Նորեկ ազատամիտներր կր սխային ։

· ጣሀሀፋ በኮ ZUPUዚՆኮዶ

5

ï

Ամումնական խնդիրը այնչափ լուրջ խնդիր է որ որչափ Հանդիսաւոր երեւոյԹներով՝, բազում՝ կերպերով Նուիրագործուի՝, Նոյնչափ լաւ է։ Եկեղեցին իրաւամբ իր իրաւասուԹեան տակ առած է ու զայն խորհուրդ մր նկատած է։ Եկեղեցւոլ բեմին առջեւ կայնող ամոլը վեհ տպաւորութիւններ կ՛ունենայ , տպաւորուԹիւններ՝ որ մինչեւ իր կեանքին վերջը կ'ազդեն, ներշնչումներ՝ որ իր սրտին մէջ նոր յոյզեր կը ծնցնեն ։ Եկեղեցւոյ խորանին առջեւ կատարուած ուխտը ուխտերուն վսեմագոյնն է, իր մէջ Աստուածային տարը մը ունի։ Աստուած այդ միութեան վկայ կ'րլյայ ու Աս֊ տուծոյ մր տրուած խոստումը պատասխանա֊ տուութեան՝ խղճին վրայ կապարի պէս կրծանրանալ։ Այդ երկնային դաբիրին առջեւ արտասանուած մեծ ", ն միութեան վերջին Հանգոլգը կ'րլյալ, ու սրտերը ուժգին բաբախումով կը միանան ։ Պսակի միջոցին նորապսակ ամոլին տրուած ԹելադրուԹիւնները բեւեռի նման սրտերու վրայ կը գամուին ու կեանքի նշաբան կ'րլլան։ Այդ միջոցին արտասանուած «աչքի լոյս»երը, ձեռքի սեղմումները, շնորհաւորումները անմահական երանուԹեան ճաշակը կու.տան նորապսակ ամոլին ու զանոնք կը գօտէպնդեն կեանքի պայքարին մէջ։ Լուրջ բնաւորութիւնը կը շեշտեն։ Եկեղեցւոլ պսակին ուրիշ մէկ օգուտն է սա որ ամբողջ Հա-

մայնքը վկայ կը կանգնի այդ միուԹեան։ Հասարակաց կարծիքը երեւան կուգայ եւ նորատունկ ընտանիքը կը ստիպուին յարգել իրենց խոստումը՝ հաւատարմաբար իրենց փոխադարձ պարտքերը նկատելով ։

Սրտի միուԹիւնը, քաղաքային արձանագրու-Թիւնը, եկեղեցւոյ պսակը զիրար կ՛ամբողջացնեն եւ ընտանիքի պատշաձ Նուիրագործումը կուտան։ Այս երեք սիւներուն վրայ կը կանգնի ընտա-Նիքի շէնքը։

Հաբաանք։ Պսակէն վերջ տեղի կ'ունենայ հարսանեաց հանդէսը։ Հարսանիքը կեանքի ուրախու-Թեան է՞ն գողտրիկ ու խորհրդաւոր հանդէմն է։ Պէտք է որ ցնծուԹիւն, խնծիղ, ծափ ու երգ յատկանշեն այս հանդէսը։ Հարսանիքը յուղարկաւորուԹեան լրջուԹիւնը, մելամաղձիկ շեշտերը ունենալու չէ։ Կեանքը շարունակ լուրջ ըմբռնելու չենք, մանկան զուարԹուԹիւնն ալ պարբերաբար ցոլալու է անոր վրալ։

Հարսանիքի ուրախուԹեան տարրերը կը կազժեն ՆուագածուԹիւնք, պարեր, ազգակցական այցելուԹիւնք, ձոխ խնձոյքներ ու ասոնք աժէնը ոգեւորող վլվլուկը, իրարանցումը։ Առանց երգի ու ՆուագածուԹեան՝ Հարսանիքը Հարսանիք չըլլար։ Նուագարանները բազմատեսակ ըլլալու են ու ճարտար մատներու յանձնուած։ Գռեհիկ խա-

ማሀዚዓ በኮ ጀቢቦሀቢՆኮՔ

ղեր գլուխ ուռեցնելու չափ պէտք չէ որ ամբողջ Թաղն ու գիւղը Թունդ Հանեն։ Անշուշտ նկատողուԹեան առնելու է ժամանակը, Թաղեցւոց մտքի եւ հոգւոյ տրամադրուԹիւնները • ԵԹէ անոնք մասնաւոր վշտեր, արտասովոր տառապանքներ ունին, պէտք չէ անոնց զգացումները վիրաւորել ։ Վաղանցիկ Հաճոյքի մը Համար մնայուն յարաբերու-Թիւններ վտանգելու չէ։ Հաճոյքները համեստուկ ձեւ առնելու են ։

ì

5

۶.

Խաղերն ու պարերն ուրախուԹեան ծայրա~ գոյն աստիճանը կըցուցնեն եւ իրենց անմեղ վի~ ճակին մէջ գնահատելի են։ Պարերն ալ իրենց լուրջ ու գռեհիկ ձեւերն ունին։ ԳայԹակղեցուցիչ ու կործանիչ պարերէ զգուշանալու է։

Ազգակցական եւ դրացնական այցելուԹիւնք հանդիսին շուքը կ'աւելցնեն Ազգակիցներու սըրտաբուղի շնորհաւորումները, ինքնաբուղի նուէր-Ները, ժպտուն դէմքն ու բլբլուն լեզուն, շողշողուն զգեստն ու պերձ արդուզարդը նորապսակ ամոլին սիրտը երջանկուԹեան ցունցերով կը յուզեն եւ քաջալերուԹեան ներշունչը կու տան ։ Բարեկամներն ընտանեաց փԹԹումը, գերդաստանին ծլարձակումը տեսնելով, իրենց չ-----ներէն միոյն կր հասնին ։

Դրացիներու ներկայուԹինսը ամբողջ Թաղը կը դղրդէ եւ յարաբերական կապերը կ'ամրապնդէ։

Հարսանեաց ուրախուԹեան աչքառու ուրիշ մէկ տարըն է կերուխումը։ Կերակուրները անուշ, ձոխ, բազմապիսի ըլլալու են, ստամռքսն ալ հարսա~ Նիք ընելու է, բայց չափազանցուԹինն ու յափրացումը գէշ երեւոյԹ մ՚՚է, որուն առ հասարակ կը յանգին մեր հարսանեկան խնձոյքները։

Ոգելից ըմպելիներու չափազանց գործածու-Թիւնը խիստ գէշ սովորոյԹ մ՚՚է։ Այս պարագաներուն տակ ստուար համեմատուԹիւն կ՚առնէ ըմպելիքի գործածուԹիւնը, գինովուԹիւնը հասարակ բան մը կը դառնայ։ Ամբողջ հարսանիքը խայտառակուԹեան Թատր մը կ՚ըլլայ։ Ընկերու-Թեան մէջ պատուաւոր նկատուած մարդեր այս միջոցին ամէն տեսակ միմոսուԹեանց, խայտառակուԹեանց ենԹակայ կ՚ըլլան, իրենց արժանապատուուԹիւնը ցեխի մէջ ԹաԹաւելով ։ Հարսնետէրը այս երեւոյԹներուն հանդէպ խորապէս կը տխրի, կը վիրաւորուի եւ անէծքի փսփսուքներ կը մրմրԹայ իր պատուաւոր հիւրերուն ։ Հարսանեաց ուրախուԹիւնը չափաւոր ու դրուԹենական ըլլալու է բաղձացեալ արդիւնքը ստանալու համար։

Օրերով, շաբաԹներով հարսանիք ընելուն սովորոյԹը խիստ վնասակար է Թէ հարսնետիրոջ ու Թէ այցելու հիւրերուն։ Հարսանեաց ուրախու-Թիւնները կարճատեւ ու զօրաւոր, համախմբումները կոկիկ ու կազդուրիչ րլլալու են։

<u> ጣሀቦՏኮ</u> ሀቡՆ በԻ **ዛ** ህብደ

ե

ባԱቦՏኮՔ ԱՌՆ በՒ ԿՆՈՋ

Այըն ու կինը երկու լուսեղէն սիւներ են, որոնց վրայ ընտանեկան տաձարը կը Հանգչի։ Երկու Թեւ՝ որով ընտանեկան կեանքը Թռիչք կ'առնէ դէպ ի իտէական երանուԹիւն։ Ասոնք անջատաբար մեծ դիրք կը բռնեն, կարեւոր դերեր կը խաղան, բայց իրենց միուԹիւնը Հրաշքներ կը գործէ։ Առն ու կնոջ միուԹիւնը ամենէն կենսականն է, դաշնակցուԹիւնը տեւական։ Ոեւէ միուԹիւն փոխադարձ պարտքեր ու իրաւունքներ կը ծնի. որչափ պայմանները յարգուին, միուԹիւնը հաստատուն է. երբ զանց առնուին, միուԹիւնը ինքնաբերաբար կը բակուի ։

Առն ու կնոջ առաջին փոխադարձ պարտականուԹիւնն է Սէրը, իրարու նուիրումը, յօժարակամ զոհողուԹիւնը։ Սէրն է այն զօրաւոր ԹԹուն, որ ընտանեկան կեանքի Թնձկոտ հարցերը կը լուծէ։ Սիրավառ ամոլը պաշտումի օրեթ կ՛անցունէ։ Այդ ջուխտակ հոգիները կեանքով, սքանչացումով կը համակուին իրարու հանդէպ։ իրենց սրտին բոլոր ուժը — զուրգուրանքն ու գորովը — կը կեդրոնացնեն իրարու վրայ. Իրարու

303 - Capable Legendership

t

3

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Հրեշտակներն են ։ Զիրար կը մազնիսացնեն, կը մեսմերացնեն, իրարու մէջ կը լուծուին զգացումի, նպատակի միուԹիւն մը կազմելու ։ Իրարմով կ'ապրին, զիրար կը բաբախեն, իրենց վիշտն ու բերկրանքը հասարակաց է ։ Քաղցը ներողու-Թիւնը, ժպտուն համակրանքը երանուԹեան ծիածանր կը կամարէ ընտանիքին վրայ .

Սէրը Հզօր ոյժ մ՝է աղքատուԹեան, ՀիւանդուԹեան, դժբաղդուԹեան եւ բարոյական լքումի պաՀուն։ Իրարու Նուիրուելով զիրար անհունապէս կը քաջալերեն կեանքի պայքարին մէջ։ Սիրոյ արդիւնք են զոհողուԹեան այն անհուն անձնուրացուԹիւնները, անձի, մտածումի, քրտինքի Նուիրումները, որով ընտանեկան յարկը կը կանգնի։

Սիրոյ ՀաւատարմուԹեան խնդիրը կեանքի ու մահու խնդիր է։ Այր մը բնաւ իրաւունք չունի իր սրտին ամենէն փոքրիկ անկիւնն իսկ, իր սիրոյն հիւլէն իսկ, նուիրել իր ամուսինէն տարբեր անհատի մը։ Բնաւ պէտք չէ որ սիրոյ անհաւատարմուԹեամբ աղտոտ վայրեր յաճախէ։ Բարոյական ոճրագործուԹիւն է, քրէական յանցանք, սաղայէլական մեղջ։ Սէրը տարամերժ է, հարազատ սէրը միակ մէկ անձի վրայ կը կեդրոնանայ. սիրտը, եԹէ կտորներու վերածուի, սիրտ չէ, այլ՝ միսի զանգուած։ Ամուսնական ուխտը դրժել ու դեռ բոյնին մէջ ապրիլ, Աստուած իմ, ինչ սոս-

ጣሀቦ የጉቅ በቡን በኩ ዛንበደ

կալի բան է։ ԵԹէ սիրոյ անՀաւատարմուԹեան կասկածը սպրդի ամուսիններու սրտին մէջ, երջանկուԹիւնը մի փնտռեր ալ այն ընտանեաց մէջ. անոնք իրարու դեւ կը Թուին ու կեանքը խենդ մտածումներու, տենդոտ զգացումներու շղԹայ մը կը դառնայ։

Մեր ՆաՀապետական ընտիր աւանդներէն ժին կը Նկատեմ սիրոյ ՀաւատարմուԹինը, մեր տոՀմին գոյուԹեան զօրաւոր պատճառներէն մին ամուս-Նական սիրոյ անկեղծուԹինը։ Այդ ընտիր աւանդը մեր կուրծքին սեղմելու ենք, մեր ընտանեկան կեանքին Նշանաբանը ընելու ենք, եԹէ չենք ուզեր արեւմտեան ջնարակուած գաղափարներու խորշակին տակ դալկացած տոհմի մը քստմնելի կմակքը տեսնել:

Հասարակաց կարծիքը իրաւունք ունի ան~ ուանարկուԹեան ժաՀրը Թափել ամուսիններու վրայ, որոնք ուրացած են իրենց սրբազան ուխտը․ իրաւունք ունի զանոնք կախաղան հանել։

Ամուսիններու ուրիշ մէկ պարտաւորուԹիւնն է Հասում էսիսանը քինչուն է Կոյր սէրը, առանց մտածուԹեան լոյսին, մեծ բարիք մը չկրնար արտադրել։ Կին մը լաւ ուսումնասիրելու է իր էրկան փափաքները, ճաշակները, նախասիրած հաճոյքները, եւ զանոնք յագեցնելու միջոցները սարքելու է։ Պէտք է որ իր

36

էրիկը Թշուառացնող գաղտնիքներուն Թափանցէ եւ զանոնք վերցնող պայմաններ կամ հակակշռող վայելքներ-ստեղծէ։

երիկն ալ կնոջ մը փափուկ սրտին բոլոր յոյզերը վերլուծելու,՝ անոր փափաքներուն ու քմայքներուն զարկերը համրելու, անոր սիրտը վիրաւորող ցաւերը գուշակելու պարտաւոր է։ Վերքը ճանչնալէն վերջ յարմար սպեղանին փափկանկատուԹեամբ գործածելու է։ Կին մը շարունակ զուարԹ պահել իմաստուԹիւն կը պահանջէ.

Մտածումը կոյը անձնուիրուԹեան գործած անխոհեմուԹինները կը չափաւորէ Երիկը ընտանեաց սիրոյն երբեմն վտանգաւոր գործառնու-Թեանց, տարապայման զոհողուԹեան յանձնառու կ'ըլլայ, եւ ինքզինքը կը զրկէ կեանքի անուշ վայելքներէն. հեռատես կինը իր էրկան յանդուգն մտածումները, Թռուցիկ իտէալները կը պայմանաւորէ, հրաբորբ եռանդը կը մարէ՝ զայն՝ խոհեմուԹեան ապահով պողոտան բերելով։ Փոխադարձաբար, մտածող այրը կնոջ խելագար անձնուիրուԹեան սահման կը դնէ, անոր օժանդակ կ'ըլլայ տնական ծառայուԹեանց մէջ իսկ, որ չըլլայ Թէ տնական տաժանելի աշխատուԹիննները կնոջական սեռին յատուկ հիւանդուԹեանց դոներ

ጣሀቦՏኮՔ ሀቡՆ በԻ ዛህበይ

£1

(Commission)

Թարշամի ու ներքին տառապանքները խորշոմներ գծագրեն անոր ժպտուն ճակտին վրայ .

Ազնիւ էրիկ մր իր կինը տանր գրաստր չնկատեր, ինչպէս դարերու ընթագքին մէջ նկատուած է։ Զայն գերի մր նկատելէ աւելի տիպար մարդը կը նկատէ։ Անոր իրաւանց համոզումովը տոգորուած՝ Հայեզողապէս եւ գործնականօրէն ջատագով կրկանգնի տկար սեռին իրաւունքնե֊ րուն ։ Ընթագիկ նախապաշարումները կոխոտած, դահիճ սովորուԹիւնները արհամարհած՝ արդարութեան եւ իրաւանց անյողդողդ վկան կրկանգնի։ Այս խնդրոյն հետ սերտ կապ ունի կնոջ արժա-ՆապատուուԹիւնը յարգելու կէտը։ Ընդհանրապէս այնպես կը սեպուի Թէ տանը մէջ միայն այրը Հեղինակութիւն ունի։ Ան կրնայ բերնին տրամագիծը ուզածին չափ լայն բանալ քանի որ կինը կրաւորական էակ մ՚է։ Ան պէտք է որ համբերունեամբ լսէ ու կլլէ ամէն կոշտ խօսքեր, ամե-Նէն խուժդուժ վարմունքը լռուԹեամբ տանելու է։ Պէտք է գիտնալ Թէ տկար սեռն ալ իր արժա~ ՆապատուուԹիւնը ունի, անոր սրտին մէջ այ վեհանձնութեան առիւծը կը ննջէ ու օր մը կրը-Նայ մոնչել։

ԱրժանապատուուԹեան զգացումը այնչափ եսասիրական է որ մինչեւ անգամ ամումնական սիրոյ մէջ բաժանում կընայ ձգել եւ ոխակալուԹեան

իժը մնուցանել ընտանեկան նուիրական յարկին մէջ։ Կնոջ մը սրտին հետ խաղալ՝ Սողոմոն իմաստունի չափ խոհեմ ըլլալ կը պահանջէ։ Խօսուած խօսքերը, ակնարկուԹիւնները, կատակները չափաւոր ըլլալու են։ Երկան կողմէն կնոջ հանդէպ ցուցուած ակնածանքը վեհանձնուԹեան եւ անձնուէր սիրոյ զգացումները վառ կը պահէ։

Ամումնական միութեան մէջ նկատի առնելու է խառնուածքի կամ անհատական մասնաւո֊ րուԹեանց պարագան։ Մարդիկ զիրար որչափ այ սիրեն, իրենց բնածին մասնայատկանիշները կը պահեն ։ Իրենց յատուկ համոզումներ , իտէայներ ու կեանքի րմբոնումներ ունին։ Ասոնց Հետ կան Նաեւ փորձառուԹեան, միջավայրի եւ կրԹուԹեան՝ շինած ունակուԹիւնները։ ԲնաւորուԹիւններու այս բնական ու անմեղ բաղխումներուն Ներողամիտ րլլալու են։ Մանաւանդ այրեր բռնի իրենց ըն~ կերոջ անհատութիւնը իրենց մէջ լուծելու չեն՝ գանոնք տեսակ մր մեքենայ շինելով իրենց պա-Հանջումներուն ։ Առանց զոհողութեան՝ դաշնակցուԹիւն չրլլար բարոյական աշխարհին, սրտի պետուԹեան մէջ։ Խառնուածքի տարբերուԹինդ սիրոյ կրթեիչ տարը մ՝է։

Սէրը քմայքներ ալ ունի, երբեմն այլանդակ ու վնասակար, երբեմն անմեղ ու տղայական։ Մանաւանդ կանանց յեղյեղուկ զգացումները, յա-

ጣሀՐՏԻՔ ሀቡՆ በԻ ԿՆՈՋ

րափոփոխ ձաշակները այս քմահաձոյքները կ'արտադրեն։ Այս քմայքները կրնան վերաբերիլ զգեստի, կերակուրի, կահկարասեաց, արդուզարդի, զուարձուԹեանց, այցելուԹեանց եւ շրջագայուԹեանց։ Իմաստուն այրը քաղաքավարուԹեամբ կ'ունկնդրէ պահանջները, յօժարուԹեամբ կը կատարէ անվնաս ու քիչ զոհողուԹիւն պահանջողները, եւ լռուԹեամբ կամ քաղցը ու համոզիչ լեզուով կը բացատրէ այն պատճառները, որոնք զինք կ'արգիլեն կարծանիչ զուարճուԹիւններէ։ Կան այրեր որ իրենց կնոջ քմայքին գերի՝ իմաստուն ու հեռատես քաղաքականուԹիւն չունին ընտանեկան վարչուԹեան խնդրոյն մէջ։

Հոս տեղն է պնդել Թէ այրը տան վարչու-Թեան սանձը իր ձեռքն առնելով, գերիշխան հեդինակուԹիւնը ըլլալու է ընտանեաց ։ Այնչափ մը քմայք փայփայելու չէ որ ինք ըլլայ հպատակ եւ կինը՝ իշխան ։ Այս ալ չէ Թէ որովհետեւ այրը գերբնական էակ մ է ու կինը ստորին, չէ Թէ որովհետեւ դարերու ընԹացքին մէջ միշտ այրը տիրապետած է, չէ Թէ որովհետեւ զօրաւոր բռունցք ունի կամ ընտանեաց օրապահիկը կը հայԹայԹէ, հապա որովհետեւ այրերը աւելի կորովի դատողուԹիւն եւ զօրաւոր կամք ունին քան կիները ։ Կիները զգացումի տիրապետուԹեան տակ ըլլալով արագաբար կր փոխեն իրենց քաղաքականու-

Թիւնը։ Վարելու Համար՝ կտրուկ, միօրինակ ու Հզօր քաղաքականուԹիւն պէտք է։ Արական միտքը ու նկարագիրը աւելի օժտուած են այս կարգի յատկանիշներով։ ԲնուԹիւնը այնպէս ուզած է որ այրը իշխէ ու կինը Հնազանդի։ Դարերու փորձառուԹիւնն ալ քաղաքակրԹուԹեան ասպարէզը անոր առջեւ բանալով դատողուԹիւնը սրած է, քանի որ կինը իր մեկուսացեալ կեանքովը մտքի ուշիմու-Թիւնը եւ կամքի կորովը չունի։ Երկան առաքինուԹիւնը իմաստուն վարչուԹեան եւ կնոջը ՀնագանդուԹեան մէջ է։

ՀնազանդուԹինը շնոր Հը մ'է, որ կնոջ վրայ փայլելու է՝ անոր նկարագրին հրապոյր, խօսքերուն կշիռ տալու։ Կինը հնազանդելով կը տիրէ. ըմբոստ կինը անզուսպ հպատակ մ'է։ Անշուշտ կինն ալ ունի իր իրաւունքները, իր արժանապատուուԹիւնը ու Թողելու չէ որ այրը ասոնք ոտնակոխէ։ Պէտք է որ ջատագով կանգնի ասոնց։ Սակայն իր բողոքները պարբերաբար, քաղցրու-Թեամբ ու նազանքով մը ընելու է։ ԼռուԹիւնը, դէմքի երեւոյԹը, տրտում ակնարկ մը կ'ուշաբերեն այրը, որ իր իրաւասուԹեան սահմանը ճանչնայ։ Խոհեմ կինը կրնայ չափաւորել իր էրկան յախուռն վճիռները, դաժան վարչուԹիւնը ու մեղմուԹեան երակը ներարկել անոր երկաԹէ վարչուԹեան մէջ։

Ակնարկուած սկզբանց Համաձայն եղած միուԹիւնը բաղձալի ընտանեաց մը հիքնական խարիսխը կընայ ձգել ու ընտանիքի Թնձկոտ հարցերը լուծել։ Քննենք հիմա ընտանեկան կեանքի ուրիշ յարաբերուԹիւններ ։

ያ

ՀԱՑՐ በՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ

Հայրը ընտանեաց էն կարեւոր անդամն է, կրնանք ըսել ծանրուԹեան կեդրոնն է։ Ընտանիքի գոյուԹեան, հաստատուԹեան բարգաւաճումի պա~ տասխանատուուԹեան մեծ մասը իր ուսին վրայ կը ծանրանայ։ Մեր երկրին մէջ հայրն է որ ըն~ տանիք մը կազմելու գաղափարը կը յղանայ, կը վճռէ ամուսնուԹինն, կը հոգայ ընտանեաց օրապահիկը։ Ընտանեաց վարչական, բարոյական տնտեսական ոյժը ինք կը մատակարարէ։ Հայր ըլլալ՝ կամաւորապէս պարտականուԹեանց լուծը վիզը անցնելն է, սիրայօժար գերուԹինն։ Քանի որ հայր մը իր կամքովը գոյուԹեան կը բերէ տկար արարածներ, քանի որ իր սրտին հատոր-

Ներն են անոնք, իր սիրոյն պտուգները, արդարութեան եւ գութի երկեակ զպացումները Հրամայական պահանջ մը ունին որ կը ստիպեն հայրը իր միմն ու ոսկորը, ջիդն ու արիւնը տալ զանանջ իննամելու։ Հայրը երկրաւոր նախախնամութիւն մ՝է, նախախնամութեան պահանջած նախահոգութիւնը ունենալու է։ Ամէն մէկ զաւակ անողոք, լուռ, անխուսելի պահանջատէր մ՝է, որ ամենէն քարսիրտ նենգամիտ մարդերն իսկ հաւատքի կը բերէ։

Հօր մը իր գաւակներուն հանդէպ ունեցած ուր առատ, ճոխ, պէսպիսի, կանոնաւոր սնունդ չմտներ, զաւակները ձղձիմ, դալկատիպ, դիւրագրգիռ կ'ըլլան։ Ասոնց ուղեղը առողջ գործու~ ՆէուԹիւն չունի, զգացումները իրենց սրբուԹիւնը, փափկուԹիւմն ու հարազատուԹիւնը չեն կընար պահել, նկարագիրը ԹուլամորԹ կ'րլյայ եւ համակ կեանքը յուսահատութեան, արցունքի, անէծքի եւ ստրկուԹեան երկարաձիգ շղԹայ մր Մինչ իսկ անքան նկատուած կենդանիք մեծ գոհողու~ Թիւններ կ'րնեն իրենց ձագուկներուն օրապահիկը ՀայԹայԹելու։ Բանական մարդուն պատասխանատուուԹիւնը աւելի մեծ է այս մասին ։ Անշուշտ ավէն մարդէ չենք կրնար պահանջել որ հարուստ րլյայ եւ ձոխ սեղան մը լարդարէ, բայց գէթե

<u> ፲ሀፅዮ በኮ ደሀኮሀዛበኮՆ</u>Ք

Համեստ ապրուստ մը ճարելու է — կեանքի ՆախՆական պիտոյքները անոնց հետ հաճոլքնե֊ րու ու ճաշակի պահանջած չափաւոր արդուզարդը։ Կերակուր, բարեձեւ զգեստ, աղուորիկ բոյն մր րնտանեաց Հայրը սարքելու է իր զաւակաց Համար ։ Այս նպատակաւ Հայրը կարգ մը դրական ու բացասական ջանքեր ընելու կը պարտաւորի ։ Զգուշանալու է այն ավէն բաներէն, որոնը դենը անկարող կ'ընեն հայրական պարտքերը կատարելու։ Մա<u>րին</u> Հատատարակշռութիւնը եւ մարնևոյն առողջութիւնը խանգարող կիրքերը զսպելու է։ ԳինովուԹիւն, բաղդախաղ, զեղխուԹիւն ու ասոնց յարակից անբարոյուԹիւնը քառեակ հրէջներ են, որոնց անձնատուր րլյալու չէ ոեւէ Հայր ։ Աստուծոյ եւ իր պատուղն վրայ երդում ընելու է Թէ ասոնը իրեն համար ըստմնելի եւ անծանօթ երեւոլԹներ ըլլայու են։ Հասարակաց կարծիքը այնչափ մը անողոք բլլալու է այս մասին որ ոեւէ մարդ չհամարձակի անդունդը նետել իր ընտա-Նիքը։ Քանի՜, քանի՜ ընտանիքներ՝ կան որ Թրշուառութեան մրուրը կ'րմպեն այս պատճառաւ ։ Քանի, քանի անվեղուկ, անգօր մանկիկներ կան որ հացի տեղ արցունք կ'ուտեն, զգեստի տեղ ցնցոտի կը հագնին, մահիճի տեղ տաքուկ մոխիր կը փնտոեն, եւ դահիճ անօԹուԹեան, կրծող հիւանդուԹիւններու, անողոք եւ անասելի դժբաղդու~

ž

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Թեանց, բարոյական քրոնիկ ապականուԹեանց, պատուղ անկումի, անուանարկութեան, ընկերային եղեռններու, բանտարկութեան եւ մահու զոհ կ'ըլլան ճիշդ այս պատճառներով։ Քանի՜, քանի՜ կիներ կան, զգացումի այդ մարմնաւորումները, որոնք մոլուԹեանց մատնուած այրերու դժբադդ զոհերն րլլալով՝ ներքին մարտիրոսուԹեանց շրդ-Թայ մ՛՛է իրենց կեանքը եւ ուղեղը՝ հրաշէկ մտածութեանց կաթսայմը։ Եւ ո՜Հ, Աստուա՜ծ իմ, եթեէ այս կիները մայր այ են, իրենց սրտի Հատորներն ունին, օրէ օր անոնը դեղնիլը, հիւծիլը, մեռնիլը կը տեմնեն, անոնց տառապանքները իրենց սիրտը կը խշխշցնէ, անոնց ապագայի քստմնելի հեռանկարը իրենց հոգիին վրայ քաոսի անհուն սեւուԹիւնը կը պատէ․ ի՞նչ կը զգան արդեօք։ Ի՞նչ կը զգան երբ իրենց ամուսնոյն անկումը կը Տրապարակուի, անունը զզուանքով կ'արտասանուի, մահր ընկերութեան կայթատօնքի օր մր կ'ριιωι: Ի՞նչ կը զգան արդեօք երբ գիշերը ժամերով կը սպասեն որ իրենց էրիկը գինետունէն գայ ու զիրենք աղուոր մը խոշտանգելէն, ծեծելէն վերջը ննջէ ։ Ի՞նչ կը զգան արդեօք երբ իրենց զաւակներու սիրոյն կր սկսին տաժանելի գործեր ստանձնել, իրենց արժանապատուուԹեան զգացումը կոխոտելով մուրալ ու երբեմն, Աստուած իմ, իրենց հոգւոյն վարագոյրը, համեստութեան քողը

ZU8ቦ በኩ ԶԱՒԱԿՈՒՆՔ

պատռել — պատիւը ծախել — ու պղծուած կեանքի մը բոցեղէն սուրը իրենց սրտին մէջ մխուած զգալ քանի՞ կը տրոփէ այն։ Մեծագոյն եղեռնագործները մոլուԹեանց անձնատուր հայրերն են, որոնց վրայ եԹէ դժոխքի յաւիտենական հուրը դարերով ալ Թափի՝ դեռ քի՜չ է, ու քաւարանի անհուն շնորհաց, ամբաւ ապաշխարանաց միջոցները իրենց մեղքը չեն կընար քաւել։ Ո՞հ, հայրեր, սոսկացէք այս ոճիրներէն, ո՞հ, երիտասարդներ, եԹէ այս մոլուԹեանց անձնատուր էք, կամ ընտանիքի սրբազան սեմէն ներս մի կոխէք եւ կամ հայր ըլլալու բարձր կոչումին արժանի եղէք։

Ապրուստի խնդրոյն մէջ այր մարդուն կարեւոր պարտականուԹիւնը վաստակի կանոնաւոր միջոց մը ունենալն է։ Կանոնաւոր գործ եւ գործի կանոնաւոր հետամտուԹիւն։ Շահաբեր արհեստ մը, առեւտրական համեստ ձեռնարկ մը, պաշտօնէուԹիւն մը եկամուտի վստահելի աղբիւրներ են ։ Այր մը պարտի իր գործը սիրել, ոեւէ պատրուակաւ պաշտօնատեղիէն բացակայելու չէ․ Գործը իմաստուԹեամբ եւ հաւատարմուԹեամբ կատարելու է որ շարունակ փնտռուի ։ ԵԹէ արհեստաւոր մ՝է, պարտի արհեստը ծաղկեցնել, յաձախորդներուն հետ քաղաքավարուԹեամբ եւ հաւատարմուԹեամբ վերաբերուիլ ։ ԵԹէ առեւտրական ձեռնարկով մը կը զբաղի, դրամագլխոյն վրայ գուր-

à,

գուրայու է, խեյքին համեմատ գործ փնտռելու է, բաղդախնդիր շահերէ զգուշանալու է որչափ այ խոստմնալից երեւնան։ Ուղղամտութիւն, դրամական պարկեշտութիւն ունենալու է։ Առեւտրական օրէնքը, յաճախորդներու հոգեբանութինը, տեղւոյն ճաշակները ուսումնասիրելու է։ Կանոնաւոր Հաշունկշիռ, չափաւոր նլեւմուտը, որպէս զի չոլյայ թել օր մը մնանկանալով տունը սեւ մոխիրի վրայ Նստեցնէ։ ԵԹէ ընտանիքի հայրը պաշտօնեպյ մ՝է, պէտք է որ իր կարողութեան համեմա~ տական գործ մը ստանձնէ ու իր պաշտօնին պա-Հանջները խղճմտօրէն լրացնէ որ չրլլայ θŁ դիրքէն յանկարծ իլնալով անգործ մնալ։ Եթե գործաւոր է, պէտք է առողջութիւնը վտանգող գործերէ եւ տարապայման աշխատութենչէ զգուշանալ եւ հաւատարմաբար գործէ։

Պանդխտութեան խնդիրը բարդ խնդիր մ'է, որ յարակից է ընտանեկան ապրուստի խնդրոյն։ Երբ հայրը կը տեմնէթե ապրուստի ճար չկայ եւ իր զաւակները անօթութեան կամ չքաւորութեան պիտի ենթարկուին, օտար քաղաք մը երթալու գաղափարը կը յղանայ։ Ներքին եւ արտաքին պատճառներ զինք կը համոզեն, կը դրդեն որ բնավայրի քաղցր տեղերը, ընտանիքի սիրալիր յարաբերութիւնները ժոռնայ եւ օտար կլիմաներու տակ որոնէ իր ընտանեաց բաղդր ։ Այսպիսի

ZUBP AN SUNUAMOR

տարակայուԹիւնը ժամանակաւոր մահ մը կը նշա֊ քիչ անգամ այդ մեթոտին դիմելու է։ Նակէ, ԵԹԷ կարելի է, բնաւ հեռանալու չէ տունէն, բայց եթեէ ճակատագրին՝ մէկ պահանջն է այդ, անխուսափելիին ալ Համակերպելու է եւ տունը վարդի պէս գեղեցիկ պահելու է։ Հեռու գացողին միտքէն բնաւ հեռանալու չէ ընտանեաց լիշատակը եւ շուտով տուն վերադառնալու սեւեռուն գաղափարը : Նա տասնեակ տարիներով ծծելու չէ օտար մԹնոլորտը՝ դրամ դիզելու անյագ պապակովը։ Յիշելու է Թէ մայր, կին, զաւակներ իր սիրովը կը տոչորին, որովհետեւ անոնք իր դրավէն աւելի իր ՆախախՆամող ձեռքին, ժպտուն ակնարկին, իր բարոյական ազդեցուԹեան ու վարող Հեդինա~ կութեանը կը կարօտին, առանց որոյ՝ ընտանիքը ամայի անապատ մը, անիշխանութեան բոյն մր կը դառնալ ։ Կրնա՞ք երեւակայել արդեօք մանկա~ մարդ կնոջ կամ նոր Հարսի մր կրած անհուն տառապանքը երկար տարիներու միջոցին, երբ Նոր բաժնուած իր մայրենի տնէն, նոր կտրուած իր սեփական ձիւղէն՝ կը փաթ∂Թուի ուրիշ խե~ չակի մը, եւ ահա այն իրմէ կ'օտարանայ՝ զինը։ յիշատակի ամնիւթ Թելին կցելով եւ սպասումի երկանաթարին տակ փշրելով։ Ի՞նչ կը զգայ արդ-․․ եօք երբ տարիներով կը սպասէ եւ ԹուղԹի մրոտած կտոր մը, չոր լուր մը չառներ իր սիրա-

կանէն։ Երբ տնտեսական պայմաններ իր ու գաւակաց աղիքները կը գալարեն, բայց սպասուած փոխանակագիրը չգար ։ Երբ զաւակը դպրո<u>գի</u> Թո~ շակագինը կը խնդրէ ու ինք ստիպուած է ար~ ցունքոտ աչքերով «Չունիմ» պատասխանելու։ Իր Հոգիին մէջ ի՞նչ քայքայումներ կ'ունենայ, երբ կը լսէ Թէ իր սիրելին իր սէրը ուրացած՝ աղտոտ վայրեր կը յաճախէ, օրէ օր փճացնելով իր մարմ-Նոյ ու հոգւոյ չքնաղ ոյժերը եւ տարափոխիկ հի~ ւանդուԹեանց ենԹակայ րլյալով։ Ի՞նչ ձգնաժամ~ ῦեρ կ'անցնէ, երբ`ορ մρ սեւ լուրρ, մահուան մρ գոյժը բերնէ բերան կը շրջի եւ իր ականջին Թմբուկը կը պատռէ։ Երբ օտար երկինքի մը տակ իր արեւին մարիլը, իր յուսոյն խաւարիլը, իր սրտին մեռնիլը կը զգայ ու միայնակ կը մնայ անողոք ճակատագրին բզքտող ճանկերուն տակ։ Տարակայ Հայրը պարտի կանոնաւորապէս իր նա~ մակները, քաջալերական լորդորները, սիրդ բա~ րեւները եւ ընտանիքը հոգալու անհրաժեշտ դրամը խրկել։ Պէտը չէ որ իր տառապանըները գրէ, այլ՝ յոյսերը - Բացակայութեան օրերը Հեռատե~ սութեամբ անգնելու է։ Առողջութիւնը վնասող գործերէ զգուշանալու է, որչափ ալ շահաբեր .րլլան։ Զգուշանալու է Թէ կծծի եւ Թէ գեղիս կեանքէ Հաւասարապէս․ Առաջինը մարմնոյ Հար~ կաւոր մնունդը գլանալով՝ անոր Թագուն ոյժին

፲ሀፀቦ በኮ <u>ዓ</u>ሀኮሀዓበኮՆՔ

կը սպառնայ, երկրորդը Դանայեան կարաս մ'է, որ իր ստակը կուլ կու տայ, իր նկարագիրը կ'աւրէ եւ զինք երկարատեւ բացակայուԹեան կ'են-Թարկէ։ Զգուշանալու է իր ժամանակն ու խելքը գողցող զուարճասէր ակումբներէ, ընկերներէ։ Տարակայ հայր մը Մաքրակրօնի մը խստուԹիւնն ունենալու է, իր սկզբունքները, գործերը, կենցաղը վարելու է իր առողջուԹեան Թելադրած առողջ օրէնքներովը։ Երբ համեստ գումար մը շինէ, անմիջապէս տուն վերադառնալու է իր ընտանեաց պահապան հրեշտակն ըլլալու ։

ζορ մρ իր զաւակաց հանդէպ ունեցած ուրիշ պարտականութիւններէն մին է գանոնք երջան~ կացնելու խնդիրը։ Սոսկ նիւթական ប់ឯករោណ բաւ չէ այս մասին ։ Հայր մը շարունակ կնձռոտ ճակատով, խոժոռ դէմքով, հրամայական շեշտով, գոռ գոչումով պէտք չէ որ մտնէ տան սե~ մէն ներս, ոչ ալ խստութիւնը էական յատկանիշը րլլալու է իր կենցաղավարութեան ։ Պէտք չէ որ մարմարէ լռուԹիւնն րլլայ տան զարդը։ Ժպտուն դէմը, քաղցր խօսքեր, սիրալիր լարաբերութիւն ունենալու է։ Գէտք չէ որ անոնց մատաղ Հասակին մէջ կեանքին լուրջ փիլիսոփայուԹիւնը ընէ՝ ապագայի կրծող մտածումները շեշտելով ։ Պէտք չէ որ իր քաշած տառապանքները՝, առեւտրական ձախողուածները, իր դժգոհուԹիննները ու ընկե-

303 - Con-oft 4. + plant + + + plant

4

րական կեանքին դէմ ունեցած զզուանքը արտայայտէ։ Ատով մանկանց յատուկ զուարճութինը եւ անգիտակցութեան լարակից խնդութիւնները կը մեռնին ու կեանքի սեւ մշուշը կը սաւառնի անոնդ հոգւոյն վրայ ։ Ընդհակառակն, ինքն այ պարտի մանուկի հովեր առնել, անոնց խաղե~ րուն շահագրգռիլ, անոնգ տղայական կատակնե~ րուն ներողավիտ աչքով նայիլ ։ Երբենն նոր խա~ ղեր սորվեցնէ, զուարճայի նորավէպեր կամ ըն~ կերական կեանքէ առնուած հետաքրքրական պատ~ մութիւններ ընէ։ Անոնց ընկերակցի, երբենն անակնկայ պտոյտներ եւ այցելուԹիւններ սար~ քելով ։ Ասանկով տղայք տունը բանտ մր չեն Նկատեր, այլ՝ դրախտ մր ուր օրէ օր կ'աձին, կ'ուռճանան ։ Հայր մր իմացականապէս ալ հրա~ Հանգելու է իր զաւակները։ Մանուկները ի ընէ հետաքրքիր արարածներ են ու իրենց հարցում~ Ներովը կը խյացնեն Հօր ականջը։ Հայր Օր ման~ կանց այս բնածին Հարցասիրութեան ոգին ջնջե֊ լու չէ, այլ մասնաւոր ժամանակ ու պատրաստուԹիւն ունենալու է անոնց հետաքրքրուԹիւնը յագեցնելու։ Ինքն այ Նոր Հարցումներով Հետա-. քրքրուԹեան ոգին աւելի զարԹուցանելու է մտաց Նոր ճարակ տայու Նպատակաւ ։ Հետաքրքրու**թեա**ն ղարիննումը, խուղարկութեան ոգտյն արծա**րծումը** դաստիարակութեան րղձակէտն է արդէն։

ZUBP NE SUEUANE

ζορ δρ կոչումին ուրիշ մէկ պարտքն է բա~ րոյական հրահանգը։ Հայր մր քանի որ տան ապրուստը կը ճարէ, ֆիզիքական ոյժ եւ բնածին սէր ունի դէպի իր զաւակները․ իր բարոյական հեղի-ՆակուԹիւնը խիստ մեծ կ'րյլայ։ Արդէն ոեւէ հե~ ղինակութեան տարրերն են ոյժ եւ սէր։ Ասոնգ Ներդաշնակ բարեխառնուԹիւնը տիպար վարչու~ Թիւնը կ'արտադրէ։ Հայր մը հսկելու է իր գաւակաց նկարագրին։ Մամնաւոր խնամը պէտը է անոնց լեզուին, որպէս զի չրլլայ Թէ կոշտ բանաձեւեր, անքաղաքավար ասացուածներ, անվայել խեղկատակութիւններ, անպարկեշտ ու պիղծ Հայ-ՀոյուԹիւններ անոնց բերնէն սպրդին։ Երբենն մա~ Նուկներ անգիտակցաբար կը սորվին ու կը կրկնեն անլուր ՀայհոյուԹիւններ, զորոնք պէտք՝է մանկան կոկորդին մէջ խեղդել։ Հայր մր պէտք է ճանչնայ իր զաւակաց ընկերները, անոնց լաճա~ խած վայրերը , անոնց նախասիրած զուարճուԹիւնները ։ Մանկան ընկերները իր նկարագրին ազդող ավենէն հուժկու միջոցներն են, որովհետեւ մտքի նոյն մակարդակը , զգացումներու նոյն տիպը եւ յարաբե֊ րական կեանքի ընդարձակ ասպարէց մը ունին։ Մագնիսացնող մայրը, ազդող հայրը, ուշաբերող ուսուցիչը եւ յափշտակող քահանան չունին այն ազ~ դեզուԹիւնը մանկան մը Նկարագրին ուղղուԹիւնը եւ բնորոշիչ տարրերը գծելու , գոր ունին իր ընկերները։

Մանկան մը ընկերները իր պահապան հրեշտակները կամ կործանիչ դիւապետներն են։ Ու-Նինք մանուկներու, պատանիներու լեգէոններ որոնք իրենց չար ու ապականեալ ընկերներու ազդեցութեամբը անդունդին ճամբան բռնած են, մոլու-Թեանց ճաշակը առած են ու ֆիզիքական ու բա֊ րոլական կազմալուծման Դ+լ--ր իրենց կուրծքին տակ կը մնուցանեն։ Հայրեր իրազեկ րլլալու են իթենց զաւակաց ընկերական շրջանակին, վասն գի փողոցը, դաշտը կամ խաղի բակը աւեյի հզօր ՆերգործուԹիւն ունի մանուկի մը ներկայ կեանքին ու ապագալ ճակատագրին վրալ քան ընտանեկան խորանը, դպրոցական սեղանը, եկեղեցւոյ բեմը։ Հայր մը Հսկելու է իր գաւակաց ունակութինս-Ներուն։ Մանկական հասակի մէջ է որ տղայք կր սորվին խմելու, ծխելու, բաղդախաղի, գուարճութեանց անձնատուր ըլլալու դասերը։ Գեղեցիկ փանքնուած սիրունիկ գլանիկ մր, կարմրուկ գի-Նիի գողտրիկ գաւաթ մը, տասնոց մը շահելու առնած զգյանիչ հանդյքը եւ պարտէզի մը աւազա-Նին շուրջ սարքուած դաշտկերոլի մր երբեմն ան-Հատի մը կամ գերդաստանի մը բաղդը կը կնքեն։

Հօր մը պարտքն է նաեւ հակակշռի տակ առ-Նել իր զաւակաց՝ կամքը, արդարուԹեան եւ անոր մարմնացում եղող օրէնքի պատկառանքը ներշնչելով անոնց ։ ԱրդարուԹեան զգացումը ընկերային

2**ሀ**3ቦ በኮ ደሀኮሀԿበኮՆՔ

կազմաւորութեան խարիսին է եւ օրէնքը անոր պահապան հրեշտակը։ Հայր մը գաւակներու ծննդեան պատճառ րլլալով՝ մարդկային սեռի աճումին կը սատարէ․ բայց սոսկ ծնիլը առաջինութերն մը չէ, եթե չօժտէ նաեւ մտքի ու նկարագրի բարեմասնութիւններով, որպէս գի մանուկը իր ընկերային շրջանակին անէծը մը րլլալէ աւելի օրՀ-ՆուԹեան կեդրոն մը ըլլայ։ Հայր մը կընայ այս Նպատակին Համնիլ զսպելով տղուն քմայքը եւ չԹողլով որ ան փոքրիկ բռնապետի մր Հովերը առնէ ընտանեաց մէջ եւ չթեողլով որ տանը մա-Նուկ գերիշխանը բլլայ։ Մեր ընտանեկան յարկե֊ րէն շատերուն մէջ մանուկներ կան, որոնը ամբողջ տունը իրենց մատին վրայ կը խաղցնեն։ Գր դողացնեն իրենց մայրերը՝ անոնց բերնէն լու~ տանքի, անէծքի հայհուչներ Թոցնելով, անոնց Հառաչանքին, լացին եւ նեղսրտուԹեան պատճառ րլյալով։ Կերակուրը իրենց ճաշակին համեմատ պատրաստուելու է, իրենց ընտրած նիւթէն զգեստ կարուելու է, հերիք է որ այնպէս հրամայեցին։ Եթե իրենց խօսքը մտիկ չընեն, կը կատղին, կր ճչեն, կը ճուան, տանը կահերը կը կոտրտեն, փողոցին դուռը կը քարեն, գետինը տապյտկելով զգեստնին պատառ պատառ կ՚րնեն, դպրոց չեն երթեար, իրենց մօրը խօսքին կ՝անսաստեն, իրենց եղբայրը, քոյրը կը ծեծեն, ու երբեմն այնչափ ա~

maker and

ռաջ կ'երենան որ իրենց բերնէն նախատանաց ու մինչեւ իսկ ՀայՀոյունեան խօսքեր կր թոգնեն ։ Այս կարգի մանուկներ տան անզօր անդամներուն պատուհամն են ։ Խնդիրը հոս չլմննար․ իրեն կամ~ քին Թողուած տղան տնէն դուրս այ իր շնորհքը ցոյց կուտայ, ասոր անոր քիւերը կը փյցնէ, հաւերը կը քարէ, ապակին կը կոտրէ, պարտէզը կը մտնէ եւ պտուղ կր գրպանէ։ Ճամբաներու հատակէտը, աներեւոյթ անկիւններ կը կայնի մանուկ~ Ներ չարչարելու, ծեծելու, բռնաբարելու։ Երբեմն դաշնակիցներ գտնելով խմբակներու պարագլուխ կ՛րլլայ եւ շահատակուԹիւններ կը կատարէ։ Խմբովին դպրոցէն փախչելու, անմեղ տղայք գլխէ Հանելու խորհուրդներ կը յղանալ։ Այս է իր քմայքին Թողուած տղու մը մանկութինը։ Անշուշտ իր չափահասութիւնը ասոր աւելի բաղադրեալ եւ լոռի մէկ երեւոյթեր րլլալու է։ Այդ մանկիկը մարդկային ընկերուԹեան անմարսելի մէկ տարրը պիտի դառնալ, նշանաւոր գող մը, աւազակ մը, խառ-Նակիչ մր․ եԹէ այդ աստիճանին ալ չՀամնի, ի՞նչ շրջանակի մէջ ալ ըլլայ, անոր հաւասարակըշ~ ռուԹիւնը կամ խաղաղուԹիւնը պիտի խանգարէ։

Ուրեմն Հօր մը պարտքն է չափ դնել զաւակին քմայքներուն, իր քաջալերիչ ժպիտովը կամ խօսքովը չփայփայել զայն, այլ ցուցնել Թէ կամքէն վեր օրէնքը կայ, Հաճոյքէն գերադաս արդարուԹիւնը, որուն յօժարուԹեամբ հպատակիլ ամէն անհատի պարտքն է։

Հայր մը իր զաւակաց սորվեցնելու է Թէ պարտքի եւ իրաւանց շրջանակ մը կայ․ ուրիշին իրաւունքները սրբազան սեպՀականուԹիւն են եւ անոնց դպչիլը սրբապղծուԹիւն է․ Թէ ընկերային կարգուսարքը կայ, որոյ Հիմը պարտքի եւ իրաւունքի յստակ ըմբոնումն ու անԹերի գործադրու-Թիւնն է։ ԱնՀատներու եւ ազգերու երջանկուԹիւնը օրէնքի պաՀպանումէն կախեալ է։

Անշուշտ այս խօսքերը պղատոնական ազդեցուԹիւն մը պիտի գործեն, եԹէ անոնց չընկերանայ պատիժ ու վարձատրուԹիւն, մին օրէնքին զօրուԹիւնը ճանչցնելու եւ միւսը բարիին հրապոյրն ու ճաշակը տալու։ Շատ անգամ ծնողական սէրը ու սխալ ըմբռնուած գուԹը կը Թուլատրեն որ տղան լրբանայ, շփանայ։ Սէրը որչափ ալ ընտիր զգացում մը ըլլայ, արդարուԹեան եւ օրէնքի չափ ապահով երաշխաւորուԹիւն մը չէ ընկերային կազմածը հաստատ պահելու։ Սէրը կրակոտ, յախուռն եւ կոյր է, ընտանիք մը վարելու ապահով մեԹոտը չէ։ Բարդյական հրահանգումի մէկ ստուար ու կեն-

սական մասը կը կազմեն այլասիրական զգացում~ Ները։ ԳուԹ, ՀամակրուԹիւն, սէր ու ասոնց ար~ տայայտուԹիւնը եղող ողորմուԹիւնն, աջակցու~ Թիւնն ու զոհողուԹիւնը երրեակ գոհարներ են, որ

փայլելու են կեանքերու վրայ։ Ընտանիքը լարմարագոյն վայրն է այս չքնաղ առաքինութին։ Ները մշակելու, որովհետեւ հոն են անձնաւորեալ գութը ու ոքին — Հայնը ու դայնը ։ Շնապրիչը, լաւագոյն ասպարէզն, որովհետեւ եղբայրական ու քրոջական յարաբերուԹիւնները սքանչելի պարագաներ են այդ յատկութիւնը գօրացնող։ Հայր մը այս զգացումները կընայ մշակել իր անձին օրի-Նակովը, համակրուԹեամբ խօսելով դժբաղդներու, <u>ձակատագրի զոհերուն եւ ընկերութենեն լքուած</u> անհատներու վրայ։ Կրնայ անոնց կեանքին Թշուառ տեսարանները նկարուն եւ զգայուն եղանակաւ պատմել, Թուել անոնց կամքէն անկախ անողոք պատճառները, որոնք գանոնք այս վիճակին են-Թարկած են։ Կրնայ յուզիչ եւ սրտաձմիիկ իրա~ վէպեր պատմել, վիպակներ կարդալ։ Կրնայ օր մը տուն բերել ցնցոտիներ հագնող, ցուրտէն դողդղացող մանկիկ մը որ համակրիլ սորվին խեղձերու։ Այս զգացումը կրնայ մշակուիյ նաեւ՝ իրենց դրամը, ժամանակն ու կեանքը ընկերութեան համար զոհողներու կենսագրուԹիւնը կարդալով ։ Հայր մը այս զգացումը կընայ գերազանցօրէն մշակել, երբ աղ քատախնամ, որբախնամ հաստատութեանց մեծկակ գումարներ ընծայէ։

ԴաղաքավարուԹիւնը, Թէեւ ուղղակի բարոյական հրահանգում մը չենք կրնար նկատել, այ-

ZU3P በԻ ԶԱԻԱԿՈՒՆՔ

սու աժենայնիւ մշակուած նկարագրի գեղեցիկ գիծերէն մին կը կազմէ։ ՔաղաքավարուԹիւնը ազնիւ Հոգիի մը բարեձեւ արտայայտումն է կամ բարւռք յարաբերուԹեանց մեԹոտը։ Մանկիկը տան մէջ սորվելու է իր յարաբերական դիրքը, մեծհ եւ պզտիկի, ինչպէս նաեւ Հաւասարներու յարաբերուԹեան կենցաղագիտական օրէնքները։ Մանկիկը տան մէջ սորվելու է Թէ ի՞նչ բանաձեւեր, շարժուձեւեր գործածելու է կենցաղի մէջ։ Ծերունին ու մանկիկը, մամն ու մայրը, Հայրն ու տատը, եղբայրն ու քոյրը, ուսուցիչն ու քահա-ՆաՆ, աշխարհականն ու կղերականը, պաշտօնա~ կան ու անպաշտօն անձնաւորուԹիւններ ընկերական ի՞նչ պահանջներ ունին քաղաքավարական տեսակէտով ։ Տան , փողոցի , շուկայի , եկեղեցւոյ , դպրոցի մէջ ի՞նչ դիրը բռնելու է։ Հարսանիքի, տօնախմբութեանը, մահու եւ դժբաղդութեանը առնիւ ի՞նչ դիրը բռնելու է։ Ասոնը ընկերական ւերիերը են որ անշիագեշտ են լվկուած ևըկերուԹեանց, որոնց օրինաւոր կիրառումը Համարում, համակրութիւն եւ դիրք կը շահի անհատին եւ ժպիտ ու քաղցրուԹիւն կը մտցնէ ընկերու~ Թեան մէջ։ Ասոնց իւրաքանչիւրին վրայ հատիկ Հատիկ գրել մանրամասնութեանց երթալ է։ Մտածող Հայր մր կրնայ մանրամասնութեանց երթայ եւ յարմարագոյնը տնօրինել։ Կրօնական հրահանգումը բարոյականի պսակն է։ Կրօնքին, բաղարձակի պաշտումն է։ Ընտանիքը տաճար մ՚է, սրբազան խորան մր։ Հայրը քահանայապետն է, աղօթերը խունկը, զգացումները բուրվառ, որոնցվէ օրհնութեան, մաղթանքի բուրումներ կրբարձրանան դէպի Աստուած։ Տան անդամները այդ տա~ ճարին երկրպագուներն են, որոնք հոդ սորվելու են վախնալ, լարգել, սիրել եւ պաշտել զԱստուած ։ Այդ տաձարին մէջ ապաշխարանքի արցունքը Թափելու են եւ Հոգեւոր փրկուԹիւն գրտ-Նեյու են։ Այդ տաձարին մէջ սորվելու են իրենց ուխտերը ընել գերագոյն կեանքը ապրելու --- սիրոլ, արդարուԹեան, գոհողուԹեան եւ պաշտումի . կեանքը։ Հոդ սորվելու են հոգւով , մարճնով չփակչիլ ՆիւԹիՆ, ՀողիՆ, ՄսիՆ, այլ ՆիւԹէՆ վեր Հո~ գին, Հողէն անդին երկին ու մսէն գերազանց ան~ ՆիւԹ իրողուԹիւնները փնտռել Հոն անմահու~ Թեան հաւատքը, յարուԹեան յոյսը եւ Աստուծոյ գաղափարը իրենց ճակտին ու սրտին վրալ դրոշմուելու են որ կեանքը երգով, յուսով եւ համ~ բերուԹեամբ ապրելու Ներուժը ունենան։ Հայր մը եկեղեցասէր ալ րլլալու է։ Եկեղեցիին, շարականին, քահանային վրայ պատկառանօք խօսելու է։ Կանոնաւորապէս եկեղեցի յաձախելուէ, փայլելու է իր բարեպաշտուԹեամբ։ Շահագրրգ~ ռուելու է եկեղեցւոլ գործերուն․ դրամ, ժամանակ

ՀԱՑՐ ՈՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ

եւ մտածում զոհելու է ատոր համար։ Նախանձախնդիր ըլլալու է եկեղեցւոյ արժանապատուու-Թեան. անոր աճումին, բարգաւաճումին, շէն ու պայծառ մնալուն ոգի ի բռին աշխատելու է։ Այսպիսի հօր մը տղան գրեԹէ անկարելի է որ նոյն զգացումներով տոգորուած չըլլայ։ Որչափ ալ սկեպտիկ մտածումներ, դրամի սէրը, զուարճասէր ընկերներ զինք անտաբերուԹեան դատապարտելու ճգնին, դեռ հօրը կենդանի, ազդու, զգաստացնող օրինակը զայն կ'ուշաբերէ եւ կրօնին սէրը անջնջելի կերպով անոր սրտին վրայ կը դրոշմէ։ Աստուածասէր հօր մը ազդեցուԹինը անդիմադրելի է։

Տեղ տեղ անուղղակի ակնարկուեցաւ Հօր վարչուԹեան խնդիրը։ Կ'արժէ քիչ մը աւելի ծանրանալ այս մասին։ ՎարչուԹեան խնդրոյն մէջ առաջին կարեւոր կէտն է սիրոյ եւ օրէնքի հաշտեցումը։ Օրէնքը անաչառ է, սէրը աչառու. օրէնքը բացարձակ է, սէրը կ'եղանակաւորի. օրէնքը խիստ է, սէրը մեղմ։ Քաղաքական վարչուԹեան մէջ խնդիրը դիւրին է, որովհետեւ օրէնքի ներկայացուցիչները բնազդական սիրով մը կապուած չեն չարագործներու հետ, եւ օրէնքի վճիռներուն վարժուած ըլլալով պաղարինով կը կնքեն ոճրագործներու սեւ ճակատագիրը, Թերեւս տեսակ մ'ալ հաճոյք կր զգան ընկերուԹեան կործանիչ տարրերթ

վերցուցած ըլլալու գիտակցուԹեամբ։ Ընտանեկան յարկին մէջ խնդիրը կը տարբերի․ անոր վարիչը Թէ սէրը, եւ Թէ արդարութիւնը մարմնաւորելու է, նոյն ատեն պատժելու եւ գգուելու է։ Այս երկուքը իրենց ներքին բնուԹեամբ իրարու հետ հաշտ չեն․ Հետեւաբար բաւական դժուար է անոնց Հա~ մերաշխ գոյութիւնը։ Սաչափ կոնանը ոսել թէ հօր մը ընդհանուր քաղաքականութիւնը սէրը ըլլալու է, բայց վարելու ալ մասնաւոր, որոշ եւ Հաստատուն սկզբունքներ ունենայու է։ Զաւակներ Համոզուելու են այս մասին եւ իրենց ամենէն Համարձակ վայրկեաններուն մէջ իսկ այդ սահման~ Ները ոտնձգուԹիւն ընելու չեն։ Ատեն ատեն պատիժ ալ պէտք է։ Երբեմն պակաս սիրելը աղուռրիկ պատիժ մ``է ու տղան կ'ուշաբերէ իր ընթաց-<u>քին բարւռը ուղղու</u>Թիւն մր տալու։ Հայրր տանր դատաւորն այ է, ուրենն ուղղադատ րլլալու է։ Երբ եղբայրներու, եղբօր ու քրոջ մէջ կռիւ կր պատահի, պէտք է զանոնք կանչել, իւրաքանչիւ~ րին պատվել տալ եղելուԹիւնը, ըմբռնել խնդրին րնդհանուր բնուԹիւնը եւ յարմար խրատը, ազդարարումը, պատիժը կամ քաջալերուԹիւնը տալ։ Ասով մանուկներ ինքնագիտակցուԹեան կու գան , կր սկսին իրաւունքի յստակ րմբռնում՝ ունենայ եւ նկատել ուրիշին իրաւունքները։ Ասոնք ընկերուԹեան բարի քա~ դաքացի պատրաստելու տեսակ մր վարժութիւն են։

Zusr በՒ ԶuՒuԿՈՒՆՔ

ՎարչուԹեան խնդրոյն մէջ կէտ մր կալ, пŗ մոռցուելու ենթակալ է, եւ այն մօր հեղինակու~ Թեան ինդիրն է։ Մեր մէջ այնպէս նկատուած է թե մայրերը հեղինակութինն չունին, թե անոնը։ կառավարելու ոլժն եւ իմաստուԹիւնը չունին։ Չեմ կարծեր Թէ ՆախՆական պատճառը այս է։ Հայրը կ'ուզէ միահեծան իշխել ու երբ մօրը դէմ անպատեհ շարժումներ կամ անհնագանդութիւն պատահի, հայրը լռութեամբ կը քաջալերէ։ Տղայք այս կռահելով ցերեկն ի բուն կր չարչրկեն իրենց մայրը ու երեկոյին, երբ հայրիկը վերադառնայ, խելօք խելացի կը Նստին իրենց Հօր Հրամանները անմիջապէս կատարելու պայմանաւ։ Հայրը ſoŋ ազդեցուԹիւնը կը չեզոքացնէ, երբ անոր ராயல் պատիժներուն Հակառակ կը վարուի տղոգը դաշ~ Նակցելով։ Երբեմն հայրեր այնչափ մր անխոհեմ՝ կ'րլյան որ տղոց առջեւ մայրիկը կը յանդիմա-Նեն։ Տղայք ասկէ Թեւ առած աւելի համարձակ ու անգնեօրէն կը խոշտանգեն իրենց մայրիկը, որ մայրիկ րյլայէ աւելի տեսակ մը խաղայիկ կ'րյլայ տղոց քմայքին։ Հօր մի հեղինակութինը աւելի կը զօրանալ, երբ դյժ տալ մօր ազդեցութեան։ Ատով մանկիկները կը սորվին անընդհատ հնա~ զանդութին, կանոնանոր օրինապահութին։ Մօր կամքին անսաստող տղայք շուտ կ'րմբոստին հօր դէմ։ Գործակից վարչութիւնը Հակընդդէմ վարչու-

թեննե զօրատոր է, կուսակցութինսը կործանում է, աշխատակցութինսը ոյժ։

Վարչութեան խնդրոյն մէջ.ամենակարեւոր եւ ամենկեն շատ անտես առնուած խերիրը ---- -մող Հանաթականությունի խնդիրն է։ Շատ մը ծնողներու եւ զաւակազ պառակտումին եւ ընտանեկան գայթակղայի տռամներուն պատճառը այս է։ Հայրեր իրենց բացարձակ հեղինակութեան վստահ՝ շարունակ հրամայական դիրք մր կ'առ-Նեն իրենց զաւակներուն Հանդէպ Հաւասարապէս կամ նոյն գավին ամէն տարիքին մէջ։ Ատնը չեն խորհիր թել իրենց զաւակաց արժանապատուութիւնը վիրաւորանք մր կըզգայ, թեէ անոնք անհատներ են եւ անհատականութիւնը հետօհետէ կաձի։ Թէ անոնը ալ բանականութիւն ունին եւ դատողութիննը օրէ օր իրերը, երեւոյթնները, տարբեր կերպով կ'րմբունէ։ Թէ ամէն մարդու դատողութիւնը իրեն գերազանց կ'երեւնալ։ Հայր մը պէտք չէ որ կոշտ կշտամբանքի խօսքեր ուղղէ իր որդւոց, պէտք չէ որ անոնց գործերը շարու~ Նակարար խծբծէ, անոնց խորհելու եղանակը ար-Համարհէ, անոնց նկարագրին յոռի կողմերը Հրապարակէ։ Պէտք է նկատի առնել անոնդ անհատականութիննը, օրէ օր մեղմել իր վարչութիննը, զանոնը քաղաքավարութեամբ խրատել, քիչ ան~ գամ յանդիմանել։ Մանաւանդ ուրիշներու ներ-

ZU8ቦ በԻ ՉԱԻԱԿՈՒՆՔ

կայութեան պէտք չէ զանոնք անուանարկել։ Երբ Հայր ու որդի միասին կրգործեն՝ ш~ ռեւտրական կամ արհեստական ճիւղերու մէջ, պէտք է անոնց հետ խորհրդակցիլ, ատեն ատեն տղայոց գաղափարը Նախընտրել եԹէ բանաւոր կռուան ունին։ Ասանկով տղուն մէջ աւելի պատկառանք կը ծնի դէպ ի հայրը, տղան աւելի տաքնալով գործին վրայ՝ կորովով կ'աշխատի։ Տղուն խորհելու, հնարելու, ինքնավարութեան կարողութիւնները կը գօրանան այնպէս որ երբ Հայ~ րիկը օր մը շիրիմը չուէ, տղան փոխանակ շուա~ րելու՝ ճարտարութեամբ եւ աջողակութեամբ իր գործը կընալ վարել։ Եթե Հայրը յամառի, բացարձակուԹիւսը քշէ, որդին օր մը երես կ'ելլէ իր իրաւունքները պաշտպանելու։ Հօրը խելքին չՀաւնիր, անոր Թերի կողմերը երեւան կր Հանէ եւ շարունակ կը վիճի ։ Ընտանիքը վիճաբանու~ Թեան Թատր մը կը դառնալ․ Հայր ու որդի փոխն իփոխն կրպոռան, կը զայրանան, զիրար կը վիրաւորեն եւ ծեծելու իսկ կր ձեռնարկեն։ Այս վէճը տարիներով կը ձգձգի մինչեւ որ տղան կր ստիպուի Թողոպ Հօրենական տունը եւ առանձինն իր բաղղը որոնել կեանքի փոթորիկներուն դիմագրաւելով։ Ասոր արդիւնքը սա կ'րլլայ np տղուն կեանքը կը խորտակի․ հօրը սրտին մէջ անջնջելի տաղ մը կը մնայ եւ գերդաստանին

պատիւը կ'արատաւորի , տան անդամներուն եր~ ջանկուԹիւնը կը խանգարի եւ կրտսեր եղբայր~ Ները գէշ օրինակ կ'առնեն ։

Կրբ--բե- բե--եւշ հօր մր ուսին վրայ ծանրացող ուրիշ կենսական խնդիր մ՚՚է։ Ընտանե֊ կան հրահանգումը բաւական չէ տղուն իմացական ու բարոյական կարողութիւնները զօրացնելու։ Հայր մը, որչափ այ խելացի րյլայ, չկրնար մե-Թոտաւոր, կանոնաւոր եւ բարձր կրԹուԹիւն տալ իր զաւակաց , որովհետեւ պահանջուած ժամա~ Նակն ու կարողուԹիւնը չունի ։ Ճիշդ այս պատճառաւ հաստատուած են հանրային հաստատու~ Թիւններ, ուր մանուկներ կը զինուին գիտութեան ոյժերով ։ Այդ Հաստատութեանը պինտ նշանաւորն է դպրոցը ։ Դպրոցը ընտանիքի լրացու~ ցիչն է։ Դպրոցը Համայնքի մը զարգացումին ջերմաչափն է, անոր լառաջդիմութեան երակաչափը։ Ամէն գիւղ ու քաղաք լաւ կամ գէջ իրենց դրպ~ րոցները ունին ։ Հասարակութիւնը հացի չափ պէտքը՝ կը զգայ գէԹ նախնական դպրոցներու։ ԿրԹուԹեան խնդրոյն մէջ առաջին կէտը ហយ~ րիքն է։ Ծնողքներ կան որ կանովս կրկրթեն, տանը մէջ ձանձրանալով անոնց ներկայութենէն։ Ապաժամ կրԹուԹիւնը կր խանգարէ տղուն առողջութիւնը, չթողուր որ մարքնոյն «լասները պէտք եղած աճումը ունենան եւ կորովը ստորին աս-

ՀԱՅՐ ՈՒ ԶԱԻԱԿՈՒՆՔ

տիճանի մը վրայ կը մնայ։ Մտքին կարողութինսъերը գիտութեան զօրաւոր լոյսէն շլացած իրենց աստիճանական հասունութժիւնը կը կորսնցնեն եւ կատարելուԹեան տիպը չեն առներ։ Տղուն մէջ գիտուԹեան սէրը կը մարի եւ ատելուԹիւն մր կը ստեղծուի գրքին, ԹերԹին, գրականուԹեան դէմ։ Բնոյթը մելամաղձոտ կ'րլլայ եւ մանկական անուշ վայրկեանները դպրոցի ճնշիչ մԹնոլորտին տակ կը փճանան ։ Անշուշտ խնդիրը կը տարբերի, երբ բառին իսկական իմաստով մանկապարտէզ կալ։ Այն ատեն մանկունը ախորժով կր Թողուն տունը ու ծաղկոց կը վազեն , որովհետեւ հոն աւեյի առատ ու ընտիր խաղեր կընան խաղալ, խմբո~ վին կաքաւել, վազել, շրջագայիլ, ուշադրու~ Թեամբ զմնել իրեր, միջատներ ու իրենց Հետա~ քրքրուԹիւնը յագեցնել։ Մանկապարտէզի ման~ կունք կրնան երգել գողտը երգեր , գուրգուրանք ու սէր վայելել վարժուհիներէ, կեցցէ ու մրցա-Նակ կորզել։ Այս կարգի ծաղկոց մր Թէ տուն է, Թէ խաղարան եւ Թէ ուսումնարան ։ Մանկիկներ հոն պէտք է մեծնան ու ապրին ։ Հայրեր ալկան որ իրենց զաւակը ուշ կը խրկեն դպրոց, երբ տղուն փափաքը մարած է արդէն կամ ուրիշ բա~ Ներով այնչափ մր շահագրգռուած , որ ուսումնա~ րանը սառն տպաւորութիւն մը կը թիողու իրեն։ վրայ ։ Հասակակից դասընկերներ չունենալով՝ նո-

303 - Can-aft 4 tru->-- *+

5.

րեկ տղան կ՝ամշնայ, թիչ ատենեն կը յուսահատի եւ դպրոցէն խոյս կուտայ։ Ծաղկոցի յաթմար տարիրը հինդ եւ դպրոցինը եշնքն է։

Ամէն դարոց դ**պրոց** չէ․ դպրոցներ կան որ ngtu nunghjähme ahrefte mel noperapore-Թեան վայրեր են, տեսակ մր ապանդանոցներ ութ մանկան իմազական ու բարոլական կետերը կը մեռնի։ Դպրոցներ կան որ ծուլարան են. աշակերտները հոն ցերեկը կը մրափեն, դպրոցը խաղարանի կը վերածեն ։ Դպրոցներ այ կան որ շրջանէ շրջան ուսուցիչներ կը փոխուին, իրարու շինածը կը փլցնեն կամ կը նորոգեն, տարբեր մեթոտներով տղուն միտքը կը մոլորցնեն։ Դպրոզներ կան ուր աշակերտը հանապաց ուսա-Նին եւոչ Հասանին, մեքենական դասերդւ, կրաւորական գոցերու յաւիտենական յանկերգը կ'եր~ գեն։ Կան դպրոցներ որ երբեմն ոգետրութիւն կը զգենուն, քիչ յետոյ ոգեվարքի մէջ են, երբենն կը մեռնին ու յանկարծ յարութիւն կ'առնեն։ Այսպիսի դպրոցներու մէջ աշակերտը պարբերաբար միամսեալ, երկամսեալ ու երբեմն տարեկան արձակուրդ կ'ունենան ։

Ակնարկուած պատճառներով հայր մը պարտի դպրոցներէն լաւագոյնը զատել ու իր զաւակը հոն խրկել:ՀԸնտրելու է հաստատուն ու կանոնաւոր գոյուԹիւն եւ ձեռնհաս ու եփուն ուսուցիչներ ու-

Zusr በՒ ԶuՒuԿnՒՆՔ

նեցող դպրոցը, զոր օրինակ՝ պետական վարժա~ րանները ։ Թոշակին աժանը նայելու չէ, ձրի դպրոցը ամենէն սուղն է եւ սուղը ամենէն աժանը ։ Սուղը աժան է, որովհետեւ մուքի հարուստ պա~ շար կու տայ, ժամանակ կը խնայէ եւ կեանքի մէջ աւելի շահելու գրաւական մ'է ։ Եթէ հայր մը աղքատ է, մուրալու է. տաժանելի աղքատութեանց յանձնառու ըլլալու է եւ զաւակները կրթելու է ։ Կրթութիւնը աղքատին դրամագլուխն է ։ Վտանգ կայ որ աղջկանց կրթութինը սատին ծեփ են եւ անձնական օգուտ չունին ։

Հայր մը տղան դպրոցէն կը հանէ սա պատճառներով — եԹէ չափազանց կծծի է եւ կրԹու-Թեան տուած դրամը կարծես հոգիէն կը փրցնէ, եԹէ զաւակը ծոյլ ըլլալով իր քրտինքը չվարձատքեր, եԹէ ագահ է եւ տղան շահագործել կ՛ուզէ անոր մանուկ հասակէն իսկ ։ Անձնական օգուտի համար տղան դպրոցէն հանել՝ գձուձ ոգի մը կը ցուցնէ ։ ԾուլուԹեան պարագային ալ արտորալու չէ, որովհետեւ տկարամիտը աւելի կը կարօտի գիտուԹեան եւ գիտուԹինը միշտ զօրուԹին է, որչափ ալ քիչ ըլլայ եւ ուշ ստացուած ։

1

ŀ

1

Բարեկեցիկ Հայրեր պարտին միջակ կրԹու-Թին մը տալ, որպէս զի տղան աւելի փայլուն

դիդը մը գրաւէ գործի ասպարէզին մէջ եւ աւելի լայն, ուղիղ եւ բանաւոր Հայեազքներ ունենայ բնութեան , ընկերութեան եւ կեանքի նկատմամբ։ Հարուստ հայրերու պարտքը աւելի ծանրակշիռ է ։ Անոնք պարտական են իրենց զաւակաց միջակէն բարձր կրթութիւն տալ, եւ ուստի պէտք է որ գանոնք բարձրագոյն գոյէճ մի կամ Համալսարան խրկեն աւելի Հիմնական դաստիա֊ րակութիւն տալու կամ արուեստ մր սորվեզնելու։ Հօր մը համար մեծ առանձնաշնորհում մ՚է զաւակ մը կրթելու կարողութիւնը, մանաւանդերկ~ Նային Հաձոլը մ՚է կրթուած, խելացի եւ գնա֊ Հատուած զաւակ մը ունենալը։ Կարգ մը Հարուստներ կան որ իրենց գրասենեկին մէջ օտար գրագիր մր չունենալու համար իրենց զաւակը դպրոցէն կր Հանեն եւ վաճառատուն՝ կր կանչեն արհամարելով անոնց արուեստի հակումները , արտակարգ ձիրքերը եւ Հանձարի ցոլքերը։ Ասոնք որդեսպան Հայրեր են, որովհետեւ միսէ աւելի բարձր բան կը սպաննեն — Հանճար, ապագալ։ Մնափառ Հայրեր այ կան որ, գոլէճական կամ համալսարանական գաւակ մը ունենալու

մարմաջովը՝ տապկուած, ուրիշին՝ աչքին փուշըլ~ լալու դիտումով՝ համբաւի սիրոյն՝ իրենց տղան արտասահման կը խրկեն առանց նկատի առնելու անոր մտքի կարողուԹիննները, նախասիրած աս~

Zusp በԻ ՉԱԻԱԿՈՒՆՔ

պարէզը, տարիքը, առողջութիւնը եւ նկարագրի տոկունութինը, առանց խորհրդակցելու զաւկին ուսուցչին կամ գայն մօտէն ճանչգող անհատներու հետ ։ Այս կարգի տղայք երբ Եւրոպա ոտք կոխեն, փոխանակ իրենց դասերուն պարապելու կամ պատուաւո՛ր դիրք բռնել ձգնելու, ինքզինք-Նին կուտան շուպյտութեան։ Կրմսխեն իրենց **Ϛօր դրամը՝ անոր փայլուն յոյսեր տալով, կ'ու**րախացնեն գինեպանները, կր քայքայեն իրենց ֆիզիքական ու բարոյական կազմաւորուԹիւնը եւ օր մի չէ+ Հագուստով ծննդավայր կը վերադառիրենց "էէը-Հան կորսնցուցած րլլալու ົນພົນ պայմանաւ։ Հայր մը իր մնափառութեան գո4 տալու չէ իր տղան, պէտք է լրջօրէն մտածել Համալսարան խրկելու պահուն։ Պէտք է օրերով կշռադատել՝ տղալ մը ուսման տաճարէն շուկայի հրապարակը քաշելէ առաջ։

Հայրեր հակառակելու չեն նաեւ իրենց զաւակաց արտաքին զարգացումին՝ սա փաստերը առաջ բերելով Թէ ատոնք ժամավաճառուԹիւն են եւ տնտեսագիտական սկզբանց հակառակ, Թէ դրական չոր շահ մը չեն խոստանար, այլ մոքի օրօր կը դառնան, Թէ գործի սէրը կը պաղեցնեն եւ տղուն աչքը չափազանց կը բանան։ ԿրԹու-Թիւնը սոսկ ՆիւԹական շահախնդրուԹեամբ ըլլալու չէ. մարդը սոսկ մարսողական խողովակ մր

չէ, մութի չքնաղ օժիտներով զարդարուած էակ մ՝է։ Մարդ զարգանալու է որ իրեն հայեացքները փոխուին Ներքնաշխարհին ու աշխարհին վրայ, որ լուր ունենայ իրերու եւ էակներու իրարանցումին, որ մտածուԹեանց տիեզերք մը բովանդակէ իր ըղեղին մէջ, որ կարենայ պատուաւոր դիրք բունել ընկերուԹեան մէջ։

Հայր մը զաւկին կրթութեան պարտքը լրացուցած ըլլալու Համար պէտք է որ գործակցի ուսուցչին։ Գործակցութիւնը ուղղակի եւ անուղ**դակի** է։ Անուղղակի՝ երբ դպրոցին ու ուսուցչին վարկը չկոտրեր անոր անձին, խելքին կամ բռնած մեթերուն դէմ առարկելով, գայրանալով։ Ուզղակի՝ երբ յարգանքով կը խօսի ուսուցչին եւ կրթթութեան վրայ, երբ պարբերաբար դպրոց կայցելէ՝ ուսուցիչը **բա**չալերելու եւ տղան մարա**կելու,** երբ կը Նամակակցի ուսուցչին հետ ու անկէ թելադրութիւններ կը խնդրէ, երբ մասնաւոր թեծարբայով հաղ շիշներիան անդապես հաների ասուցիլը, երբ կը չանալ ուսուցյին վարկը թարձր պահել հրապարակին վրայ ու չթողուլ որ 💴pureanin uninely include and an antipation of the ិយុក រៀ លក្កលើ កុយ្យបែយដែះក្រ រៀយក្លាយយុងហារឹង **ដង** honus yurnis, up in grit quis, wirnira the neuropen withows & love on a work the նել եւ իր տորն իրաւութը պայտպոնել։

ՀԱՅՐ ՈՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ

Մէկ խօսքով, երբ Հայր մը կը շահագրգռուի դպրոցի գործերով, ուսուցչին կեանքով, իր զաւկին կրԹուԹեամբ՝ ուղղակի գործակից կ'ըլլայ ուսուցչին եւ այս մասին ալ անԹերի կատարած կ'ըլլայ իր պարտքը։ Աւելի լաւ է որ տղադ կըր-Թես քան անոր 1,000 ոսկի ժառանգուԹիւն Թողուս. կրԹուած զաւակ մը ձոյլ ոսկի է, լուսաւոր ըղեղ մը համակ անդամանդ։

Y New York

ę

ԿրԹուԹեան խնդրէն վերջ կու գայ տղոց կեանքի գործին խնդիրը։ Այս այ շատ փափուկ խնդիր մ'է, որովհետեւ մարդու մր գործէն կախեալ է իր Ներկայ երջանկուԹիւնն ու ապագալ բարօրուԹիւնը։ Գործի խնդրոյն մէջ Հօր մր դիտելիք կէտերը Հետեւեալներն են․ տղան մանուկ Հասակի մէջ գործի չդնել, անգԹուԹիւն է այս․ ինչպէս կրԹուԹեան խնդրոյն մէջ ակնարկեցինը, Թողելու է որ տղան նախնական կրԹուԹիւնը առնէ․ կրթութիւնը կեանքի կաթն է, կաթեն շուտ կտրելու չէ մանկիկը։ Շուտ գործի դրուած տղան կեանքի գարնան հաճոլքներէն կր զրկուի, կեանքի երկանաքարին տակ կանուխէն կը փշրի, մարմնով ձղձիմ, մտքով բԹամիտ կ'րլլալ, յոռետես մտա~ ծումներով կր պաշարուի։ Տղան տաժանելի գործերու դնելու չէ, որչափ այ շահաբեր րյլան։ Գործեր կան որ աչքի, Թռքի, մկանական ոյժի սար~ սափելի Թշնամի են. եթել Հայրը շատ նեղուած

չէ, խնայելու է տղուն կեանքին։ Հայրեր Հակամէտ են իրենց տղայք իրենց գործին մէջ առնել առանց մտածելու Թէ իրենց արհեստը կընայ ըլլալ որ ադամական արհեստ մ`է, երԹալով վարկը կը կոտրի։ Օտար աշակերտ մը խանուԹէն ներս չխոԹելու փափաքը եւ զաւկին իրեն մնայուն օգնական ու բարի յաջորդ ըլլալու դիտումները զինք այս որոշման կը բերեն։ Այս ալ տեսակ մը շահախնդրուԹին, անիրաւուԹիւն է։ Հայր մը աչալուրջ ըլլալու է, տեսնելու է Թէ ի՞նչ ձեռնարկներու եւ արհեստներու վարկը աստիճանաբար կը բարձրանայ. այն արհեստներուն դնելու է իր տղան։

Երբ տղան արհեստի կամ առեւտրական գործի կը դրուի, նկատողուԹեան առնելու է անոր վարպետը ։ Ճարտար վարպետի մը քով դնելու է որ վերջը տղան բանի գայ, ինքն ալ վարպետ ըլլայ ու վաստկի ։ ՆկատողուԹեան առնելու է վարպետին նկարագիրը ։ ԵԹէ վարպետը խարդախ է ու յաճախորդները իրմէ զզուած են, եԹէ սկըզբունք չունի ու գործասեղանին գլուխը չգտնուիր, եԹէ անպարկեշտ լեզու կը գործածէ եւ իր աշակերտաց սրտին մէջ ապականուԹեան սերմեր կը ցանէ, եԹէ խեղկատակ է ու աշակերտներուն լըրջաբարոյուԹիւնը կը վտանգէ, եԹէ բարոյական ուրիշ ցցուած մոլուԹիւններ ունի որոնք նկարագիրը կը քայքայեն, եԹէ վարպետը խղճամիտ չէ,

ZU8P በሎ ይሀሎሀዓበሎንՔ

անոր արհեստ սորվեցնելու անփոյթ կը գտնուի, հայր մը իր տղան կրակը նետելու չէ։ Շատ հայրեր իրենց տղան գործի մը դնելու պատասխանատուութենկն պրծելու համար անոր ձեռքէն բռնած շուկայ կը տանին ու առաջին խանութին որ հանդիպին՝ կը յանձնեն զայն։ Յետոյ երբ իրենց սխալը տեմնեն, ուրիշ վարպետի մը կը յանձնեն, ու այսպէս յաջորդաբար՝ մինչեւ որ օր մը կը զգան թէ տղուն տարիները վատնուած են, բան մը լման սորված չէ, ու կեանքի կռուռյն մէջ դասալիք ըլլալու դատապարտուած է։ Այս կարգի հայրեր իրենց զաւկին անէծքին կ'արժանանան ու իրենց յիշատակը սեւ գրերով կը քանդակուի անոնց յիշողութեանր մէջ։

Հայր մը իր զաւակը գործի դնելէ առաջ վերլուծելու է անոր հակումները ու անոնց համապատասխան գործ ընտրելու է։ Ձիրքը կոչումի կողմնացոյցն է։ Տղան բռնի նոր պաշտօններու կամ բարձր ասպարէզներու չյարմարիր։ Իր հակումներուն համեմատ գործ ընտրողը քիչ ատենէն կը սորվի, սիրով կը հետամտի, կը յաջողի։ Հակումները նկատողուԹեան չառնողը շարունակ զըզուանք մը ունի գործին հանդէպ, իր անճարակուԹիւնը ցոյց կու տայ, յուսահատ ու Թշուառ կ'ըլլայ։ ԵԹէ հօրը գործը լաւ է ու տղան արտասովոր ձիրքեր չցուցներ, կընայ զայն իր գործին մէջ առնել՝ անշուշտ մասնաւոր հսկողութեան տակ, օրէ օր գործին ասպարէզը լայնցնելով անկախ գործի մը վրայ դնել, հետզհետէ գործին ամբողջ կազմակերպութինը անոր վստահիլ, որ գործը դիւրաւ սահի, ինչպէս երկաթուղին իր ա-Նիններուն վրայ։

Հօր մի առջեւ պարտականութեան ուրիշ դաշտ մը կը բացուի երբ զաւակներէն բաժնուելու խնդիրը կը ներկայանայ։ Քիչ ընտանիքներ կան, որոնք այս գաւաԹէն չեն ըմպեր։ Ընդհանրապէս տղոց անհատականութեան ոգին, անկախ ապրելու փափաքը զիրենք բաժանումի կը մղէ։ ԵԹէ տղան կը բաժնուի իր երիտասարդական Հաձոյք-Ները վայելելու՝ Հօրը բարոյական ազդեցուԹենէն ազատ, ու անդունդին ճամբան բռնելու, Հայրը ավէն կարգի վիջոց գործածելու է արգիլելու։ Բարկանալու, խնդրելու, լալու, Համոգելու է որ այդ քայլը չառնէ։ Բացատրելու է ինքն իր գրյ~ խուն Թողուած տղու մր փորձուԹիւններն ու վախձանը։ Սէրը կընայ շահիլ խստաբարոյ զաւակը։ ԵԹէ ինքնահանուԹեանը պատճառաւ կը բաժնուի, Հայրը ատեն մը խոհեմուԹեամբ վարուելու է, ա~ Նոր երիտասարդական ըմբոստ ցոյցերուն ու յա~ ւակնոտ վճիռներուն ականջ չկախելով։ ԵԹէ տղան իր չորգլխուԹիւնը շարունակէ, հայրը Թուլատրելու է անոր բաժնուիլ, որովհետեւ մարդեր կան,

ZUSP በԻ ԶԱԻԱԿՈՒՆՔ

P.

and Summer

٩

որոնց ուսուցիչը դառն փորձառուԹիւնը վիայն կրնայ րլլալ։ Կեանքի անողոք պայմանները միայն անոնց անափառութեան հովը կրնան իջեցնել։ Հայրը կընայ հեռուէն հսկեյ այդպիսի տղու մը կեանքին ու յարմար պատեհութեամբ անոր ձեռ.թ կարկառել, ԹելադրուԹիւններ ընել, Հայրենի տուն վերադառնալու հրաւէր կարդալ։ ԵԹէ տղալ մր շատ շեշտ կը դնէ իր վաստակին վրալ, հօրը քերն կը ծխէ, Հայրը իր արժանապատուութեան՝ կերցնելու չէ, եթէ ապրելու միջոց ու բարեկեցիկ կեանք ունի։ Տղուն ՀպարտուԹիւնը քաջայե֊ րած կ'րլլալ, եթէ անոր ինքնագովութեան հան~ դէպ լուէ։ ԵԹէ Հայր մր աղքատ է, գործելու ոյժ չունի, ոչ ալ ապրելու միջոց, պէտք է համ~ բերէ որ չըլլայ Թէ տղան իրմէ բաժնուի ու ինք իր ծերուԹեան օրերուն մէջ մենուԹեան դառն զրկումներուն ենԹարկուի։ Իրաւ դժուար է զաւկի մը խրոխտ ու ինքնահաւան՝ վարմունքը տեսնել, որուն համար կեանք տուած ես, բայց աւելի դրժուար է հասարակաց կարծիքին ծաղր ու ծանակ րլյալ ու մուրալու դատապարտուիլ։ Աշխարհր այնպիսի օրէնքներով ստեղծուած է, այժմեան ըն~ կերութիւնը այնպիսի խմորով շաղուած է որ երբեմն սոսկ ՆիւԹական գոյուԹիւնը քաշելու Համար ստիպուած ես ավենէն անուշ զգացումներդ զոհել ։ *Ժառանգո-րկան և Կասկի Խնդել* ։ Հայրեր իրենց

մահուանէն վերջն այ պարտին բան մր Թողույ իրենց զաւակաց։ ԺառանգուԹիւն Թողելու խրն~ դիրը բարդ խնդիր մ՛է եւ շատ մը ծնոդըներու րղձակէտը, անոնց մտածութեանց, իտէալին, տառապանքին ու գործունէուԹեան առանցքը։ Զաւակ ծնանիլ ու մեռնելէ վերջ գայն բաղդին յորձանքներուն լանձնել՝ իմաստուն հօր գործ չէ։ Ժառանգութեան խնդրոյն մէջ կարեւոր կէտ մ`է բաշխումի խնդիրը։ Այս մասին աչառութիւն մը լաւ տպաւորուԹիւն չԹողուր։ Թերեւս իմաստուն կարգադրուԹիւն մ՚՚է, եԹէ բնուԹենէն զրկուած֊ Ներուն կամ լաւ գործ մր չունեցողներուն աւելի կտակուի։ Ուրիշ կարեւոր կէտ մ՚է մեծ ժառան~ գութիւն չթողելու խնդիրը։ Ժառանգութիւններ կան որ օգտակար րլլալէ աւելի վնասակար են։ Տղոց մէջ ծուլուԹեան, մեղկուԹեան, մնափառու-Թեան, զուարձասիրուԹեան եւ կրաւորականու~ Թեան ոգին կը շեշտեն ու անյարմար կ'ընեն շատ մը օգտակար բաներու։ Աշխարհի փորձառութիւնը կը ցուցնէ Թէ ժառանգուԹիւնները աւելի կործա-Նիչ քան շինիչ եղած են։ Թերեւս առարկուի Թէ այս կարգի մտածում մր հօրը ձեռներէցութեան ոգին սպաննէ եւ զայն չմտրակէ մեծ ձեռնարկ-Ներու։ Իրաւ է Թէ զաւկին փայլուն ապագայ մր Թողելու խնդիրն է որ կր պրկէ հօր մր ոյժերը։ Իրօք Հօր մը պարտքն է Համեստ դրամագյուխ մը

-

ZUSP በԻ ՉԱԻԱԿՈՒՆՔ

Թողուլ իր զաւակաց, բայց ան ունի ընկերային պարտքեր կատարելիք։ Հանրային մեծձեռնարկներու կրնայ օգնել, դպրոց շինել, եկեղեցի կանգնել, տաղանդաւոր անհատներ քաջալերել։ ԵԹԷ հայր մը անպատճառ կը փափաքի իր զաւկին մեծ ծառանգուԹիւն մը Թողուլ, պէտք չէ որ սկիզբէն գիտցնէ։ Կրնայ առանձին պահել կամ մասնաւոր դրամատուններու յանձնել որ աստիճանաբար տրուի. Թողելու ու վարժեցնելու է տղան որ իր անձնական աշխատուԹեան վրայ հիննէ իր դիրքն ու արժանկքը։ Պէտք է որ տղուն ծանրուԹեան կեդրոնը իր մէջն իյնայ, չէ Թէ դրամարկղին մէջ։

Հայր մը իբր ժառանգուԹիւն կրնայ Թողուլ իր համբաւը ։ Զաւակներ կան որոնց դրամագլուխը իրենց հօր համբաւն է ։ Իրենց վայելած համակրուԹեան , յաջողուԹեան գաղտնիքը իրենց հօր վարկն է ։ Մտքի ընտիր ձերքեր , նկարագրի լաւ տրամադրուԹիւններ կտակել մեծագոյն բարիքն է, մեծագոյն օժիտը հօրմէն որդւոյն կտակուած ։ Ասոնք ներքին օժիտներ են , անձեռնմխելի զօրուԹիւններ , որոնք սերունդէ սերունդ կը փոխանցուին եւ գերդաստաններու բարձրացումին պայմանները կ'ըլլան ։ Զաւկին բարձրագոյն կրԹու-Թիւն մը տալ ուրիշ սքանչելի ժառանգուԹիւն մ'է , որուն արդիւնքը անժխտելի է ։

ሆሀ8ቦ በኮ ደሀኮሀዛበኮՆՔ

Մօր սէրը։ Մօր սէրը տիեզերքին մէջ ամենքն անուշ բանն է ։ Մօր սիրտը ամենքն փափուկ իրողութիւնն է։ Բնութեան րղձակէտը եղած է մօր սիրտը, արարջագործութեան պսակը։ Այդ մսէ պարկին մէջ այնչափ մը գութ, գորով ամփոփուած է որ ի զուր կր ճգնի չափել մարդկային հանձարը ։ Այդ սէրը այնչափ բնազդական ու բուռն է որ Հաւասար կը բաբախէ քաղաքակրթեային ու վայ~ րենիին կուրծքին տակ ։ Մօր սէրը գաւակաց արիւն է, ժպիտը ճառագայթ, լեզուն երկնային Հուր, որով սէրը կը բորբոքի մանկան մէջ։ Առանց այդ սիրոյն, մանկիկը իր բունին վրայ կը Թարշամի ։ Այդ սէրը մանկան պահապան հրեշտակն է, որ ցերեկը կը գուրգուրայ անոր վրայ արցունքը Համբոյրով սրբելով , եւ գիշերը օրրոցին քով մեյաքաղցրիկ օրօրներ մրմնջելով կր հսկէ, գիշերուան քունը կըզոհէ անուշիկին կեանք տալու։ Մօրը սէրը կեանքի ամէն դժբաղդութենէ վեր է, ավենեն զօրաւոր բանն է. անոր չափ փափուկ ու տոկուն բան չկայ սա արեւուն տակ ։ Զաւկին ՆախախՆամութիւնն է այն, որ շարունակ կը հսկէ

ሀሀሪዮ በჁ ደሀჁሀዛበՒՆՔ

մանկան քայլերը։ Մօրը սէրն է որ մանուկը դեռ կը խրատէ, անոր համար կուլայ, կ'աղօթե, երբ ան բարոլական անկումներու անդունդը դեւ մր դարձած է։ Մօրը սէրն է որ կը յուսայ թե ພົນ դեռ կրնայ հրեշտակ մը րլյալ, կր հաւատայ թե անոր հոգւոյն մէջ մոխրոյ տակ Թաղուած անա~ րատութեան կայծ մր կայ, որ կրնայ օր մր հրա-Հրիչ բռնկիլ ու սիրտր մաքրել մոլուԹեան ման~ րէներէն ։ Մօրը սէրն է որ զաւկին հիւանդու-Թեան մահճին քով տարիներով կ'արիւնի եւ կր Համբերէ, անոր Թշուառութեան օրերուն մէջ քաջայերութեան ոգեւորող ներշունչը կը կարդայ։ Մօրը սէրը մենոլորտն է, որուն մէջ մանուկը կը ծլի, կը ծաղկի, կը մեծնայ ֆիզիքապէս։ Անոր շնորհիւ մանկան սրտին մէջ ալ գութի, գորովի զգացումները կը զօրանան փոխադարձաբար դէպի իր ծնողքը։ Մօրը սիրտը փուռն է որուն մէջ կը Թրծուի մանկական սէրը, հնոցն է ուր կը բորբոքի, արեւն է որուն մէջ իր գոյներն ու շութերը, գեղն ու հրապոյրը կը ստանայ։ Մանկութեան մէջ մայրագուրկ րլյալ՝ ողջ ողջ մեռնիլ է։ Մօրը սէրը ինքզինքը կը բզ.քտէ ման~ կան շիրմին վրայ, շիրմին քով կը խելագարի։ Երբ մանկիկը մեռնի, մայրը մեռած է արդէն, իր օրերը սուգի մահերգի օրեր կը դառնան ։ Մօր մը առաջին պարտքն է իր գաւակը սիրել։ Մայրը

ł

այս պարտքը կը կատարէ, սակայն պէտք է սէրը երբեմն չափաւորել, զսպել ու երբեմն շռայլել։ Խենդ սէրը ատելուԹեան լոռի վնաս կը գործէ։ Քիչ շատ գիտակից մանուկներու վրայ վատ~ Նուած խենդ սէրը գանոնը սնափառ կը շինէ։ Երբ մայրիկը կըսկսի ամենէն ընտիր ածական-Ները շռայլել իր զաւկին՝ զայն դեղձանիկ Հրեշտակ, աննման, իմաստուններու մէջ եգական, գեղեցիկներու մէջ մէկ հատիկ լորջորջելով, երբ զայն իր սրտին պսակը , յոյսին վառարանը կը կոչէ եւ անոր ամէն քմայքներուն կրզիջի, մանուկը *-բ*նականաբար կը սկսի իր անձին վրայ չափազան<u>ց</u> գաղափար ունենալ եւ ուստի իրեն պատշաճ յար~ գանքը պահանջել ։ Դեգ բնաւորութիւն մը կը շինուի անոր մէջ որ կործանումի կ'առաջնորդէ։

Մօր սէրը աչառու ըլլալու չէ։ Բնական է որ գեղեցիկը տգեղէն աւելի սիրուի, տաղանդաւորը յիմարէն աւելի գնահատուի, զօրեղը աւելի ակնածանք վայելէ քան տկարը։ Անձերու ներքին արժանկքը իր մէջ գրաւչուԹինն մը ունի, որ յարգանք ու սէր կը շահի։ Այսու ամենայնիւ, մայր մը այս առաւելուԹեանց յարգանքը գաղտնի տալու է եւ ջանալու է հաւասարաչափ սէր մը շռայլել իր զաւակաց։ Իր տալիք ածականները, քաղցրեղէնները, զգեստները այս սկզբունքին վրայ հիննուելու են, եԹէ ոչ մինչեւ անգամ ընտանե-

ሆሀ8ቦ በኮ ደሀኮሀ4በኮՆՔ

կան նուիրական յարկին մէջ՝ ատելուԹիւնը բոյն կը դնէ, մօր ու զաւկին մէջ՝ ոխակալուԹեան եւ եղբարց մէջ նախանձի գձուձ՝ ոգին կը մշակուի։ Տունը դժոխը մը կը դառնայ։

5

ł.

Ասոր բացառուԹիւն կրնանք սեպել բաղդատաբար մեծերու եւ տան բարօրուԹեան նպապտողներու տրուած յարգանքը ։ Մայր մը իբր մըրցանակ աւելի սէր կրնայ ցուցնել իր բարեկիրԹ ու Հնազանդ զաւակներուն ։ Կրնայ աւելի մեծարել դպրոցէն ու ընկերուԹենէն լաւ վկայուած զաւակները ։ Այս կարգի սէր մը մտրակ է յառաջդիմուԹեան ։ Այս բարեմասնուԹիւնները չունեցող զաւակաց մէջ ալ նախանձաւորուԹիւն կ'ար-Թընցնէ եւ ծուլուԹիւնն ու մոլուԹիւնը կը բուժէ։

Վտանգ կայ որ մայրեր աւելի գուրգուրան իրենց տղոց քան աղջկանց վրայ։ Աղջիկ մը մօրը սէրը առատ վայելելու է, որովհետեւ արդէն ամչկոտ է, իր իրաւունքը չպահանջեր, հիւր է, քիչ ատենէն պիտի բաժնուի մօրենական յարկէն եւ որովհետեւ աւելի տկար է։

Մայրիկը իր սէրը պէտք չէ որ պակսեցնէ դժբաղդուԹեան մատնուած, օտարուԹեան գացած, կամ ամուսնացած զաւակներուն վրայէն։ Այդ սէրը արեւուն նման անխտիր փայլելու է։

Մայրը էքը արհերապետական իրաւունքներ ու ունիուհի ունի տիրապետական իրաւունքներ ու 303 – Ըստունքեր Աերաստեր

ծանրակշիռ պարտաւորուԹիւններ ։ Ընտանիքին ամբողջ մեքենան իր ձեռքն է, իր կարգադրու-Թեան յանձնուած ինքն է որ գոյն ու ձեւ պիտի տայ անոր կարգուսարքին ։ Իր մտածողուԹեան եղանակէն, ձաշակի նրբուԹեան աստիձանէն, վարչական ձեռնհասուԹենէն կախուած է տան ներքին գործերուն կանոնաւոր սահումը ։ Տան տիրուհւոյն վրայ փնտռուելիք կարեւոր յատկանիշներն են գործունէուԹիւն, աչալըջուԹիւն, տնտեսուԹիւն, ձաշակ, վարչագիտուԹիւն ։

Տուն մը Հազարումէկ գործեր ունի կատարելիք : ՏանտիրուՀին է որ գործերու այդ Հսկայ մեքենան պիտի դարձնէ իր ճարտար , ձեռներէց , մեղուաջան գործունէուԹեամբը : Երբ տան տիրուՀին ծոյլ ու անճարակ է, աւելի կը սիրէ տան մէկ անկիւնը բազմիլ , ասոր անոր հետ շաղակրատել , ուրիշները բամբասել , տունէ տուն Թափառիլ . այսպիսի ընտանեաց մը կործանումը մօտալուտ է :

Տան տիրուհին ան չէ որ գեղեցիկ զգեստներով զարդարուած, մուշտակաւոր պատմուձանը վրան առած, խոշոր խոշոր հրամաններ կ'ընէ, տան հարսներուն եւ սպասաւորներուն ԹերուԹիւն-Ները կը հրապարակէ, հիւրեր կ'ընդունի, այլ ան է որ գործի զգեստը հագած տան ամէն անկիւն-Ները այցելելով պէտք եղածը կը տնօրինէ։ ԱՆ-

ՄԱՑՐ ՈՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ

գործ տիրուհին մնավէջ պուպրիկ մ՚՚է, անձնա~ ւորեալ պաձուձապատանք մը․ գործունեայ տիրուհին տան հոգին է։

ř

Տան տիրուհւղն կարեւոր գործերէն մին է Կերակուրը կեանքի գոյուԹեան, զօրու~ L+L: Թեան ու աճումին ամենակարեւոր պայմանն է։ Լաւ խոհարարը կէս բժիշկ է։ Լաւ պատրաս~ տուած կերակուրը առողջութեան ու հաձոլքի կը Նպաստէ։ Տան տիրուհին ջանալու է որ կերակուրները մննդարար րլլան ։ Շուկայէն գնել տա~ լու է աւելի մնունդ պարունակող նիւթեր քան ստամոքս ցաւցնող մեծաքանակ բանջարեղէն։ Տան տիրուհւոյն ճարտարութինը մեծ գործ ունի այս մասին ։ Նոյն Նիւթեր տարբեր ձեռքերու տակ իրարմէ անհունապէս տարբեր կերակուր կ'արտադ~ րեն ։ Անհամ , անլի , լխկած կերակուրը ախորժակը կը գոցէ ։ Կերակուրները պէսպիսի րլլալու են ։ Գիներ կան որ միայն մէկ երկու տեսակ կերակուր կոնան եփել , նոյն կերակուրը կը տաքցնեն քանի մը անգամ՝ ընտանեաց անդամները ձանձրացու~ Նելով։ ՊէսպիսուԹիւնը Հաձոյք ու զօրուԹիւն կր պատճառէ ։

Մենք եւրոպական ազգաց պէս չունինք տըն~ տեսական ոյժ եւ ՀմտուԹիւն , ոչ ալ մասնաւոր գրքեր որ անոնց Համեմատ կերակութներ շինենք։ ՏիրուՀիներ կան որ ժամերով կը մտածեն իրենց

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ՝

եփելիք կերակուրներուն վրայ։ Ավէն օր մտատանջութեան աղբիւր մ`է այս կէտր․ երբենն վէ~ ձերու այ պատճառ կ'րյլայ։ Կերակուրը Համեդ այ րյլայու է որ տան անդամները ախորժով Նստին ճաշասեղանին շուրջը։ Համեղ ճաշ մը երբեմն ամբողջ օրուան ուրախութիւնը կը շինէ ու անհամը դիւրագրգիռ կը շինէ ենթական ։ Այս կէտը ուշադրութեան առնող տիրուհին հիւրերու առջեւ ալ երես կը ճերմկցնէ։ Կերակուրները մա~ ւթուր ալ րլլալու են ։ Ախորժակը գոցող ոեւ է ՆիւԹ գտնուելու չէ անոնց մէջ։ Խճաքար, հոդ, փոշի, միջատ, մազ եւ այս կարգի ուրիշ բաներ տիրուհւոյն անուան արատ են․ եթե ուրիշակումբի մը տիրուհին ըլլար կամ խոհարար, իրեն վոնտուելուն Հրամանագիրը առած կ'րլլար ։ Նրպարեղէնները մասնաւոր գուրգուրանքով մաքրե~ լու է, ատեն ատեն նպարատուն այցելելով կա~ փարիչները քննելու եւ պատին փոշին մաքրելու է։ Կերակուրի ջուրը սանին մէջ լեցնելու է քննելով, զգուշանալու է որ կերակուր եփելու պահուն փոշի չիջնէ սանին մէջ ։ Կան տիրուհի-Ներ որ աւելի կ'եփեն եւ յետոյ կը ստիպուին Թափել կամ տաքցնելով կրկին սեղանի վրայ բերել ։ Առաջին պարագային տնտեսուԹեան դէմ՝ կը մեղանչեն ու երկրորդին՝ ճաշակի դէմ։

Պարբերաբար անուշեղէն, խմորեղէն ալ եփե-

լու է։ Մամնաւոր ուրախուԹեանց, տօներու առ-Թիւ տարբեր կերակուր ուտելու է։ Տիրուհին չա~ փազանց տնտեսագէտ րլլալու չէ որ միայն աժանը փնտռէ։ Երբեմն ձաշակը , քիմքը , պարագաները ու կեանքի երջանկուԹեան ընդհանուր իտէալը կը պահանջեն որ մոռնանք մեր տնտեսագիտական անձուկ հաշիւները եւ շռայլուԹեան՝ սահմանները Թեւակոխենք ։ Կերակուրի մասին սխալ Հասկրցուած տնտեսագիտուԹիւն մր առողջուԹեան ու ֆիզիքական կորովին կը վնասէ։ Քսակին խորհուրդ հարցնելը լաւ բան է, բայց կեանքը պա~ հեստի դրավէն գերազանց է։ Անշուշտ աղքատը, բարեկեցիկ եւ Հարուստ դասակարգերը իրենց յատուկ ճաշացուցակները կ'ունենան իրենց քսակին Համապատասխան։ Մեր րսածր մասնաւոր դասու մը չպատկանիր։ Ընդհանուր օրէնքը պարզել է։

Տան տիրուՀւոյն ուրիշ կարեւոր գործերէն վին է ա-աւը։ Տիրուհին շատ նախանձախնդիր ըլլայու է այս մասին։ Անմաքուր տանտիկին մը անտանելի է։ Տունը, եԹէ հարկ է, օրը քանի մը անգամ աւլել պէտք է։ Դռներու անկիւնները, պատուհաններու եզերքները, ոտինցնոցին քով, գաւիԹը, մառանը, ախոռը, փոշի, աղբ, հացի, պտուղի, լաԹի կտորուանք գտնուելու չեն։ Ձմեռ ատեն փողոցի կօշիկներով պէտք չէ աստիճանները աղտոտել՝ այցելուին գէշ տպաւորուԹիւն մը տա-

լով։ Տան կոյանոցը միշտ ջուր ու կիր Թափելու է որ գարշահոտուԹիւն չբուրէ։

Պարբերաբար պատուհաններու ապակիները, շրջանակները, դարակներ, դարաններ, տան սալայատակները տաք կամ՝ գաղջ ջրով լուացուելու են, այնպէս որ նոր, Թարմ տան մր տպաւորու~ Թիւնը Թողուն։ Տան պատերն ու գետինը ծեփե~ լու է որ ակօմներ չբացուին ։ Տան առիքէն սարդի ոստայններ կախուելու չեն․ ատեն ատեն առիքն այ ԹոԹուելու է։ Տան կահերուն գրեթեէ ավէնն այ կը կարօտին՝ ջրին՝ Հրաշագործ զօրութեան ։ Զգեստեղէնները մաքուր րլլալու են , բրդեղէն վե~ րարկուներ՝ մանաւանդ ձերմակեղէնները ։ Գաւառ-Ներու մէջ այս մասին շատ գանցառուԹիւն կ'րյ~ լայ ։ Օրերով , ամիմներով ձերմակեղէններու վրայ աղտր կր դիզուի , կր մակարդի , վեցոտնեայ արարածներ կր վխտան հոս հոն , մարմնոյն ամէն կողմերը կը շրջագային եւ գնդասեղի հարուածներ կու տան ։ Տիրուհիներ կան որոնց մազերը կը քստմնին լուացք բառը լսելով ։ Ասոնց տուները աղտոտ լաԹերը դէզ առ դէզ կը կանգնին ։ Լուագը բառը շատ անուշ հնչելու է տիրուհւոյն ականջին, զայն կարօտնալու է։ ԱնմաքրուԹիւնը մարմնոյն առողջուԹեան կը վնասէ, զգեստները կը փտտեցնէ, ճաշակը կը բԹացնէ եւ ընտանեաց պատուղն կը սպառնալ ։ Տան անկողինները, վերմակները,

ሀሀፀቦ በሖ ደሀሖሀዛበՒՆՔ

սաւանները չափազանց մաքուր րլյալու են։ Աղ~ տոտ մահիճի մէջ քնանալը քնոյ արժէքին կէսը կոտրել է ։ Անձեռոցները միշտ մաքուր րլլալու են որ մաքրելու տեղ չաղտոտեն ձեռքերն ու երեմները։ . Կալելը տիրուհտյն ուրիշ մէկ կարեւոր գործն է։ Մեր տնտեսական պայմանները չեն ներեր որ մեր զգեստեղէնները դերձակին յանձնենք։ Ջանալու ենք որ կարի մեքենաները ընդհանրանան տունե~ րու մէջ, դպրոցները այդ ուղղութեամբ այ Հրա-Հանգներ տան։ Արեւելեան տարազը որ մեր Հագուստներու տիրող ձեւն է՝ ավէն կին գիտնալու է կարել։ Կարել լաւ, կոկիկ ու ճաշակաւոր։ Տնական ուրիշ պէտքեր այ — մահիճ, բարձիկ, եւայլն, կարելու է։ Գույպայ հիւսելը տեսակ մը գործ է, որուն ժամավաճառութիւն անունն այ կրնանք տայ , Թէեւ ծայապատիկ Նստելէ եւ փողոցներու Հատակէտը կայնելով շաղփաղփելէ լաւ է։ Գաւառներու մէջ կեդրոններ կան, ուր կիները կտաւ կրգոր~ ծեն․ լաւ սովորուԹիւն մ՛է, եթե չափազանցու-Թեան չտարուի։ Մայրեր կան որ տան ամբողջ պիտոյքը այս միջոցով կրհոգան, տղոց կրթու-Թեան Թոշակն ալ կրվճարեն ու վարդի պէս կ'ապրին ։ Այս տեսակ կիներ աւելի առաքինի են ։ Ասոնք ընտանեկան յարկերու տակ ծլող Հերոսներ են։ Գիւղերու մէջ կինը իր էրկան կ'օգնէ՝ բա~ ցօդեայ տեղեր աշխատելով երկրագործական բեր-

ւքեր արտադրելու. այս ալ պէտքր ստեղծած է եւ իր շափաւոր սահմանին մէջ օրինաւոր է։ Միայն Թէ ակնարկուած պարագաներուն տակ պէտը չէ որ կինը ընտանեաց գրաստը նկատուի։ Ասեղնագործունինոր փափուկ գործ մ'է, որ աւելի ճաշակ կը գոհացնէ քան տնտեսականին կը նպաստէ։ Տան փռոցները զարդարող, տնեցւոց զգեստները փայ~ լեցնող ժանեակները , ինչպէս նաեւ ուրիշ ծաղկա-Նկարներ՝ տիրուհւոյն ճարտար մատներուն եւ կիրԹ ճաշակին ապացոլցներն են։ Այս մասին տարապայման ուշադրուԹիւն տալ յանցանք է․ լաւագոյն է եփել, լուալ, կարել քան ասեղնագործել։ Կիներ կան որ ինքզինքնին գեղագէտ կարծելով, իրենց բոլոր ոյժը այդ ուղղուԹեամբ կը Թափեն, առանց գիտնալու Թէ տունը գեղարուեստի սրահ մը չէ, այլ աշխատանոց մը։ Օգտակարը գեղեցիկէն նախադաս սեպելու ենք։

Տանտիկինը տիպար "……… ալ է։ Շարունակ կը ջանայ որ տան ելեւմուտքը աւելորդ բեռներով չծանրաբեռնի։ Տան մը պէտքերը, վայելքն `ու պերճանքը իրարմէ կրնայ զանազանել։ Քիչով կը բաւականանայ։ Ինքզինքն ու աղջիկները սիրամարգի պէս հագուեցնելու համար, զանոնք գոհարազարդ պուպրիկներ շինելու համար՝ տան վաստակաւորին ականջը չխլացներ ու ակամայ անոր "քսակը չծակեր։ Իր պահանջները կը չափաւորէ,

ሆሀ8ቦ በኮ ደሀኮሀԿበኮՆՔ

2

աւելի պարզութիւն քան սեթեւեթ կր փնտոէ։ Կր զգուշանալ որ զգեստները աղտէն չփտտին։ Կարկրտուքի մեծ կարեւորութիւն կու տայ։ Միշտ նոր զգեստի չփափաքիր, գիտէ կիսամաշ զգեստները Նորի վերածել ճաշակաւոր կարկտանով մր կարկտանի ծրարը կը սիրէ ու մասնաւոր գոհու-ՆակուԹիւն մր կրզգայ, երբ Նոր դրամ վատնե֊ յու յարկէն կ'ազատէ ելեւմուտքը։ ՏնտեսուԹիւնը ուրիշ ձեւերու տակ ալ կը յայտնուի — աւելորդ փայտ չվառել, օճառ չվատնել, նպարները Թարմ պահել որ իրենց ոլժը չկորսնցնեն։ Զգուշանալ որ տան կահերը չկոտրին, չաղտոտին, չկորսուին եւ չգողցուին։ Շատ կէտերկան որոնց մէջ տանտիկին մը կրնալ տնտեսագիտական սկզբունքները գործադրել։ ԵԹէ աւելի զարգացեալ կեդրոններու մէջ ըլլայինք, տանտիկինէն կը պահանջուէր ծախուց տոմարը բռնել, Հաշուեկշիռ պատրաստել, տան պէտքերը շուկայէն գնել։ Այդ պարագային կինը աւելի սրամիտ ըլյալու է։

Զ-----չ Դծ-չ---- չ------ Զաւակները ընտանեաց ծաղիկն են, անոր ապագան. անոնք երկնային հիւրեր են, հրեշտակներ։ Անզօր ստեղծուած ըլլալով, չեն կրնար ինքնին ապրիլ ու մեծնալ։ ԲնուԹիւնը ստորին կենդանիները աւելի անկախ ստեղծած է։ Անոնք ծնելնուն պէս իրենց կեանքի պայքարը կրնան մղել անձամբ եւ քիչ պէտք

ունին ծնողական աջակցուԹեան։ Սակայն մարդ մանկիկը խիստ անձարակ ևը ծնի ու, եԹէ ան~ խնամ Թողուի, անմիջապէս կը մեռնի։ Մանկան անզօրուԹենէն կը ծնի մօրը դժուարագոյն պարտքը – զայն մնուցանելու եւ մեծցնելու պարագան։

Մայր մը, որպէս զի կարենայ առողջ եւ շէնը շնորգը գաւակ մը մեծգնել, ըիչ շատ գիտ-Նալու է անոր ֆիզիքական կազմուԹիւնը եւ մարմ~ ุ Նոյն ազդող արտաքին գրգռիչները։ Առանց մարմ~ Նոյ կեանք չկայ այս արեւին տակ։ Մանկան մար~ մինը շատ քնքուշ, ոսկորները կակուղ եւ ինք-ՆապաշտպանուԹեան կարողուԹիւնը տկար րլլա~ լով , շատ ենԹակալ է արտաքին տպաւորուԹեանց ։ Շրջավայրի այդ ներգործուԹիւններն են որ իր կեանքը կը շինեն կամ կը ջլատեն։ Օդը, լոյսը, ջերմուԹիւսը մեծ դերեր կը խաղան անոր վրայ։ Նր խանգարել եւ սոսկալի հիւանդուԹեանց ծնունդ սարսափելի տայք օդր ուրիշ Հիւանդուпшן. Թիւններ կ'արտադրէ։ Ապականեալ, ծխոտ մԹնոլորտ մը իր չարագուշակ ազդեցուԹիւմները Цn բանեզնէ։ Մանկան մարմնոյն բարեխառնուԹեան Համապատասխան տաքուկ օդ պէտք է, ինչպէս Նաեւ մաքուր ու Թարմ, որ մանկիկը կազդուրուի եւ մեծնայ։ Ձմեռը մանաւանդ շատ զգոյշ **PI~** լալու է պաղ առնելու մասին. պաղը շատ մը

ՀիւանդուԹեանց ենԹակայուԹիւնը կը շինէ։ Ջանալու է մանկիկը շարունակ տայք պահել։ Բրդէ լայնկեկ, ԹեԹեւ Հագուստներ Հագցնելու է որ չճնշեն մանուկը․ Թողելու չէ որ բոկոտն կամ կիսամերկ գետնին վրայ սողայ։ Մեծ կարեւորու-Թիւն տայու է լուսոյ։ Ծառերուն շուքը բուսած ծաղիկը, տան մԹին խորջերը ծլող բոյսերը կր. դեղնին։ Խաւարչտին սենեակներու, մշուշոտ խոռոչներու մէջ մեծցող մանկիկները կըդալկին եւ կորովազուրկ կ'րլլան։ Արեւր այնչափ պէտը է մանկան որչափ ծաղկին։ Մանկան օրրոցը արե֊ ւուտ սենեակ մը դնելու է․ արեւու լոգանքը խիստ οգտակար է, արեւուտ վայրերու մէջ շրջագայու~ Թիւնը կարմիր արիւն կըշինէ երակներու մէջ։ Առատ ու մաքուր օդի, պայծառ ու տաքուկ արեւի ύξο ορύ ή επί ήμωση δωρίμα μασμωσή μωσմութիւն կ'ունենալ, առողջ կազմ, զուարթ բնու-Թիւն եւ երջանիկ մանկուԹիւն։

Քունը՝ մանկան համար՝ հացի չափ կարեւոր է։ Ան քնանալով աւելի կը գիրնայ քան ուտելով։ Այս՝ մասին ո եւ է զանցառուԹիւն հիւանդկախ կը շինէ մանուկը ։

Լոգանքը խիստ կարեւոր է մանկան, գաղջ ջրով ամէն օր լոգցնելու է։ Զգուշանալու է տաք ու պաղ ջրերէ․ մանկան փափուկ մարմինը չդիմանար ծայրայեղ բարեխառնուԹեան։ Լոգցնելէն

վերջ զգուշանալու է որ պաղ չառնէ, մարմինը կակուղ լաԹով շփելով չորցնելու է ու անմիջապէս հագուստը հագցնելու է։

Մանկան ճնշիչ հագուստ հազցնելու չէ։ Խանձարուրի եւ օրրոցի դրուԹիւնները, Թէպէտ իրենց մէջ աւանդական եւ բանաստեղծական հմայք մը ունին, սակայն վնասակար են։ Մարժնոյ սաստիկ ճնշումէն ծամածռուԹիւններ յառաջ կու գան եւ օրրոցի ճօճումէն ուղեղի ոսկորները իրենց դիրքը կը կորսնցնեն։ Մանուկը ազատ Թողելու է որ անդաժները շարժէ ու զօրանայ, հագուստն ալ ԹեԹեւ ըլլալու է. մանուկը բեռնակիր չէ։

Կախ տալու խնդիրը բարդ խնդիր մ՝է։ Մայրեր կան որ գիշեր ցորեկ կախ կու տան իրենց մանկան՝ իրենց սէրը կախով չափելով։ Ասոնք կը խորհին Թէ քանի որ կախը սննդարար է, մանկան բոլոր ոյժը անկէ կախում ունի․ որչափ առատօրէն տան, այնչափ նպաստած կ'ըլլան մանկան աձումին։ Շատ մայրեր ասանկով կը խանգարեն մանկան առողջուԹիւնը եւ երբեմն անոր մահուան պատճառ կ'ըլլան։ Մանկան իւրաքանչիւր լացը ծիծով փոխարինելու չէ. մանուկը պահանջկոտ եւ անիրաւ ըլլալ կը սորվի։ Կախը ամէն ցաւի դարման չէ. լացը կրնայ յառաջ գալ մարմնոյ անհանգստուԹենէ։ Մանուկը հաւասարաչափ կախ չկրնար ուտել ամէն ատեն. **ሆሀ**8ቦ በՒ Զ**ሀՒ**ԱԿՈՒՆՔ

պարագաներ կան որոնց մէջ քիչը օգտակար է։ Հիւանդոտ, ախտավարակ մօր կաԹը կը խանգարէ, կը Թունաւորէ մանկիկը․ այդ պարագային ուրիշ տեղէ կաԹ ճարելու է։ ԿաԹը հարազատ ըլլալու է։

Մայրիկը խնամով ուսումնասիրելու է մանկան ցաւ պատճառող պարագաները. քիչ շատ մարմնոյ օրէնքներէն հասկնալու է ու այդ ցաւը դարմանելու միջոցներուն իրազեկ ըլլալու է։ Զրկումը, սպառնալիքը, ծեծը՝ ցաւ դարմանելու մեԹոտներ չեն, ինչպէս շատ մայրեր կը խորհին։ Մանուկը առանց պատճառի ո՛չ կու լայ, ո՛չ ալ կը պոռայ լացը ցաւի յայտարար նշանն է։ Քմայք, յամառուԹիւն եւ չարակամուԹիւն չկայ մանկիկներու քով, ինչպէս նեղ սիրտ եւ տգէտ մայրեր կը կարծեն եւ վրէժխնդրուԹեամբ գանտնք կը պատժեն իբր Թէ կրԹելու մտօք։ Լացը մանկան լեզուն է, բողոքը մօրը անհոգուԹեանը, տգիտու-Թեանը դէմ. մայրիկը լացին շեշտերը Թարգմանելով իր պարտքը կատարելու է։

Երբ մարգարիտներ սկսին շարուիլ մանկան բերանը, այդ Նշան է Թէ կաԹէն տարբեր բան ուտելու է։ Աստիճանաբար դիւրամարս բաներ կերցնելու է, որով Թէ ակռաները կը զօրանան եւ Թէ լինտերը կը պնդանան, մայրն ալ կ'ա~ զատի կաԹ տալու տաժանքէն։

Երբ մանկիկը անդամներն ու մարմինը շար~

93-

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ժելու փորձեր ընէ, զայն ազատ Թողելու է որ սողայ կակուղ փոոցներու վրայ։ Վնասակար առարկաներ վերցուած ըլլալու են․ մանկիկը սենեակին մէջ իր շրջագայուԹեան միջոցին խուզարկուԹիւններ ալ կը կատարէ, որով մանկան մարմնոյ, մտքի կարողուԹիւնները կը զօրանան։ Քալելու օժանդակ գործիներ գէջ չեն, եԹէ սոսկ օգնականներ ըլլան եւ մանկան սրունքները անգործուԹեան չդատապարտեն։ Մկանունքի զօրու-Թիւնը անհրաժեշտ է կեանքի մէջ։ Այս պատճառաւ շատ սխալ է շարունակ գրկել, շալկել մանուկը, սպասաւորներու, սպասուհիներու յանձնել որ հոս հոն կուռքի պէս պտրտցնեն։

Երբ մանկիկը կը սկսի ձեռքերը շարժել աստ անդ եւ առարկայ բռնելու փորձեր ընել, անոր խաղալիկներ տալու է որ շօշափէ ու զուարձանայ ։ Խաղալիկը մանկան համար կերակուրէն անհրաժեշտ պէտք մ՞է ։ Խաղալիկները ըլլալու են պայծառ ու գոյնզգոյն ։ Մանուկը անոնցմէ կը կախարդուի, մուԹ գոյները չկընար գնահատել ։ Խաղալիկները ըլլալու են բազում՝ եւ բազմատեսակ ։ Մանկան ուշադրուԹիւնը նախնական ըլլալով, չկընար միեւնոյն առարկային վրայ երկար ատեն կեդրոնանալ ։ Շուտ շուտ խաղալիկները փոխելու է բոց երեւակայուԹեան յագուրդ տալու նպատակաւ ։ Խաղալիկները անվնաս րլլայու են ։

ሆሀ8ቦ በՒ ደሀՒሀ4በՒՆՔ

Խաղալիկներէ ամենէն շատ կ'ախորժի, երբ կենդանի ըլլան կամ պուպրիկ; որովհետեւ զանոնք անձնաւորելով այնպէս կը խորհի Թէ իր ընկերներն են։ Անոնց հետ կը խօսի, զանոնք սիրաշահելու փորձեր կ'ընէ, անոնց մաքրուԹեան ու գեղեցիկ հագուելուն նախանձախնդիր է։ Պուպրիկները մանկան ընկերական զգացումը կը յագեցնեն, կը զօրացնեն ու կը կրԹեն։ Գնդակը լաւ խաղալիկ մ'է, որովհետեւ գլտորկելով մանկիկը կը ստիպէ որ մարճնամարզ ընէ ու ժամանակ սպառէ։ Գողտրիկ ու առատ խաղալիկ ունեցող մանկիկը քիչ անգամ կը ճուայ, մայրիկը կը նեղէ. ինքն իր մէջ կ'ամփոփուի։ Զարգացեալ երկիրներ այս մասին շատ հոգ կը տանին, մենք բոլորովին անփոյթ կր գտնուինք։

Մայը մը գիտնալու է նաեւ ժպտելու, կնճռելու, բարկանալու, ծեծելու ատենը ։ Ասոնք, երբ յարմար ատենին ու յարմար չափով չրլլան, իրենց հակազդեցիկ արդիւնքը կ'ունենան ։ Ժպիտ մը առաքինուԹեան ինչպէս նաեւ մոլուԹեան սատար է ։ Կնճիռը յոռի ունակուԹեան մը դեղԹափն ինչպէս քաջալերիչը կրնայ ըլլալ ։ ԲարկուԹինը ատելուԹեան, կեղծիքի ոգին կրնայ մնուցանել ինչպէս եւ փորձուԹիւններ արգիլել ։ Ծեծը երբենն երկնից կ'առաջսորդէ, երբենն մեղքին անդունդը կը սուզէ ։

Մայրեր զգոյի ոլյայու են տղուն բնական համարձակութիւնը կորմնցնել ձիւաղի, Հրէշի, դեւի խօսքեր մէջ ձգելով ։ Տղոց երեւակայութիւնը արդէն վառէ։ Այս կարգի այյանդակ ու հուժկու էակներու նկարագրուԹիւնը գէջ հետքեր կը ձգեն լիշողութեան մէջ։ Սեւեռապատկերներ կը դառ-Նան եւ տղուն խիզախող ոգին կը տկարացնեն, անոր բնատիպ զգացումները կր խեղաթիւրեն, մտածման իսկատիպ եղանակը կ'անկիւնաւորեն ։ Այս կարգի մանուկ մը կը սկսի կեղծաւորիլ, որ ամէն կարգի մոլութեանց կափարիչն է։ Երեւակայական ցաւեր, անհիմն սարսափներ այս կարգի միտք մի կր պաշարեն՝ զայն շարունակ չարչարելով ։ Արդէն բնութիւնն ու ընկերութիւնը , մտածումն ու փորձառուԹիւնը զարհուրելի երեւոյԹներ ունին , որոնց տակ ընկճելու ենթակալ է մանկիկը երբ մեծնայ։ Մայրը ասոնց դէմ ճշմարիտ արիութեան, առաջդիմութեան ոգին ներշնչելու է որ իր սիրելիին կեանքը խորտակում մր չրլլալ։

Երբ՝ մայրիկը՝ ծանր՝ ՀիւանդուԹեանց՝ են-Թարկուի կամ մանուկը մեծցնելու տաժանքը չուզէ ստանձնել, դաչեաներու խնդիրը երեւան կու գայ։ Մայրը զաւկին բնական եւ Հարազատ դայեակն է, դայեակ մը՝ որ զայն կը մեծցնէ կաԹով ու սիրով։ Դայեակը արուեստական անՀարազատ մայրիկն է, որուն կաԹին Հետ սիրոյ մեղրը խառ-

. The Frank shows a second state

Նուած^աչէ , ։՝ համբոյրներուն » հտեմը հայիրտ չկայ է ժարտը կեղծ է, թարկութիւնը անտղոք, սպառնալիքն ու ծեծը կրթելու՝ ամենքն՝ կտրուկ մե թոտներն են ։ Դայեակին գիրկը մեծցող մանկիկը մուններին ուն է՝ օներներն հնարելու հնարերությունները հնարերությունները հնարերությունները հնարերությունները հնարե վախով պաղցուած, մարմինդումընին պրոբեստական էակ մ՛՛է ան է Առանց հայրական տար պոՎ իթվին մեծցող մանկիկը՝ առանց արեւու եւ ցօղի ծլող ծաղկին՝ կը նմանի . Երկուքն ալ դալկութ Թիմներ են ։ Մայր մը որ իր զաւակը ձեռ բովը վեծցնելու յօժարուԹիւնը չունի ,այէտք չէ տր մատ ակ ունենպու բաղղին արժանանալ։ Բնույժինը այս կարգի թարեղծում՝ մը չսիրեր ու կը պատժեց Դացեակները վարձու բռնուած մայրեր են։ Վարձքի գաղափարը մայր ըմբռնումին արմատական թրջե **Նամի է, մայրը զոհողութեան հոմանիշ է։ Դայ**ս եպերեր կան որ հրէջներ են, իրենց յանձնուած **զաւակներուն կը սորվեցնեն անբար**ոյութիւն, ծա÷ ծուկ մեղ բերու Համը առնել կու տան իրենց լայիրջ խօսակցուԹիւններովը ու դիւային գործերովը․ այսպէս հնանկան ապագան իկը «փրանկեն» փրենց մէկ քիրը քմահահոյքը յազեցնելու ։ Դայեանները մանկան քմայթն ալ կը փայփայեն, անոր յիմարական պահանջումներուն կը զիջանին, է--Ելը ջենուկոտրեր ու այսպէս ինդընահաշտնա։ շփազյած **մաթղիկ կբ**։ պատրաստես - մարդկունեսնել «կիսպ»

303 - Comestel Africanter

7'

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

եակներ երբեմն շատ անգԹօրէն կը վարուին իրենց սանուկներուն Հետ, զանոնք կը դիակնացնեն, երբեմն Հարազատ ծնողաց վրայ տուտեր յերիւրելով որդիական զգացումը կը խեղդեն, սէրը կը պաղեցնեն ու Հարազատ սրտեր կ'օտարացնեն։ Դայեակը շատ խնամով ընտրելու է, աչալրջու-Թեամբ Հսկելու է անոր վարմունքը ։

Վերջապէս մանուկ մեծցնելը սարսափելի զգուշուԹիւն եւ անհուն համբերուԹիւն կը պահանջէ։ Մանուկը տունը մինակ Թողուլը կրնայ աղէտ մը պատճառել։ Մայրեր եղած են որ իրենց մանկիկը կրակին քով Թողլով, դրացիին տունը շաղփաղփել գացած են եւ վերադարձին զայն ափ մը մոխիր գտած են ։ Այսպիսի մօր մը վիշտը մարդ չկրնար ըմբռնել։ Թողելու չէ որ միայնակ ուզած տեղերը պտըտի, իյնալով կրնայ խեղանդամ կամ յանկարծամահ ըլլալ։ Փոքրիկ քրոջը, եղբօրը կամ սպասուհին շալակը տալու չէ որ պտըտցնեն. վտանգները անպակաս են մանուկներու համար ։

Մանուկը խօպքով չմեծնար, այլ իմաստու~ Թեամբ, համբերուԹեամբ ու զոհողուԹեամբ։

Մօր պարպես՝ աղջկանց Հանդեպ։ Ինչպես հօրը մեծագոյն մտածումը մանչ զաւակաց ապագան է եւ հայր մը պարտի հեռատեսուԹեամբ խոստմնալից կարելիուԹինններ պատրաստել անոնց, նմանա-

ሆሀ8ቦ በՒ ԶԱՒԱԿՈՒՆՔ

պէս **մար** մը աւագ պարտքերէն մին է աղջկանց բարւռք դիրքեր պատրաստել։ Քանի որ աղջիկներ ընդհանրապէս տունը կը մնան, մայրեր առատ ժամանակ ու պատեհութիւն ունին իրենց կոչման հաւատարիմ գտնուելու։

Ընդհանրապէս աղջկանց ապագան որոշ է, այսինքն կին ու մայր պիտի րլյան։ Երիտասարդ-Ներ ուրիշ կնճռոտ մտածում մ'այ ունին, որմէ գերծ է իգական սեռը. կեանքի գործ ընտրելու եւ անոր մէջ բարձրագոյն դիրք մր բռնելու մտածումն է այն։ Մեր երկրին մէջ ամուրիութիւնը այնչափ մը առաջ գացած չէ, ապրելու պայման~ ները այնչափ մբ դժուարացած չեն որ ամուրի աղջկանը կեանքի մասնաւոր գործ մը ունենալու Հարցը քրքրենք։ Ոչ ալ ազատ արուեստներու, գեղարուեստի Նուիրուող լէգէոն մր ունինք որ գայն քաջալերենք։ Մեր երկրին զարգացման մա~ կարդակը եւ ընկերական կազմը չեն Թուլատրեր այդ կարգի գործ ու ասպարէզ իգական սեռին Համար, Հետեւաբար աղջկանց սեւեռակէտը ընտանիք կազմելու պարագան է։ Մայրեր այս մասին մասնաւոր ՀոգածուԹիւն ունենալով իրենց Թեւին տակ կրԹելու են իրենց աղջիկները,իրենց փորձառութենէն թելադրուած, անոնց մտքի ուղղուԹիւնը Հոս դարձնելու են։ Կեսուրներ իրա~ ւունք ունին երբ Հարսին մայրը կ'անիծեն՝ գայն

առտնին գործերու մասին համբակ գտնելով ։ Մայրը՝ աղջկանց սորվեցնելու է եփել, Թափել, կարել, կարկոնել, լուալ, մաքրել ու տանաիկնոջ յատուկ ուրիշ գործեր։ Երբ աղջիկներ բաւական մը մեծնան, մայրը գործը անոնց ձգելու է եւ ինը ընդհանուր հսկողութիւն ընելու է, մասնաւոր դասեր տալով մեթոտներ՝ սորվեցնելու։ է։ զանոնը գործի մէջ այնչափ մր թերծելու է որ երբ Նոր տան մը հոգը ստանձնեն, դիւրաւ եւ ախորժով կատարեն։ Այս մասին անփոլթ գրանուող մայր մը ընկերային մեծ գեղծում կը գործէ եւ ուրիշ ընտանիքի մը կործանումը կը սարքէ։ ՏՆաշէն աղջիկ մը ընկերութեան կտակողը մեծագոյն բարիքն է որ կ'րնէ։ Վտանգ կայ շարու-Նակ որ մարդիկ աւելի երեւոլԹին կարեւորուԹիւն տան քան էութեան, աւելի զարդականը սիրեն քան իրականը։ Իգական սեռը պչրանքի, պերճանքի մասնաւոր միտում մր ունի ու մանաւանդ մանկամարդ աղջիկն ու Հարսը։ Մայր մր պէտը է իր աղջկանց իրերու յարաբերական արժէքը սորվեցնէ, շահերու կշռադատութիւն եւ ընտրու-Թիւն լաւագունին։ Առանց այս սկզբան՝ կեանքը իր Հաւասարակշռութիւնը չգտներ ու ոչինչ նպատակներու համար մսխուած ոյժ մր կ'րյլայ։ Մայր մը աղջկան սորվեցնելու է օգտակարը Հաշ ձելիէն, գորձը Հաձոյքէն նախադասել։ Լուբջ

ս ԱՅՐ ՈՒ ՉԱՒԱԿՈՒՆՔ

գրքերը գողտրիկ վէպերէ աւելի սիրել , կանոնաւռը ապրուստը մնավէջ պերճանքի նախադասել , տնական ծառայուԹիւն մը՝ զուարճալի շրջագայուԹենէ։ Առանց այս դատումի հատունուԹեան՝ աղջիկ մը պիտի չկքնայ իր ապագայ դերը կատարել իբր մայր ու կին։

Մայր մը աղջկան սորվեցնելու է յարմարընկեր մը գտնելու եղանակը, կամ տիպար երիտա~ սարդի մը իտէալը գծելու է իր աղջկան։ Անուղղակի ակնարկներով կամ ուղղակի Թեյադրու-Թիւններով ձաղկելու է ընԹացիկ նախապաշարումներ, մնավէջ բայց փայլուն երիտամարդներու կենցաղավարուԹիւնը եւ բարոյական մոլուԹեանց մէջ ԹաԹաւուած զարմիկները, եւ պարկեշտ երիտասարդներու ներբող կարդալու է, որ աղջիկը րնկեր մը ընտրելու պահուն չսխալի եւ շողշողուն փոս մը չիլնալ։ Մայր մը իր մեծ աղջկանց սիրտը կարդալու է, դիտելու է Թէ ի՞նչ ատեն սէրը կթ սկսի բաբախիլ հոն, ի՞նչ ատեն միկող զգացում-Ները կը բռնկին անոնց կուրծքին տակ, այդ սէրը ի՞նչ փուլերէ կ'անցնի, ի՞նչ ձեւերով կ'արտայայ~ տուի։ Պէտը է գիտնալ Թէ այդ սէրը ի՞նչ ան-Հատի կամ անհատներու հանդէպ կը զգացուի։ Մայրեր հետաքրքիր ըլլալու են գիտնալու Թէ իրենց աղջիկը սիրահարուԹիւն ունի՞. այդ սիրա-ՀարուԹիւնը որո՞ւ Հետ է, պարկե՞շտ է, մէ՞կ Թէ

բազում է։ ՍիրաՀարուԹիւնները եթե վտանգաւոր ելքերու պիտի յանգին, զանոնք ծնողական Հեղինակութեամբ դադրեցնելու է։ Եթե անպարկեշտ երիտասարդներու հետ է, մայրական սէրը շանթահարելու է այդ լիմար երագը ։ Եթե սիրահարութիննները բազում են եւ աղջիկը պարզապէս խաղալիկ եղած է, մայրը առանձին Թելադրու-Թիւններով աղջկան առջեւ պարզելու է իր ներկան ու ապագան եւ արցունքոտ շեշտերով, համոզիչ խորհուրդներով យបែកព្ առջեւ լաւագոյն պողոտայ մը բանալու է։ Այս բոլոր պարագա-Ներու մէջ մայրը խիստ փափկանկատ ըլլալու է չվիրաւորելու իր դստեր զգացումները եւ զայն յամառութեան կամ յախուռն յիմարութեանց չմդե~ լու. աչալուրջ ըլլալու է խնդրոյն ամէն մանրա~ մամնութեանց մօտէն իրազեկ րլլալու որ աղջիկը գիտնայ Թէ մայրիկը իր բոլոր մեքենայութինս-Ները գիտէ։ Սիրալիր րլլալու է որ աղջկան սիրտը յաղԹահարէ, եւ ազդեցիկ ըլլալու է որ անոր յաւակնոտ ձեռնարկներուն վերջակէտ դնէ։ Անշուշտ կարգ մր արեւմտեան ոճով ազատամիտներ պիտի առարկեն այս կարգի ընդմիջումներու՝ ազատ սիրոյ վարդապետուԹեան ջատագով կանգնելով։ Վար~ դապետուԹիւններէ շատ չեմ հասկնար․ միայն սաչափ գիտեմ Թէ աղջկան մը սիրտը, Նորընծայ υէրը, բուռն զգացումը, կոյը յուզումը ընտրու-

ሆዚያቦ በჁ ደሀჁሀዛበჁՆՔ

Թեան ապահով առաջնորդ մր չէ, ոչ ալ իմաստուն խորհրդատու։ Փորձառու մօր մը իմաստուն ԹելադրուԹիւնները անհրաժեշտ են յարմար ընկեր գտնելու։ Մայր մր այս մասին Թէ իրաւունը եւ Թէ պարտը ունի իր կարծիքը յայտնելու։ ԵԹէ աղջկան ընտրութիւնը խելագար սիրոյ մը ծնունդ է, կոնայ մինչեւ իսկ անոր կամքին բռնանալ առանց մեղանչած ըլլալու։ Մայր մր պարտի ըն~ տանիքի նկատմամբ լուսաւոր ըմբռնում մը տալ աղջկան, ընտանեկան աշխարհը ծանօթագրել, անոր գահավէժ ցցունքները, անյատակ փոսերը, ժպտուն դաշտերն ու խորհրդաւոր անտառները, այնպէս որ աղջիկը անծանօթ գետնի մր վրայ քալելու չստիպուի։ Պէտք է ընտանեկան կեանքի Թնձուկները, ամուսնական դժուարուԹիւնները, պատահականուԹիւնները, կարելիուԹիւնները bι մանուածապատ պարագաները Հատիկ Հատիկ լու~ սաբանել վառ գոյներով որ աղջիկը չայլայլի։ Ընտանեկան կեանքի պայծառ կողմերն այ Թուելու է որ աղջիկը անկէ հրապուրուած ընտանիք կազմելու ձգտումը ունենալ։ Սուտ համեստու-Թեամբ կամ Նախապաշարումով մայրեր բնաւյեапւ չեն շարժեր այս մասին, քանի որ որոշ գիտեն Թէ իրենց աղջիկը ճակատագրուած է կին կամ մայր րլլալու։ Մայր մը ընտանեկան կեանքը իր բոլոր պարագաներով լուսաբանելու է անոր

վեհուԹիւնն ու նութրականուԹիւնը չպատորելով աղջկան մտրին մէջ։ մայր մը պարտատր է ծանըանալ աղջկան նշանակելի Թերութեանցը՝ վրայ, որութ զայն անյարմար կը շինեն իր կոչումիս, ղանոււը սրբագրել ճգանլու է։ Աղջկան բարեչ վամյունիւններն ալ քաջալերելու եւ բրչ աւելի զարգանայ եւ տիպար մայր ըլլայ, ընտանեկան յարկին լուսեղէն սիննը ։ and open the poles with m. M-zr sore (Cumulation beingh 112 want ստփելի անակնկալներ եւ անորակելի՝ դժբազդույ Թիմներ կան, որոնց առջեւ մարդ կը շուաթի ։ Ընդ տանեաց հօր կորուստը, երիտասարդ զավի մը մահը փուշ փուշ կ'ընկն մարդուն։ մարմինը, թայց ասոնցվէ եւ ոչ վին հոգեբանական կնճիռներ կը Թողու ետին որչափ մանկամարդ կամ չափահապ ւթնը վը մահը։ Այս պարագային հօր սիրտը քրըքո տուած է։ Ու իր սիրոյն առարկան ցուրտ հողին տակ շիրմուած ըլլալով իր կեանքն ալ տեսակ մթ գերեզման կ'ըլլայ։ Մայրիկին ետեւը մնացած անզօր մանկիկները իրենց Թփիկէն փրցուած ծաղկի Նման կթյակսին Թօշնիլ եւ սիրազութկ մեռնիլ։ Հայրը, կենաց պայքարը մղելու դատապարտուած, իր՝ մտաց հաւասարակջոութինը կորոնցուցած ժազ վանակ ոյժ չունի մօր ու հօր պարտքերը՝ միսվել գավայն կատարելու։ Կետնքի ամենէն սոսկալի առեղծուածը կ'ելլէ իր առջեւ, հոգիի կոիւը կր

ASUBROAM SULLIANDA

սկսի ։ Մեկ կողվես չուգեր իր սիրելին։ յիշատակը պղծևլ՝ հետ քնչուն պիրտը։ Նոր կնոջ մը տալով։ **վիւս**, կողվէն, կեակքի անողոք, պարագաները , անվ ինայն երբուկները՝ եւ կետնքի բեռը միայնակ կրելուլյարակալի մապծումը զինք ակամայ կը համող ցեն նոր միութիւն մը կազմելու։ Այսպէս ընտաերեկանութակվեն ներս կը մտնե նոր երեւոյն մը, ինըրով ու նրուրով դաղադրուած նոր էակ մը 🖽 իսորն՝ մայրը և Մայր ու խորն յատկունիւնները երկու հակաձիզ՝ ոյժերն՝ են՝ որ՝ ստիպուած են նոյն անձին վրայ միանալ։ Արուեստական մօր չափ կեղծ բան չկայ տիեզերքին մէջ։ ԲնուԹեան մէջ տաքբեր թյժեր իթարու դեր կրնան խաղալ, բայց <u>Տարազատ մօր մր դերը եւ ոչ մէկ արարած,</u> Մայրը Հարազատ բնածին սիրոյ մարքնացում մ`է։ այդ բնականութեան գրոշմը անկեղծելի է։ Հաբազատ մայրը բիմիապես բաղաղրուած է զասկին, խորի մայրը՝ մեքենապէս․ մեքենական մայրուծեւնն այ հակասական է ինքնին։ Խործ մայրը աթտաքին պահապան մ'է քան ներքին նուիրում, եւ քանի որ երկու չարեաց փոքրագոյնը՝ ընտրել անխուսափելի օրէնք մ՚է կետնքի, աւելի լաւ է որբուկ մը պահապան եւ տունը նեցուկ մը ունե-Նայ քան Թէ բոլորովին քայքայուի ։ ԵԹէ տան *Տայրը* ծերուԹեան սահմանները Թեւակոխած է եւ ղաւակսերը խօրդինընին կերպով մը ճարձրկելու

չափ մեծցած են, լաւագոյն կերպը կրկին ամուս-ՆուԹենէ զգուշանալն է տանը Ներքին խաղաղու-Թիւնը անդորը ու մեռնող մայրիկին յիշատակը սուրբ պահելու համար։ Կարգ մը ծերուկներու նոր ամուսին մը ունենալու մարմաջին չափ տղայական բան չկայ։ Այս տեսակ միուԹիւններ սոսկ միսի միուԹիւններ են չէ Թէ սրտի. հասարակաց կարծիքը իրաւամբ կը կատղի ասոնց դէմ։ Մէկ ոտքը գերեզմանին մէջ դնել ու նոր կեանք մը ձեռնարկելու փափաքիլը՝ պժգալի իմաստակու-Թեանց շարքը կընանք դասել։

Խործ մօր ընտրուծինը չափազանց իմաստուծին ու կշռաղատում կը պահանջէ։ Ամուսնացող այրեր երբեմն երիտասարդական կեղծ աւինէ մը ներշնչուած յիմար ընտրուծին կ'ընեն։ Մանկամարդ օրիորդ մը կամ հարս մը կնուծեան կ'առնեն անոնց գեղեցկուծենն ծելադրուած՝ առանց մտածելու ծէ տարիքներու անհալասարակշռուծինը, զաւակներ խնամելու պահանջը, ընտանիք մը վարելու պարագան կամ ասոնց արտադրոյծ եղող խոհեմուծինը տարբեր ընտրուծին մը կը հրամայեն և Երկրորդ ամուսնուծեան մէջ նկատողուծեան առնուելու են կազմախօսական օրէնքները, որոնց զեղծումը ոճրագործուծին է։ Նոր մայրիկն ըլլալու է կեանքի ցաւերուն մէջ Թրծուած, փորձառուծեան դասե-

ሆዚያቦ በኮ <u>Զ</u>ԱՒԱԿՈՒՆՔ

րովը ՀրաՀանգուած մէկը, որպէս զի կարենայ շա-Հիլ մայրազուրկ մանկիկները, որպէս զի խորթ մօր տպաւորութիւնը չթողու զաւակաց վրայ եւ զանոնք ապստամբութեան չգրգռէ, որպէս զի կաըենայ էրկան խոցոտած սիրտը փաթթել եւ տանտիկնոջ պարութերը կատարել անթերի։

Կնքուած նոր ամուսնութեան մէջ այրը փափկանկատ ըլլալու է որ ոեւ է կերպով չվիրաւորէ իր կնոջ զգացումները։ Ոեւ է ակնարկութիւն չընէ իր հին կնոջ սիրոյն ջերմութեանը, ընտիր բարեմամնուԹեանցը նկատմամբ։ Զուգակշռի դնե**լու չէ հին ու նոր կինը, անիծելու չէ նոր միու-**Թիւսը՝ երսեկ տալով անցելոյն։ Այս տեսակ պարագաներու տակ կնոջ արժանապատուուԹիւնը կր վիրաւորուի, սէրը կը մեռնի ու կինը կը սկսի մեգերայ մը րլլալ ընտանեկան լարկին մէջ, լաջորդաբար ՆորաՆոր դժբաղդութիւնՆեր բերելով գաւակաց ու էրկան գլխին։ Չեմ րսեր Թէ էրիկը Թող մոռնայ իր Հին կնոջ յիշատակը, քա՞ւլիցի. կրնայ գայն լռիկ պաշտել իր սրտին մէջ, բայց քանի որ միութեան նոր ուխտ մը րրաւ, իր սիրտը նորի մը․րնծայեց, օրէնքն ու բարդյականը կըպահանջեն որ միուԹիւնը հարազատ ու զօրաւոր րլլայ։ Նոր կինը արդէն հոգեբանական օրէնքով մասամբ կըկասկածի իր էրկան սիրոյն, խորհելով Թէ հին սիրականի մր աձիւնը իրմէ աւելի կը պաշտուի. եԹէ ո եւ է Նշան տեսնէ այս մասին, կասկածը իրականուԹեան կը փոխուի, սէրը՝ ատելուԹեան ու վրէժինդրուԹեան։ Երբ այրը անխղճօրէն վարուի ամուսնոյն հետ, զաւակները Թեւ կ'առնեն եւ շարունակ կը խոշտանգեն իրենց Նոր մայրիկը, որ այլեւս իրենց համար բռնազբօսիկ էակ մը կը դառնայ, սադայէլ մը տնկուած իրենց յարկին տակ։

Ընդհանրապէս տան մը խելահաս եւ մեծցած զաւակներն են որ, խործ մայր մի ունենայթ իրենց անարգանք նկատելով եւ իրենց հօր կրկին ամուսնանալուն չհաւնելով, ինքզինքնին մօր հոգածութենն ազատ զգալով, քինախնդրութեան գգացում մը կը մշակեն անոր դէմ, խուլ ատելուԹեամբ լեցուած կռիւ կր հանեն, կր պոռան՝ ամբողջ Թաղին այնպէս մը գիտցնելով Թէիթենց խործ մայրը տուն ու զաւակ չկրնար շահիլ։ Արդարութիւնը, խոհեմութիւնը, որդիական պար։ տաւորութիւնը, սպնուութիւնը ասոր Հակառակ րնիժագը մր կրպաՀանջեն մեծ տղէն։ Ընտանեաց շահն ալ նոյնը կը շեշտէ։ Այս կարգի տղայ մը յիմար, յանցաւոր եւ գէջ օրինակ է։ Զաւակներ ավէնն այ վեծ ու փոքր Հնազանդ րլյալու են իրենց խորԹ մօր քաղաքավարուԹեամբ․ ազնուռ. Թեամբ ու գորովով վարուելու են անոր հետ. խորԹութեան կասկածի նշոլլ մր անգամ տայու

uuse an Qubulander.

չեն, կասկածը հղեռնագործութիւն է։ Քանի որ ան գիրենը կր հոգալ, կր խնամէ երբ մխիթարու-Թենչէ զուրկ որբուկներ են, պէտք է իրենց ժարտ-Ներովը եւ երախտագիտական՝ զգացումներովը՝ քա-Տալերեն դայն եւ ընծութեան մշտաբուղի ակ մբ ստեղծեն անոր մէջ։ Երբ խորթ մայր մը իր խորԹ գաւակներէն սէր ու քաղցը՝ վարմունք կը ստանալ, իր զգացած երանուԹինը անհուն է։ Զաւակներ լքելու չեն խորԹ մայրը երբ Հայրիկը։ մեռնի։ Ոմանք այս պարագային ակնկառոյց կր Նային․ որչափ Հայրիկնին ողջ է, անկէ ամչնա֊ լով կամ վախնալով կըլռեն. երբ մեռնի, իրենց պաքները կը սկսին նետել անոր՝ դէմ, անոր հետ շարունակ կռուիլ ու օր մը դունէն փողոգը նե~ տել, անշուշտ տեսակ մը քաջութեան, գոհունա~ կուԹեան զգացումով որպէս Թէ իրենց վեռած մօր պատարագ մատուցած րլլային եւ հօր սրբապղծութիւնը քաւած։ Այս ցնորական հերոսու-Թինս է։

Ամէն խործ մայր զգացումով ու սիրով խործ չէ։ Հազուագիւտ չեն խործ մայրեր որ հարազատ մօր մը չափ ու անկէ ալ աւելի գուրգուրանք կը շռայլեն իրենց զաւակներուն վրայ, բոլոր զօրուծինսով կ՛աշխատին տան պայծառուծեանը, խենդի պէս կը սիրեն իրենց այրը եւ հակառակ անտեղի զրոյցներու, զրպարտուծեանց եւ կոշտ։

վարմանց՝ իրենց պարտականութենէն մազի չափ չեն շեղիր։ ԽորԹուԹեան դէմ նախապաշարուելու չենք․ իրողութիւնները Հակառակն ալ ապացուցած են եւ մենք իրողութեանց առջեւ պէտք է գյուխ ծռենք ։ Մեր զգացումները պարտինք գսպել ։ Փոխադարձաբար խործ մայրն ալ ջանալու է հարազատ մօր մը չափ գորովով սիրել նախախնա~ մութեան իրեն ուսին վրայ դրած եւ իր հաձու~ 🖯 Թեամբ ստանձնած ծանր բեռը ։ Պէտք է Աստուածային աւանդ մր նկատէ այդ զաւակները եւ փափկանկատութեամբ խնամէ զանոնը ։ Զգուշա-Նալու է խիստ միջոցներ ձեռը առնելէ՝ գանոնը կրթելու։ Ասոնք զաւակներու մէջ հակակրութիւն կը շինեն եւ մօր խորԹուԹիւնը կը շեշտեն։ ԽորԹ ſέδ մայրը իր խորԹ ու Հարագատ գաւակաց խտիր դնելու չէ․ կնձիռը ձիշդ այդ կէտէն կր սկսի։ Զանոնք Հաւասարապէս խնաժելու է пρ եղբայրներ իրարու դէմ չզինուին,։ Խորթ մայրը խոհեմ՝, աչալուրջ, հեռատես ու հոգեբան ըլլայու է որ իր փափուկ պաշտօնը կատարելու ատեն դիրքը չվտանգէ։ ԶուարԹուԹեամբ կատարելու է պարտքերը․ մելամաղձոտութիւնը կը մատնէ խոր-ԹուԹիւնը ։

Խործ մօր աչքը բաց ըլլալու է, ականջը խուլ, սիրտը ծովու չափ լայն ։ Իր խործ զաւակաց տղայական ակնարկները համբերութնքբաե

ԾՆՈՂՔ ԻԲՐ ՕՐԻՆԱԿ

տանելու է, մանասանդ ազգականներու, դրացիներու, հոս հոն խօսք ցանող, կռիւ յարուցանող քսուներու զրպարտութեանց բնաս ականջ կախելու չէ որ ամչնան, զղջան ու լեզունին ներս քաշեն ։ Բնական է որ խորթ մօր մը դէմ այս կարգի զրոյցներ շրջին, որովհետեւ շատ մը խորթ մայրեր տեղի տուած են, ու հասարակաց կարծիքը այնպէս շինուած է թէ խորթ մայրը շատ մը անպատեհ բաներու ծնունդ կու տայ ։ Խոթթ մայրեր, երբ իրենց պարտքը սիրայօժար կատարեն, գովեստի արժան կ՛ըլլան ։ Անոնք անողոք բաղդին գործած մէկ ոճիրը կը քասեն ոստեր սփոփելով թնտանիք մր կր վերածնին ։

C

ԾՆՈՂՔ ԻԲՐ ՕՐԻՆԱԿ

Հօր ու մօր պարտքերը առանձինն ու մանրամամնաբար Թուելէ վերջ յարմար տեղն է աւելի կենսական կէտ մը ուշադրուԹեան առնել, որ երկուքին հաւասարապէս կը վերաբերի։ Արդէն տեղ տեղ անուղղակի ակնարկուեցաւ, սակայն այս կէտին կարեւորուԹեանը համար կ'արժէ աւելի որոշ շեշտել գայն։ Մանկիկը տպաւո-

r

րութեանց են Շակայ է ակ մ'է. տպատրու Թիմները դրսէն կու դան ։ Մանկան շրջավայրը ծնող թե է հետեւաբար մանկիկը ծնող թէն կ' բնդունի տպատշ որութեններ պգալաբար կամ անպգալաբար, որութը վինջեւ իր կետնքին վերջը կը տեւեն։ Մանկիկը կամքի անկախութերն վերջը կը տեւեն։ Մանկիկը կամքի անկախութերն չունի, հետեւաբար զուրկ է ինքնավարութենէ ։ Վերացեալ բաներ թմբունելու մուքի կեղթոնացումը չունի են ուստի թանձրաց եալ էակներէ կ'առնէ իր ազդեցութենները։ Մատ նուկը գերաղանցօրէն կրաւոթական չեակ մ'է են ապահովապես իր ծնաղաց պատկերը կը փայլեցնել իր կեսնքին մէջ ։

Մանուկները դէտեր են, Հակիչներ ծնողաց բարոյականին։ Անոնք պատուաւոր հիւրեր են, անվեղութեան տիպարներ, որոնցվէ ծնողը պատկառանը՝ զգալու են։ Ծնողը շատ անգամ ինըզինքնին ազատ կր զգան իրենց զաւակներու ներկայութեան ընելու ինչ որ ուզեն․ կը խորհին թե մանուկները չնչին էակներեն։ Սխալ է այս կարծիքը, մանկիկները բոցեղէն հրեշտակներ են որ զմեզ՝ զգուշացնելու են՝ մեդքի ճաշակեն, առաքի-ՆուԹեանց պահապաններ են , ավենէն տուր քննա։ դատները , ավենէն անողոք դատաւօրները կեպելքինը։ Քանի որ մեր կենցաղը անոնց կեանքին ճակար տագիրը կը շինէ, շատ գզույշ ըլլալու ենք անոնց Ներկայունեան ։ the mile is a second 1.1

ԾՆՈՂՔ ԻԲՐ ՕՐԻՆԱԿ

Ծնողը պարտին զգուշանալ իրենց լեզուի գործածութեան ։ Անպարկեշտ խօսը , կոշտ բա-Նաձեւ, անէծը, Հայհղյութիւն բնաւ ելլելու չէ անոնց բերնէն ։ Այդ խօպքերը մեռեալ տառեր չեն, այլ կենդանի մանրէներ որ կը փոխանձին մանկան հոգւոյն մէջ ։ Կր ներարկին անոր նկարագրին խորշերը, երեւակայութեանը մէջ կը թափանցին եւ հետզհետէ աձելով գձուձ երեւակալուԹիւններու , պիղծ մտածումներու, ապականեայ արարքներու լէգէոն մը կ'արտադրեն։ Մանուկը առաջ անզգա~ լաբար կ'ընդունի , կը յեղ յեղէ, մտքին մէջ , օր մը անոնց ահռելի իմաստին ալ կր Թափանցէ ու կ'իլ-Նալ ապականուԹեան ծանծաղուտը։ Աւելի լաւ է որ ծնողաց լեզուն իրենց քմացր փակչի, բերնին մէջ չորնալ քան անպարկեշտ բառեր ԹոԹովէ ամբիծ մանուկներու ներկայութեան ։ Կան գարշեյի ծնողը~ Ներ այ որ տղուն ՀայՀոյուԹիւն կր դասաւանդեն եւ Հպարտութիւն մի կրզգան երբ ան կրնայ ճարտարութեամբ ՀայՀոյել։ Սուտն ու բամբասանքր, ծաղըն ու շողոքորԹութիւնը լեզուի ու~ րիշ չարիքներ են , որոնցվէ զգոյշ , ըլլայու են ծնոդք։ Ծնողը իրենց կենցաղին ու կենցաղավարու-Թեանն ալ զգոյշ ըլլալու են։ ԳինովուԹիւն, խա~ ղամոլութիւն, անառակութիւն բոլորովին шр~ գիլուած են Հօր մը, որովՀետեւ զաւակները նմա֊ Նողաբար Նոյն ընԹագքին կ'առաջնորդուին ։ Խար-303 - Commenter Legensonster 8

դախութիւն, պորտաբուծութիւն, մուրացկանու-Թիւն դիւրաւ օրինակելի լատկանիշներ են, пn տղուն տնտեսական ու բարոլական ապագած ֆր վտանգեն ։ Կոշտութիւն , անգթութիւն տարափոխիկ ախտեր են ։ Մելամաղձոտութիւն , շաղակրատութիւն , խծբծանք , յոռետեսութիւն ոսկորներուն մինչեւ ծուծը կը Թափանցեն։ Հանրային գործոց Հանդէպ չեզոքութիւն , կրօնական անտարբերու-Թիւն ամբողջապէս կր կաղապարուին մանկան վրայ ։ ԿռուասիրուԹիւն, քինախնդրուԹիւն, նենգամտուԹիւն մանաւանդ մօր ու Հօր անձին վրայ առարկայազած՝ անխուսափելի ախտեր են ։ Ծնող բ լաւ գիտնալու են Թէ իրենց բնուԹիւնը, նկարա֊ գրի յատկանիշները, շուկայի յարաբերուԹեանց եղանակները , նիստ ու կացը , շարժուձեւերը шմէնն ալ կ'ազդեն , կը տպաւորուին մանկան վրայ։ Հայրական պարտաւորութիւնը, մայրական

Հայրակաս պարտաւորություսը, սայրակաս սէրը, ծնողական նուիրականուԹիւնը, արդարու-Թիւնը, մարդկուԹիւնն ու կրօնքը ամէնն ալ կը տրամադրեն որ ծնողք իրենց ընԹացքը կանոնաւորեն եւ իմաստուԹեամբ գործեն ։

Դրական առաքինուԹիւններն—աշխատասիրու-Թիւն, ՀաւատարմուԹիւն, այլասիրուԹիւն, ուղղամտուԹիւն, բարոյական կորով—ալ փայլելու են ծնողաց վրայ որպէս զի մանկիկը ամէն կարգի բարեմաս-ՆուԹիւններով զարդարուի եւ տիպար մարդ ըլլայ ։

<u> ዲሀኮሀዛሀ8 ጣዛ</u>ቦՏኮՔ ሀቡ ԾՆՈՂՍ

Թ

<u> ደ</u>ԱՒԱԿԱՑ **Պ**ԱՐՏԻՔ ԱՌ ԾՆՈՂՍ

Ասկէ դարեր առաջ, ինչպէս ալ հիմա վայրենի երկիրներու մէջ, զաւակը հօր ստացուածքը կը նկատուէր։ Ան բացառիկ իրաւունք ունի ծեծելու, սպաննելու կամ աստուածոց ողջակէզ մատուցանելու իր զաւակները։ Այս անգԹուԹինսները առանց խղճահարուԹեան ալ կը կատարէ։ Դարերը շրջեցին այս անողոք ըմբռնումները եւ այսօր մանուկներն ալ, զաւակներն ալ իրենց անձեռնմխելի իրաւունքները ունին, որոնց դպչելու չեն հայրեր, եԹէ ոչ՝ կը մեղանչեն։ Սակայն զաւակաց իրաւունք ունենալու գաղափարը այնչափ մը ստուար համեմատուԹեամբ ծաւալ գտաւ որ հակազդեցուԹեան օրէնքով որդիական անիշխանու-Թեան դաւանանքը շինեց։

Այսօր Հայրեր կան որ կը կասկածին իրենց ծնողական ՀեղինակուԹեանը վրայ ու զաւակներ՝ որոնց մուքին մէջ մշուշ կը տիրէ որդիական պարտաւորուԹեանց մասին ։ Որդիական պարտաւորու-Թիւնները այնչափ մը բնական եւ Հաստատուն կռուան ունին որչափ ծնողական պարտաւորու-Թիւնները, եւ անոնց պէս յաւիտենական են ։ Որ-

դիական պարտաւորութիննները հիմնուած են արդարութեան, սիրոյ եւ Հոգեբանական օրէնքներու վրալ, որոնք անջնջելի զգագումներ են մարդկային սրտին կառչած ։ Քմալքը, տգիտութիւնը,, չարակամութիւնն ու իմաստակութիւնն են որ կը ճգնին վարագուրել այս ճշմարտութիւնները։ Որդիական բնածին զգացումները , Հասարակաց կարծիքը, դարերու գաղափարը, օրէնսդիր եւ կրօնի հիմնադիրներ շարունակ շեշտած են այս կէտը ու ան հրամայական եղանակաւ։ Մենք ալ այն համոզումը ունինք Թէ զաւակներ անկախ չեն րնտանեկան յարկին մէջ եւ արդարութիւնն ու ընկերական շահը կը պահանջեն որ զաւակներ իրենց յարաբերական պարտքը կատարեն գիտակցօրէն։ Զաւակաց առաջին պարտաւորութիւնն է "-----<u>։</u> »-----րե--- հեղինակութիւնները, որոնք յարգանը

կը պահանջեն, այսինքն պէտք է պատկառիլ անոնցվէ ու յարգել զանոնք, որովհետեւ մեզմէ մեծ են ու մեր ծնողքն են։

Որդիական յարգանքը շատ մը ձեւերով ու բազում պարագաներով կ'արտայայտուի։ Զաւակ մը իր յարգանքը յայտնելու է իր նիստ ու կացին եւ շարժուձեւերուն մէջ։ Երբ հայրիկն ու մայրիկը դռնէն ներս մտնէ, ոտքի ելլելու է լրջօրէն։ Անոր ներկայուԹեան տանը բարձրագոյն բազմոցը

<u>ደሀՒሀዛሀ8 ጣጀቦsኮዶ ሀቡ ԾՆՈՂՍ</u>

Նստելու չէ, ոչ ա՝ անպատկառ ձեւ առնելու է։ Քաղաքավար ըլլալու է։ Քիչ անգամ խօսելու է եւ իր կարգին միայն։ Խօսքեր ընդմիջել, առանց մտածելու խոշոր խոշոր ջարդել, անհամ ու անձոռնի կատակ, շաղակրատուԹիւն, անպատշաձ լեզու արգելուած են։ Պէտք է քաղաքավարական բանաձեւերով լեզու շարժել ժպտուն դիմօք, պատկառանքով, համեստ ձեւի մը տակ գաղափար արտայայտել, աւելի լսել քան հրամայել։ «Հայրի՛կ, հրամմեցէք, պատրաստ եմ,» բառերը բնաւ բերնէ չձգել։

Ակնարկուած յարգանքները գրեԹէ ամենուն ծանօԹ են ։ Սակայն յարգանք մը կայ, որ քիչ անգամ նկատի կ'առնուի եւ այն ծնողաց է-----երն մատուցուած յարգանքն է ։ Զաւակ մը պէտք չէ որ խծբծէ իր հօր կարծիքները, համոզում-ներն ու հաւատքը ։ Ամէն մարդու կարծիքն ու հաւատքը տեսակ մը նուիրականուԹիւն ունի, տեսակ մը անձնական սեփականուԹիւն է, որուն հետ ԹեԹեւօրէն վարուելու չենք ։

Մանաւանդ ծնողը ինքզինքնին սաստիկ վիրաւորուած կը զգան, երբ բուն իսկ իրենց զաւակները ԹեԹեւօրէն, հեգնօրէն եւ քննադատօրէն կը խօսին իրենց պաշտած հաւատալիքներուն նկատմամբ։ Ասոր ենԹակայ են Թերուս զաւակներ, որոնք դպրոց կր յաճախեն եւ օրէ օր նոր հայ-

t

եացքներ կ'ունենան բնուԹեան, մարդկուԹեան, քաղաքակրԹուԹեան եւ կրօնի վրայ։ Երբ կր տեսնեն Թէ իրենց ծնողաց Հայեացքները Ադամական են, գիտական իրողուԹեանց , կրօնական ճշմարտու-Թեանց Հակրնդդէմ՝ տեսակ մր սրտմտութիւն կր զգան , ինքզինքնին ձշմարտութեան ջատագով կր Համարին, իրենց քաջութիւնը կր բռնէ, մնափա~ ռութիւնը կը շոյուի ու կը սկսին հրամայական լեզուով մը ժխտել նախապաշարումները։ Այս խնդիր-Ները վէճ կ'րլլան ու օրերով կը վրդովեն ընտանեկան երջանկութիւնը։ Զաւակունը գիտական ճշմարտութեանց կոթնած՝ իրենց խօսքը՝ բնաւ ետ չեն առներ եւ ծնողը իրենց պաշտած հաւատալիը~ Ներուն յարած , իրենց ծնողական փորձառուԹեան, հեղինակութեան , խելքի հասունութեան , տարիքի ամրոցին եւ Հասարակաց կարծիքին յենլով՝ կր Հակառակին իրենց գաւկի Նորելուկ գաղափար~ Ներուն ու զանոնք Հերետիկոսական մակդիրով կր մկրտեն ։ Զաւկի մը չվայլեր այս հակաճառու~ Թիւնը. հին գանկերու մէջ գիտական ու կրօնական նոր գաղափարներ մտցնելու փորձր անօգուտ է, մանաւանդ ծնոդը իրենց պատուղյն չեն ձգեր իրենց Համոզումը փոխել եւ իրենց զաւկին գաղափարը ընդունիլ ։ Երբ վէճը կրօնական է , խղճի բռնաբարում, սրբապղծութիւն կը զգան։ Գիտու-Թիւն ծախելու չենք մեր ծնողաց ։ Պառաւ մամեր

ې

այս պատճառաւ շատ չարչարանք կր քաշեն իրենց ուսումնական չարաձձի պարոնիկներուն ձեռքէն։ Այս կարգի դէպքեր կը մատնեն տղուն խակ կրը~ ԹուԹիւնն ու Հում խորհողուԹիւնը ։ Զաւկի մր պարտքն է՝ ամենուն ներկայուԹեան պատուել իր ծնողքը, յարգանօք խօսիլ անոնց վրայ, Թէեւ անոնք ընկերական բարձր դիրք չունենան կամ Հասարակ անհատներ նկատուին ընդհանուրին կողմէ : Հորը հասարակը կրկը . հայրը միշտ վսեմու-Թիւն մը ունի զաւկին համար։ Զաւակը, ընկերական որչափ բարձր դիրքերու այ համնի, որ~ չափ այ Հարուստ, կամ բարձր պաշտօնեայ մր րլյալ, պէտք չէ որ մոռնալ իր հայրը, ամչնայ անոր անունը տալ կամ՝ գոռոզութեամբ վարուի անոր հետ ։ Կան զաւակներ , ապերախտ , սնամէջ զաւակներ, որոնք ամօթ կրզգան պատուատը։ րնկերուԹեան մր մէջ րսել Թէ այնինչը իրենց Հայրն է․ երբ կը լսեն, կը շիկնին, կը քրտնին ու խօսքը անվիջապէս գոցելու փորձեր կ'ընեն։ Մարդ, որչափ ալ մեծնալ, Հօրմէն մեծ չկրնար րլլալ պատկառանքի մասին։ ՀանրապետուԹեան . Նախագահը պէտք է սիրով համբուրէ իր շինա~ կան հօրաջը, պսակաւոր գիտունը՝ իրտգէտ մօր ձեռքը, ու միլիոնատէրը իր չքաւոր ծնողաց առջեւ ոտքի ելլելու է։ Հօր մր մատուցուելիք յարգանքները բնական, հրամայական ու յաւիտե֊

È

ŧ

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Նական են : Կեանքի ռեւէ պարագայ, ընկերական ռեւէ դիրք այս իրաւունքին չեն կրնար դպչիլ անձեռնմխելի իրաւունք մ'է այն : Զաւակ մը, Թէեւ իր դիրքը ծնող քէն չստանար, բայց անուղղակի անկէ կը ժառանգէ : ԺառանգականուԹեամբ իրեն կտակուած մտքի օժիտները եւ նկարագրի տրամադրուԹիւններն են որ զինք կարող կ'ընեն կեանքի վերելքը սլանալ : Այս փիլիսոփայական հիմին կռԹնած՝ բարձրացող զաւակը աւելի յարգելու է իր ծնողքը քան կեանքի ստորին խաւերուն մէջ դեգերող գաւակ մր։

Զաւակներ իրենց Հայրը պատուած կ'ըլլան, երբ կեանքի կարեւոր ձեռնարկ մը ընելու ատեն անոր խորհուրդ Հարցնեն։ Խորհուրդ Հարցնել՝ հօրը իմաստուԹիւնը խնկարկել է։ Արդէն Հայրեր իրենց խելքը տեսակ մը դեղփեան պատգամատեղի կը համարին ու կը պահանջեն գէԹ լռելեայն որ իրենց զաւակունք հոն դիմեն յաճախ։ Երբ տեսնեն Թէ զաւակներ իրենց խելքին ու փորձառուԹեան արժէք չեն տար մինչեւ իսկ ծանրակշիռ պարագաներու տակ, իրենց արժանապատուու-Թինը վիրաւորուած կը զգան եւ հոգիի մեծ անկումներ կ'ունենան, տրտմուԹիւնն ու Թախիծը զիրենք կը շրջապատէ։ Երբ զաւակ մը ինքնագլուխ՝ ամուսնուԹեան, պանդխտուԹեան կամ մեծ

7

and the second sec

<u>ደሀኮዚዛዚ</u> ማሀቦያኮቶ ሀቡ ԾՆՈՂՍ

նեղուի։ Թերեւս առարկուի Թէ Հայրեր իրենց հին գաղափարներով կամ յամառուԹեամբ շատ անգամ կը հակառակին տղոց մտածելու կերպին եւ անոնց նախաձեռնուԹեանը արգելք կ'ըլլան։ Այս պարագային տղան քաղաքավաբուԹեամբ կրնայ Թուել զինք այդ ձեռնարկները ընելու համոզող բանաւոր փաստերը, անոնցմէ յառաջ գալիք հաւանական օգուտները կամ հօրը առաջարկուԹենէն հետեւելիք վնասները։ ԵԹէ հայրը նորէն պնդէ, այն ատեն չափահաս տղան ինքնիշխան ըլլալով իրաւունք ունի իր ուզած եղանակովը գործելու առանց մեղանչած ըլլալու որդիական պարտաւորուԹեանց դէմ՝։

Զաւակներ փափկանկատուԹեամբ յուզելու չեն իրենց ծնողաց անցելոյն տկար կողմերը, տխուր յուշերը, անոնց անձարակուԹիւնը, աղքատու-Թիւնը, բարոյական անկումները։ Պէտք չէ որ իրենց խելքն ու դիրքը, ազդեցուԹիւնն ու հարըստուԹիւնը զուգակշռեն իրենց ծնողաց հետ։ Ասոնք անտանելի հեգնանքներ են, որոնց եւ ոչ մէկ հայր կրնայ դիմանալ։ Թերեւս հօրդ պարագաները զինք հազիւ այդ աստիճանին կրցած են հասցնել, քանի որ դուն աւելի լաւ պայմաններու տակ ստեղծուած ըլլալով կրցած ես ներկայ փայլուն դիրքին հասնիլ։ Զաւակներ զգոյշ ըլլալու են իրենց հօր խրատ տալէ, այս կարգի ընթացք մր շատ պաղ կ'իյ-

նայ։ Հօրը խելք ու խրատ տալ կամ յիմարու-Թեան եւ կամ չափազանց յաւակնուԹեան նշան է. երկուքն ալ հաւասարապէս պարսաւելի են։ Հայր մը տղէն դժուարաւ ԹելադրուԹիւններ կ'ընդունի, ուր մնաց խրատներ։

Զաւակ մը Հօրը մեծ յարգանք մատուցած կ'ըլլայ, երբ անոր նիւթական պարտքերը սիրայօժար կը վճարէ՝ ամէն կարգի տաժանք եւ զոհողութինն յանձն առնելով։ Այս կը ցուցնէ որդիական սէր ու հնազանդութինն։ Այս կարգի տղայ մը իր հօրը վարկը կը փրկէ՝ զայն անուանարկութենէ ազատելով։ Հայրը կը հպարտանայ իր տղուն վրայ, իր կեանքին մէջ ասկէ մեծագոյն քաջալերութինն չկրնար ընդունիլ, զաւակ մ'ալ ասկէ լաւագոյն շնորհակալութինն չկրնար յայտնել։ Հայրը իր բոլոր չարչարանքները փոխարինուած կը զգայ եւ գերեզմանին մէջ անվրդով կը պառկի առանց լսելու իր պարտապահանջներուն անէծքը։

Զաւակ մը իր ծնողքը անոնց մեռնելէն վերջն ալ կրնայ պատուել, երբ անոնց յիշատակը յաւերժացնելու միջոցներ կը խորհի։ Հօր մը անկենդան մարմնին տրուելիք յարգանչըը, յուղարկաւորական պարտուպատշաճ կարգադրուԹիննը, դամբանը, գերեզմանաքարը կամ արձանագրուԹինն մը անպայման պահանջներ են։ Պէտք եղած արցունքը, սուգր, լրջուԹինը նուիրուելու է ծնողաց

-1

<u> ደሀՒሀ4ሀ8 ጣሀՐՏԻՔ ሀቡ ԾՆՈՂՍ</u>

մահուան առԹիւ։ Այս կարգի բնածին ու ընկերային էԴէ+ԻԴներ արհամարհող մէկը իր հայրը վերջին ծայր անպատուած կ'ըլլայ։ Ծնողաց յիշատակը կրնայ անմահանալ, երբ անոր անունով դպրոց մը, եկեղեցի մը, հիւանդանոց մը կառուցուի։ Այդ կարգի ծնողաց յիշատակը կրկին օրհնեալ է, կ'օրհնուի ու կ'օրհնէ։ Հօրը կենսագրականը գրել կամ անոր անուան երկ մը ձօնել՝ տարբեր տեսակ **Պ**արգանգներ են քաղաքակիրԹ երկիրներու յատուկ։

Հաղջապես Բենանին հայտունին հայտորն է հնազանդունինն Հնազանդունիննը գործնականացած սէրը ըլլալու է, մարմնացած յարգանքը ։ Երբ այդ յատկանիշները մերկանայ, մեքենական կ՛ըլլայ եւ բաղձացուած արդիննքը յառաջ չբերեր ։ Ծնողաց զոհողունինները չափով մը կրնան փոխարինուիլ երախտագէտ հնազանդունեամբ ։ Հնազանդ զաւակը ծնողաց ուրախունիննն ու պարծանքն է, անոնց ոսկորներուն ծուծը կը գիրցնէ ։ Մեր ընտանեկան յարկերուն մէջ պահանջուած հնազանդունիննը քիչ կը գտնուի ։ Շրններու վրայ շրջող բազմատեսակ անէծքները , յիշոցները կը ցուցնեն նել հնազանդունիննը իր բացակայունեամբը կը փայլի ։

հատարեալ ՀնազանդուԹիւնը անմիջական կ'ըլ լայ։ Կան տղայք որ մասնաւոր ըմբոստուԹիւն

չունին, բայց իրենց Հրամայուած գործերը կամ ծանօԹ պարտքերը կը ձգձգեն, իրենց քմայքը կը կատարեն, խաղը կը խաղան եւ ուզած ատեննին միայն պահանջուած իննդիրքը կը կատարեն։ Մայրը կը սրտնեղի ու կ՛անիծէ իրենց անհոգուԹիւնը։ Այս հնագանդուԹիւնը ախտաւոր զոհ մ՚է։

ՀնազանդուԹիւնը սիրայօժար ըլլալու է։ Դրժկամակութեամբ կատարուած գործ մր ծեծի վա֊ խէն՝ լաւ նշան չէ։ Ժպտուն, Յիրալիր հնազանդութիւնը միայն համակրանք եւ ցնծութիւն կր ստեղծէ ծնողաց սրտին մէջ։ Այս կարգի գաւակ-Ներ միայն գօրաւոր բռունգը ու Հաստատ գաւազան ունեցող ծնողաց կը հնազանդին։ Երբ հայրիկը բացակայ է ու մայրիկը տկար կամ պառանոր խօսքերը կը ծաղրեն, բնաւ կարեւոιшδ΄ րութիւն չեն տար։ Հնազանդ տղան կամ աղջիկը իր պարտքերուն կըգիտակցի, իր պարտուց շրըջանակը կըգծէ, եւ չսպասեր որ՝ միշտ վերնա~ գոյն Հրաման մր իր ականջին Թմբուկը ծակէ։ Ինը լռիկ, մնջիկ, անդադար իր պարտըերը կր կատարէ եւ դժուարին պարագաներու կամ կնձռոտ խնդիրներու մէջ միայն հարցումներ կ'ուղղէ իր ծնողաց։ Այս տեսակ գիտակցօրէն, լռիկ, դրու-Թենական կերպով կատարուած պարտքերը սքանչելի արդիւնը կ՝ունենան Թէ ծնողաց սրտին եւ Թէ զաւակաց Նկարագրին վրալ։

<u> ደሀՒሀዛሀ</u>Ց ጣሀቦՏԻՔ ሀቡ ԾՆՈՂՍ

ՀնազանդուԹիւնը շահախնդիր ոգւով ըլլալու չէ, այլ՝ երախտագիտուԹեամբ։ Տղայք կան որ մասնաւոր վճարով կամ անուշեղէնի մը փոխարէն տնական ծառայուԹիւն մը կը մատուցանեն, եւ լուսամիտ կարծուած մարդիկ ալ կան որ ջատագով կը կանգնին այս գաղափարին՝ փաստաբանելով Թէ տղուն մէջ արդիւնքի եւ պատճառի, աշխատու-Թեան եւ վարձատրուԹեան, արժանիքի եւ գնահատումի սկզբունքները կը ներարկուին։ Անդին չեն խորհիր Թէ երախտագիտուԹեան եւ զոհողուԹեան, համակրուԹեան ու սիրոյ երկնային զգացումները կը չորնան մանկան սրտին մէջ եւ ապագայ երիտասարդը հաշուողական մեքենայ մը կը դառնայ, որուն մտքէն բնաւ չանցնիր մարդոց ծառայելու փափաքը առանց մասնաւոր դրական, ճոխ վարձատրուԹեան։

Ըստ իս, լաւ է որ տղայ մը անհնազանդ ըլլայ քան վարձկանի հնազանդուԹինը ունենայ։ Անհնազանդը օր մը կրնայ սԹափիլ, բայց վարձկանը իր վարդապետուԹեան կռԹնած բնաւ պիտի չոԹափի։ ՀնազանդուԹեան մը, որուն մէջ որդիական երախտագիտուԹեան տարրը չկայ, սպասաւորի հնազանդուԹեան կարգը կ'իջնէ։ ՀնազանդուԹեան մէջ մանանայի համ տուող տարրը երախտագիտուԹինն է. առանց անոր ի՞նչ կ'արժեն մանկան մը չնչին ծառայուԹինները։

Կան անհնազանդ զաւակներ, որ իրենց ծնող-

քէն տարապայման զոհողութիւն կրպահանջեն առանց անոնց նիւթական ու բարոյական ոյժը Նկատի առնելու։ Ու երբ անոնք սրտի ցաւով կր ստիպուին մերժել իրենց խնդիրքը, տղայք կ'անսաստեն ու իրենց պահանջը աւելի վճռական ու Հրամալական ձեւ կ'առնէ, երբենն սպառնալիքի կը յանգի։ Այս ծայրագոյն կոպտութին է։ Տղայք կան որ Նոր ձեռք մը զգեստ կրպահանջեն ամե-Նէն փայլուն ու սուղ կերպասէն բլլալու պայմա-Նաւ, քանի որ իրենց Հայրը Հազիւ կրնայ օրապահիկը ճարել ու կապոյտ կտաւ հագցնել։ Արդէն Հայր մը, եթե կրնալ, իր զաւակը կոմսի պէս կը պտրտցնէ։ Զաւկին անպատեհ պահանջը խո֊ րապէս կր խոցէ հօր սիրտր ու ճակատագրին հեգ-ՆուԹիւնները կը լիշեցնէ։ Տղալը ալ կան որ բարձրագոյն գոլէճ ու համալսարանական ընթագը կը պահանջեն, երբ ծնողը անկարող են։ Եթէ հայրը կարող է ու զաւակը տաղանդաւոր, բնաւ բան պիտի չըսէի իր հարցապնդումներուն մինչեւ որ Κορη μόδη συωμη εωίως ιωθηγη.

Մէկ պարագայ կ'արդարացնէ տղուն անհնազանդուԹիւնը — հօրը ծանր եւ վնասակար վէկ հիւանդուԹիւնը Ղամ բարոյական մոլուԹիւնները, որով կրօնի եւ ընկերուԹեան օրինաց հակառակ պահանջումներ կրնայ ընել։ ԱնհնազանդուԹիւնը այս մասին առաքինուԹիւն է։

<u> ደሀኮሀዛሀ8 ጣሀቦՏኮዶ ሀቡ ԾՆՈՂሀ</u>

Ել-ի--լի---թի---։ Գործնական երախտագիունքիւսը զաւկի մը երրորդ պարտքն է։ Երախտագիտութիւնը զգացում մ՝է, որ ամենէն շատ մշակուելու է ընտանիքի մէջ։ Ապերախտը վատե~ րուն վատն է, մանաւանդ երբ զաւակ մ՝է։ Ապերախտին սիրտր անապատ մ՝է․ առաջինուԹիւնը չկրնար բողբոջիլ Հոն։ Որդիական երախտագիտութիւնը կրնայ լայտնուիլ դրամական օգնու– Թեամբ։ Երբ զաւակը ծնողքէն, կամ լաւ եւս է րսել ծնողական յարկէն, կը բաժնուի, այնպէս կը խորհի Թէ որդիական պարտականուԹիւններէն ա՛լ պրծաւ։ Այս սխայ եւ մոլորական վարդապետու-Թիւն մըն է։ Զաւկի մը պարտքը շէնքին հետ կապ~ ուած չէ, այլ Հօրը իր վրայ շռայլած գուրգուրանքէն կ'արտադրի։ Զաւակ մր, ուր ալ րլլալ, իր վրայէն չկրնար քերել այս պարտքը։ Հօր մր պէտք է օգնել, երբ ՆիւԹական անձուկ պարագաներու տակ կը ճնշուի։ Այս օգնուԹիւնը քա֊ ղաքավար եւ կարելի եղածին չափ հոգեբանական օրէնքներու համաձայն ըլլալու է։ Մասնաւոր նազանքով, խրոխտաբար եւ խոժոռութեամբ ընելու չէ։ ՇնորՀըի ձեւով ընելու չէ, այլ ակնածանօք, խոնարհութեամբ եւ սիրայօժար։ Եւ իրաւամբ Հայրեր իրաւունք ունին իրենց զաւակաց վրայ այն անհուն զոհողութեանց փոխարէն զոր տարի-Ներով վատնած են։

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Արեւմտեան ոճով հօրմէն բաժնուիլը տեսակ ապերախտութիւն է մեր միջավայրին մէջ. វិក մեր բարքերը եւ ՆիւԹական պարագաները չեն Թուլատրեր։ Հայր մր իր բոլոր ունեցածը, Նիւ-Թական ու բարոյական ոյժը կը վատնէ՝ իր գա~ ւակները մեծցնելու, այնպէս որ սովորաբար իր ծերուԹեան կամ ծայրագոյն չափահասուԹեան տարիներուն մէջ ո՛չ միսին մէջ կորով, ո՛չ այքսակին մէջ դրամ կր մնալ։ Ինքնահոգութեան բոլոր պայմաններէն կրգրկուի։ ԵԹէ չափահաս տղալըն ալ չօգնեն անկէ բաժնուելով, բոլորովին կոլքի կեանքի պայքարին մէջ ու իր վերջին օրերը մտմտուքով, անէծքով, արցունքով ու Հառաչանքով անցնելու կը դատապարտուի։ Արեւմուտքի ավէն բարքեր անխտիր որդեգրելու չենք, այլ խո-Հական ընտրուԹեամբ։ Մեր բնատոհմիկ ու լաւ յատկանիշները պահելու ենք, մինչեւ որ մենք ալ զարգացումի Նոյն աստիճանին համնելով՝ ինքնաբերաբար Նոր դրութիւններ որդեգրենը։

ԱպերախտուԹինը ուրիշ ձեւի մը տակ ալ կը ներկայանայ — լքել ծնողքը եւ հեռու երկիր երԹալ։ Երբ տղայ մը ուրիշ եղբայրներ ալ ունի, որոնք բաւական մեծցած են ու կրնան ծնողաց նեցուկ րլլալ, ներելի է որ ընտանեկան յարկէն բացակայի եւ օտար երկինքի տակ իր բաղդը փնտռէ։ Բայց երբ տանր մէկ հատիկն է, իրմէն

<u> ደሀՒሀዛሀ8 ጣሀቦՏԻՔ ሀቡ ԾՆՈՂՍ</u>

կախուած է ընտանիքին նիւթական բարօրութինը եւ բարոյական աջակցութինը։ Տեսակ մը ծնողասպանութինն է յամառ ինքնահաւանութեամբ զանոնք դրան ետին թողուլ եւ փախչիլ։ Խնդիրը փափուկ ու բարդ է իրաւ, բայց ուղիղ դատողութինը եւ խելքով չափաւորուած սէրը կրնան ոսկեղէն միջինը գտնել։

ŝ

Պանդուխտ զաւակ մը մոռնալու չէ իր տունը, այլ կանոնաւորապէս նամակակցելու է, իր սէրն ու կարօտը յայտնելու է իբը զաւակ, իր մխի-Թարականներն ու քաջալերականները կարդալու է որ ծնողը բաժանումի ցաւին դիմանան ։ Ցուցնե**ι** ու է Թէ, Թէեւ աչ pէ հեռի, բայց սրտով մօտ է ու տուն վերադառնայու ջանադիր ։ Պարբերական րնծաներ ու դրամական կանոնաւոր օգնուԹիւն աւելի դրական միջոցներ են մեղմելու պանդխտու~ Թեան ցաւերը եւ ուրախացնելու ծնող ըր։ Երախտագէտ զաւակը աշխարհի որ անկիւնն ալ ըլլալ, ի՞նչ տաժանելի պարագաներու տակ ալ, միջո~ ցով մը իր սէրը կը յայտնէ, հարազատ զաւկի մը Հարազատ պարտքը Նկատելով զայն։ Զաւակ մը իր երախտագիտուԹիւնը կրնալ լայտնել բացա~ սապէս՝ զգուշանալով անպատուաբեր ընթացքէ։ Զեղիս, ծոյլ, ԹեԹեւաբարոլ, անառակ տղան էն սոսկալի ապերախտն է, ծնողաց սրտին ան~ ջնջելի տաղ մ՚է ան, Հրդեհ մը որ շարունակ կը

303 - Con-ort 4 + pro- -- ++ +

129

լափէ անոնց զգացումները, կը խամրէ անոնց յոյսերը, կը պղտորէ անոնց մտածումները եւ անուանարկուԹեան մուրը կը քսէ անոնց ճակտին։ Ծնողաց անունը վատաՀամբաւող զաւակ մը ոճրագործ է, չարագոյն ոճրագործը։ Զաւակ մը իննայելու է իր ծնողաց պատուոյն ու մանաւանդ իր լրջաբարոյուԹեամբը, յառաջդիմական ոգւովը, անարատ կենցաղոմն ու բաթեկիրԹ յարաբերու-Թեամբը ընտանիքին պարծանաց առարկան ըլլալու է։

ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ՈՒ ՔՐՈՋԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ I3I

ተ

ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ՈՒ ՔՐՈՋԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

ԸՆտանեկան յարկի յարաբերուԹեանց ուրիշ մէկ խումբը կը կազմեն եղբայրական, քրոջական, եղբայր–քրոջական յարաբերուԹինւք, որոնք յարաբերուԹեանց ամենէն անուշն են, որովհետեւ հաւասարուԹեան գետնին վրայ կ'ըլլան եւ յարաբերողք կեանքի անգիտակից, երջանկաւէտ օրերը կը վայելեն։ Եղբայրազուրկ, քրոջազուրկ ըլլալ՝ դժբաղդ ըլլալ է։

տորէ զգացումները ։ Երբեմն քաղաքավարութիւնը Հնազանդութեամբ կը յայտնուի․ Հնազանդութիւնը գործնական քաղաքավարութիւն է։ Առանց չէլ--սիրալիր յարաբերութիւն *\$\$\$11,000 :* Մարդեր սխալական ըլլալով թերութիւն կ'ունե-Նան , մանաւանդ մանկիկներ՝ քանի որ Հասուն դատողութիւն չունին եւ ծնողական գուրգուրանաց տակ մեծցած են, բնական է որ խիստ համար-Հակ վերաբերուին իրենց եղբայրներուն հետ։ Այս ամէն ԹերուԹիւնները ներողամտութեամբ փակելու է, որովհետեւ անձնական հաշիւն ու նկատումը քինախնդրութիւն կը շինէ, եւ երբ քէնը մտնէ ընտանեկան սեմէն ներս, ընտանիքը իր երկնային անուշութիւնները կը կորսնցնէ , դրախտի Հանգամանքներէն կը մերկանալ ու կ'րլլալ վէճի, կռիւի եւ կեղծիքի վայր մը։ Հարազատ Ներողութիւնը միայն կրնայ ստեղծել եղբայրական սի~ րայիր ու քրոջական անուշ յարաբերութիւնները։ Սիրայիբ յաբաբերուԹեան ուրիշ մէկ հատկանիշն է քին վրայ ժպիտ, աչքերուն մէջ սիրոյ բոց, լեզուին վրայ մեղմութիւն, խօսուածքին մէջ փափ~ կանկատութիւն , ընթացքին մէջ խոնարհութիւն , սրտին մէջ սէր եւ ընդհանուր յարաբերութեանց մէջ բարասորելու դաղցրութիւնը անչուշտ կ՝արտափայլի , խոհեմութեան կ'առաջնորդէ, խոնար-

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՈՒ ՔՐՈՋԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ 138

հուԹիւնը իր խարիսխն է ու ընտանուԹիւնը իր մեԹոտը: Երբ վերապահուԹիւնը սկսի, իշխանական հովերը սկսին ծաւալ գտնել սրտի մը մէջ, բնականաբար հրամայականուԹեան ոգին կը շեշտուի: Ուր որ հրամայականուԹիւն կայ, անջատումներ եւ կարգեր կը շինուին, ու ասոնց իբր արդիւնք քաղցրուԹիւնը կը բացակայի: Եղբայրական ու քրոջական վերապահուԹիւն այդ կեանքին մահը կը նշանակէ։ ԸնտանուԹիւնը քաղցրուԹեան յարակից է։ Ամէն դիրք, տիտղոս, պաշտօնականուԹիւն դադրելու են եղբայրական ու քրոջական ըմբունումին առջեւ։ ԵղբայրուԹեան գացումը տիրող սկզբունքը ըլլալու է։

Ընտանեկան յարկը ընկերական կեանքի նախապատրաստական ձիւղն է, արդարուԹիւն ու Համերաշխ գործակցուԹիւն սիրելու տեղը ։ Տուներ կան, ուր երէց եղբայրներ կամ մարժնով ուժեղներ փոքրիկները կը ծեծեն ու չարաչար կը գործածեն ։ Մանաւանդ քոյրեր ինչեր կը քաշեն իրենց անգուԹ ու չարաձձի եղբարց ձեռքէն ։ Քրոջ Հետ այս կերպով վարուող մը, երբ օր մը ընկերուԹեան անդամ ըլլայ, առանց խղձաՀարուԹեան ուրիշին պիտի վնասէ ։ Քոյրը ծեծողը օր մր կինն այ կր ծեծէ ։

•

Ո՜րչափ անուշ բան է քոյր մը ունենալը․ան գԹոյ Հրեշտակն է, քաղցրուԹեան մարմնացում, Համակ սէր ու ժպիտ, ազնուուԹեան, մեղմու-Թեան, ՀնաղանդուԹեան, զոՀողուԹեան տիպար մը։ Իր եղբօր Համար Հոգի կու տայ, անոր ծառայուԹիւն մատուցանել իր մեծագոյն Հաձոյքն է։ Մինչեւ իսկ իր իրաւունքը պաշտպանել չՀամարձակիր, կը շիկնի, քաղցրուԹեան, փափկուԹեան Հմայքը ունի։ Ա՜խ, անգուԹ եղբայրներ, ինտո՞ր կը Համարձակիք զայն ծեծել, խոշտանգել, անոր աչքերուն մէջ արցունք, սրտին մէջ կսկիծ շինել։ Ան արդէն Հիւր մ՚է ձեր տան մէջ, ու օր մը պիտի բաժնուի այրած սրտի աւերակ յիշատակներով։ Համակ գորովով, անձնուիրուԹեամբ սիրեցէք ձեր քոյրերը ու անոնց սիրոյն արժանի եղէք։

Երբ Հայրը կը մեռնի , կը ծերանայ կամ մաս-

ՅՐԱԿԱՆ ՈՒ ՔՐՈՋԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ 135

Նաւոր դժբաղդուԹեանց Հանդիպելով չկրնար իր պարտքերը կատարել, մեծ եղբօր կամ եղբարգ ուսին վրայ կը ծանրանայ հօր դերը ստանձնելու անխուսափելի Հարկը։ Ա՛լ այս կարգի եղբայր մր մոռնալու է իր անձնական շահերը, ուրանալու է իբ վսեմ իտէալները , զատուելու է իրեն սիրելի Հաճոլքներէն եւ ամբողջ ֆիզիքական ព្យប័រ ៣៥ իմացական կորովը կեդրոնացնելու է տան երջան~ կութեան վրայ։ Պէտք է սիրայօժար ընտանիքին Դեցո-կն ու Դահատակն թլլայ եւ բնութեան ու բազդին իր վրայ դրած ծանր ու անուշ պարտքերը Հաւատարմաբար կատարէ։ Պէտը չէ որ տունէն բաժնուի կամ գաղթէ։ 8որչափ ժամանակ եղբայրները անկախ ապրելու չափ դրամ ու անհատականութիւն չունին, այս կարգի ընթացք մր ոճրագործութիւն է, Նուաստութիւն ։ Պէտքը կր պահանջէ անձր զոհել ընտանիքին ներկայ ու ապագայ բարօրուԹեան , իր եղբայրներու ապա~ գան նախատեսել եւ ապահովել, եղբարց հարկ եղած դաստիարակութիւնը եւ լարմար եղած առ֊ հեստը, գործը, գրամագյուխը ապահովել։ Եղբայը մը իր քոյրերուն համաբ յարմար ընկերը գտնելու ջանադիր րլլալով՝ փառաւոր կերպով ամումնացնելու է, անշուշտ անոնց այ հարկեղած կրԹուԹիւսը գանց չընելով ։ Այս տեսակ եղբայը մը իրաւ որ փրկիչ–հրեշտակ մ՛է, ընտանիքին նա-

ԸՆՏԱՆԻՔԻ՝ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

խախնամուԹիւնը, իր եղբարց սրտին մէջ օրՀնեալ յիշատակ մը պիտի Թողու, ժողովուրդին ՀամակրուԹիւնը վայելէ, իր հոգւոյն մէջ երջանկուԹեան մշտաբուղխ աղբիւը մը ունենայ եւ Աստուծոյ յաւիտենական պսակին արժանանայ։

Հօրը ողջ եղած ատենն այ մեծ եղբայրներ դարձեալ Հսկելու են փոքրներու բարոյականին վրայ։ Ո՛ւր որ հօրը ձեռքը չհամնիր, աչքը չտես-**Ներ, մեծ եղբօրը կրնայ։ Գործերով ծանրաբեռ**-Նած, տարիներու ճնշումին տակ իր կորովը կորմնցնող Հայր մր ժամանակ ու Համբերանք չունի իր տղուն նկարագիրը վերլուծելու, անոր բարոյական կեանքովը Հետաքրքրուելու , բայց մեծ եղբայրը կընալ ։ Մեծ եղբայրը կընայ իրազեկ ըլլալ փռքը եղբարց կեանքին , անոնց դպրոցին ու փողոցին մէջ բռնած դիրքին, մոլուԹիւններուն ու ասոնց Համեմատ պատշաճ լանդիմանուԹիւնը, ծեծը, խրատը, քաջալերուԹիւնը կամ վարձատրուԹիւնը տալ։ Հօրմէ հզօր եղբայրներ կան․ այս ազդեցուԹիւնը բարիին գործածելու են։ Ընտանիքի հիմնաքարը զոհողուԹիւնն է, գայԹակղուԹեան քարն ալ անձ~ Նական նկատումները։ Իւրաքանչիւր եղբայր իր վաստակը բերելու է տան գանձարանը ու անկէ հա~ ւասարապէս մատակարարուելու է։ ԵԹէ Հաշիւ մտնէ, եղբայրական սիրալի յարաբերուԹիւնները կը խզին ու մեքենական միութիւնը կը յաջորդէ։

ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ՈՒ ՔՐՈՋԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ 137

Եղբայրներ ուրիշ ծանր պարտաւորութիւն մ՝ալ ունին ։ Երբ անակնկալ դժբաղդութիւն մր կամ մահը իրենց եղբայրը կ'առնէ կը տանի, ու անոր կինն ու զաւակները բաղդին սոսկալի ճի~ րաններուն տակ բզքտուելու կը դատապարտուին, պէտք է գանոնք հոգալ նիւթապէս ու բարոյա~ կան խնամակալուԹեան տակ առնել, ພົນງກເງທ կարելի աստիճանով մը ։ Եղբայրական սէրը, գերդաստանին պատիւր, բախտի զոհերուն լուռ աղերսը, խիղճը, վեհանձնուԹեան ու գութի վսեմ <u> ներշունչները , Հասարակաց կարծիքը , Աստուած</u> միաձայն կը պահանջեն որ եղբայրական այս գո-Հողութիւնն ալ մարմին առնէ։ Իրաւ, դժուար է երկու ընտանիք միասին հոգալ, բայց ի՞նչ արժէք ունի կեանքը առանց զոհողութեան ։ Կեանքը արցունքի ձոր մ՚է, առաքինութինը անոր վրայ ծախող ժպիտն է, զայն անուշգնող մանանան։

ዋሆ

ՀԱՐՍ ՈՒ ԿԵՍՈՒՐ

Հարսի ու կեսրոջ յարաբերուԹիւնները ըն~ տանեկան ամենէն Թնձկոտ յարաբերուԹիւններէն են ։ Մայրերու սրտին ամենէն անուշ երազն է իրենց զաւակը ամումնացած տեսնել , ընտանիքը ծաղկած ։ Կ՛ուգեն աչքով տեմնել իրենց գերդաս~ տանին ծլարձակումը ։ Մայրական ուրիշ մնափառութիւններէն է Հարտի կեսուր րլյալ, մէկը NL-Նենալ իրենց գերիշխանուԹեան տակ, որը իրենց քմայքը պատգամիպէս կատարէ։ Ինչոր կրզգայ զօրավար մը երբ կը մտածէ թե վաշտեր կախուած են իր շրթունքեն, նոյնը կը զգայ հարս-Ներու տիրապետ կեսուր մր ։ Չկայ պատմութեան մէջ էջ մը այնչափ սրտաճմյիկ որչափ հարմներու քաշած դարաւոր լռիկ մարտիրոսուԹիւնները։ Մայրը քիչ շատ հեղինակութիւն ունի տան մէջ Հարսը բնա՜ւ։ Ան գերիի պէս չարաչար pwjg աշխատելու է , արձանացած՝ տարիներով լռելու է՝ քողքը երեսին քաշելու է։ Ուայս բոլորը, որով-Հետեւ կեսրոջ մր բռնապետութեանը տակն է։ Նա զոհ գացած է դարաւոր Նախապաշարումնե֊ րու. Նախապաշարումներ՝ որոնք կեսուրներու պահանջկոտութեամբը կը յաւերժանան ։ Անշուշտ լուսաւորեալ քաղաքներու մէջ քիչ շատ այդ բար~ բարոսուԹիւնները վերցած են , բայց գաւառներու մէջ կը տիրեն իրենց բոլոր դյժովը ։ Հարմներու մեծամամնութիւնը կ'ատեն իրենց կեսուրները։ Այս առածի կարգ անցած իրողութիւն մ՚է եւ ինորովհետեւ կեսուրներու հրամայականո-իկանը sñi, "_{"աբապայման} է։ Առաջին ԹեյադրուԹիւնս որ պիտի

ZUPU NE 460AFP

ընէի կեսուրներու, էր չափաւորել իրենց ՀրամամայականուԹիւնը ։ Իրաւ , հարմները լեզու չունին բայց զգացում ունին․ իրաւ, պաշտպան չունին, բայց իրենց մէջ ատելուԹևան ու վրէժինդրու~ Թեան ոգին կը մնուցուի, ու օր մր կը ժայթերն իրենց կուրծքին լավան ։ Կեսուրը Հարսին Աստուածը չէ, իր իրաւունքն ու հեղինակութիւնը չափ ու սահման ունի, ու պէտը չէ որ իր իշխանու-Թիւնը չարաչար գործածէ։ Պէտը չէ որ շարու-Նակ կնձռոտ ժանգոտ դէմքով երեւնայ Հարսներու ՆերկայուԹեան , Հրամայական շեշտն ու Թոյնը իր լեգուին վրայ գտնուելու չէ, հրէշի մը տպաւորութիւնը ձգելու չէ իր հարսներուն վրայ։ Ժրպտուն դէմքով, քաղցը լեզուով ու խոհեմ քաղա~ քականուԹեամբ Հրաման ընելու ու պարտքը յի֊ շեցնելու է։ Համբերող րլլալու է, տիրելու արուեստին վէջ պաղ արիւնը կարեւոր տարը մ՚՛է։ Հարմներ աստիճանաբար կ'ումնին իրենց նոր տան կարգուսարքը, կը ճանչնան նոր ընտանեաց ան~ դամներուն բնոյԹր ու գանոնք գոհացնելու եղա-Նակները։ Հարսր աստիճանաբար կը մոռնայ իր ύορ տան բարքերն ու սովորոյԹները եւ կր սկսի պատշահիլ Նոբ տան ։ Աստիճանաբար կր սկսի եփել , Թափել , կարել , կարկտել , աստիճանա~ բար իր փափաքները փոխել, զուարձուԹիւններէ հեռանալ, միտքը տան բարօրուԹեան վրայ կեդ֊

րոնացնել կամ լրջօրէն մտածել իր պարտուց ու տան բարօրուԹեան նկատմամբ։ Կեսուր մը ասոնք գիտնալով չափազանց պահանջկոտ ըլլալու չէ. ամէն բանի համար խօսելու, բարկանալու, անիծելու չէ։ Այս կարգի ընԹացք մը յիմարուԹինս կը ցուցնէ ու յաջող ելք չունենար։ Մինչեւ որ հարմներ իրենց կեսուրը չսիրեն, սիրով պիտի չաշխատին, մինչեւ որ սիրով չաշխատին, իրենց խելքը պիտի չգործածեն. առանց խելքի գործածուԹեան բարեկարգուԹիւն յառաջ չկընար գալ տան մէջ։ Թէ հարմներու իրաւունքը ու Թէ քաղաքականուԹիւնը կը պահանջեն որ հրամայականուԹիւնր չափաւոր ու ժպտուն րլլայ։

Վտանգ կայ որ կեսուրը զրկէ Հարմները, որովՀետեւ իրենց իրաւունքը չեն կրնար պաշտպանել անողոք նախապաշարումներու կամ սուտ ՀամեստուԹեան պատճառաւ։ Տեղեր կան որ ընտանեաց անդամները խորտիկ կը ճաշեն եւ աւելցուքն ու չոր Հացը Հարտներուն բաժին կը Թողուն։ Պտուղները ու քաղցրեղէնները անտնց Համար չեն, Հիւրեր Հարմներէ աւելի պատիւ ունին։ ԶուարճուԹեանց առԹիւ պէտք չէ որ ընկերոյԹներու մէջ գտնուին, այլ վեր ու վար, Հոս Հոն, խոհանոցը, մառանը կամ լաւ մը քող քուած պատին մէկ անկիւնը սքլին։ Անոր Համար խօսիլ, խնդալ, երգել, կարդալ վճռապէս արգելուած են։

ZUPU NE 460NEP.

Հարսին գործն է լուռ համակերպուԹիւն ու անդուլ աշխատուԹիւն ։ Ան գիշեր ցորեկ քրտնելու է, երեկոյին ամենէն ուշ քնանալու է եւ առաւօտ ամենէն շուտ արԹննալու է ։ Իրեն տկարու-Թիւնը , չափաւոր հիւանդուԹիւնը բնաւ արգելք չէ որ դարձեալ աշխատի ։ Հանգիստ , վայելք , քուն , խօսակցուԹիւն , զուարճուԹիւն եւ ուրիշ կազդուրումներ արգելուած են անոր համար , որովհետեւ հարս է ։ Մինչեւ իսկ եկեղեցի պէտք չէ որ երԹայ , տարին երկու անգամ բաւ կը նկատուի ։

Հարսը ընտանեաց մէկ անդամը նկատելու է, որ Հաւասար իրաւունքներ ունի ։ ՆիւԹական ու բարոյական վայելքներէ իր բաժինն ունենալու է ։ Ան մեքենայ չէ, այլ մարդ, եւ ուստի Թողելու է որ մարդու պէս խօսի, խորհի, զուարճանայ եւ իր իրաւունքները վայելէ ։ Հարս մը կեանքին բարիքներէն զրկել լեզու չունենալուն համար՝ ոճրագործուԹիւն է ։ Այս ոճրագործուԹեան մասնակից կրնայ ըլլալ այրն ալ, բայց պարագլուխը կեսուրն է ։

Կեսրոջ ուրիշ մէկ պարտականուԹիննն է Հարսին կամ Հարմներուն վրայ ընդՀանուր տեսչու-Թիւն ։ ԱնՀոգ կեսուրներ կան որ բնաւ լուր չու-Նին տան անցուդարձէն ։ Անոնք անկիւն մը բազմած կը Հրամայեն կամ տունէ տուն Թափառելով կը շաղփաղփեն ։ Անոնք կը պարծին իրենց ազա-

տամտութեան եւ սիրոյն վրայ թէ ամէն բան հարս-Ներուն լանձնած են, անոնը վստահած, որպէս զի սորվին եւ գործի մէջ Թրծուին ։ Իրօք պէտք է վստահիլ անոնց, զանոնք աստիճանաբար գործի վարժեցնել, բայց ամէն բան անոնց քմայքին յանձնելու չէ։ Կեսուրը արծուի աչքերով Հսկելու է Հարմները, անոնց գործին Թերի կողվերը Նշմարելով մատնանիշ ընելու է մինչեւ որ կարե~ Նան անկախօրէն գործել ։ Հարմներու խելքին, փորձառութեանը եւ արժանիքին նայելով անոր գործերը բաժնելու է, որ իւրաքանչիւրը hp պարտքը ճանչնալ եւ տան գործերը երեսի վրալ չմնան , որպէս զի շաղակրատուԹիւն , վէճ ու քի-ՆախնդրուԹիւն չմտնեն ընտանիքի խաղաղ եր~ դիքին տակ ։ Կեսուրը անուղղակի հետաքրքրուելու է Հարմներու խօսակցութեան . Թողելու չէ որ անոնք աս ան խծբծեն, ԹեԹեւ ու անբարոյիկ ՆիւԹերու վրայ խօսին, ընտանիքին Թշուառու-Թիւնը սարքող մտածումներ մնուցանեն։ Մեղմ, իմաստուն ու կտրուկ վարչութիւն մր այս անտե֊ ղութեանց առաջըը կ'առնէ։ Այսպէս ընտանիքը խառնարան մր չդառնար ու եղբայրներ չենբաժ~ Նուիր իրարմէ ու ընտանիքէն ։ Աչալուրջ, դիւա-Նագէտ , քաղցրաբարոյ՝ կեսուր մր անգին գանձ է, տանը պատկառելի Թագուհին, ոսկեղէն սիւնը։ Կեսուր մը նկատողութեան առնելու է Հար-

ZUPU NE 460AEP

սին հոգեբանական օրէնքները ։ Պէտը չէ պա-Αωύγε Αωριώτορε πρ. βρεία μετα τργορεία ωψηρία կեանքը, պէտք չէ արգիլել անոնց հագուիլ, սըգուիլ ու զուարճաբանել, այն բաները որ կեանքի՝ Համենն ու Հմայքը կը շինեն ։ Հարմներու Համար բնական ու Հրապուրիչ են այս կարգի բաներ։ Պէտք է մեղմով անգնիլ այս կարգի բաներու վրալէն ու գանոնը անուղղակի ըաջալերել ։ Ա~ սոնք այն կարգի րոպէներ են որ կեանքի մէջ մասնաւոր շրջաններու յատուկ են ։ Մեր հոգին մասնաւոր ատեններ կեանքի այդ խանդավառու֊ Թիւնները կ'ունենալ։ Այդ րոպէները ոսկի Թի-Թեռնիկներ են որ կուգան ու կ'անգնին եւ կր ստիպեն վեզ որ իրենց Հետեւինը ։ Մանաւանդ Հարսները ասոր մէջ կ'ըմբռնեն կեանքը, անոր մէջ կրզգան փառքը ։ Տան չորս պատերուն մէջ բանտուած՝ անով ազատ շունչ մը կ'առնեն։ Մարդուն ըմբռնումը աստիճանաբար լրջանայու է կեանքի նկատմամբ, կեանքի ունայնութեան սեւ ճիւաղը պէտք չէ որ բունէ մանկամարդ հարսի մր ուղեղին մէջ․ կեանքի դաւաճանուԹիւն է այդ ընԹացքը։ Կեսուրը զրկելու չէ հարսները իրենց իղձերու յագեցումէն ։ Այս կարգի պարագաներու Նկատառումը աւելի կը շեշտէ քան կը տկարացնէ կեսրոջ հեղինակութիւնը, հարմներու մէջ սէր մր կըստեղծէ դէպի իրենց կեսուրը ու գիտէք Թէ

143.

սէրը Տնազանդութեան ամենէն բնական ու հուժկու խթանն է։

Գեսուր մր պահելու է հարսին արժանապա_{-} տուութինը եւ անոր թերութիննները Հրապարա֊ կելու չէ։ Այդ զգացումը խոցոտելու չէ կոշտ խօսքերով , անպատշաճ մակդիրներով , լիշոցքով, անկծքով, հայհոյութիննով, արհամարհոտ վերաբերումով կամ ծեծով ։ Կեսուրներ կան որ իրենց լեզուն կը սրեն իրենց Հարմներուն վրայ ы 5пգիին ժահրդ անոնդ վրայ կրթեափեն։ Հարսը քանի որ լռելու եւ մինչեւ իսկ ժպտելու դատապարտուած է, ո՞վ գիտէ հոգիին մէջ ի՞նչ ցունցեր կ'ունենալ, ի՞նչ հառաչներ եւ կրծող մտածումներ ։ Ի՞նչ բողոքներ, ատելուԹինններ կը Ննջեն իր լանջքին տակ, որոնք օր մր իրենց յուզումէն պիտի պայԹին պատռելու Համեստու~ Թեան քողքը եւ գործնական բողոքի մր ձեփն տակ քարկոծելու կեսուրը ։ Եթժէ տղան ալ մօր นกกุชีน กู่เพเกป จุฒภูม อุฒิรพเธกุธฐ , พู้เ ธกุธเพนพյեցէք՝ ի՞նչ լուռ մարտիրոսուԹիւններ կ'ունենայ Հարսը իր ծաղիկ Հասակին մէջ, ու ի՞նչ դառն կ՝րլյայ անոր րմպել ամուսնական կեանքի գա֊ ւաթր։ Եթե Հարսը Համեստ այ է ու կր Համակերպի լռելու սովորուԹեան, ի՞նչ արիւնալից վէրքեր կրբացուին իր սրտին մէջ, ի՞նչ սոսկայի դժոխք կը բռնկի իր կուրծքին տակ ։ Հարսի մր

ZUPU NH 460AHP

ԹերուԹիւններուն մունետիկն ըլլալ բնաւ չվայելեր կեսրոջ մր։ Հարս մը, որչափ ալ գէջ ըլլայ, սադայէլի մը չափ իսկ գարշելի , պէտք չէ որ անոր անունը նախատուի տնէն դուրս կեսրոջ կողմէ։ Այդ կարգի հրապարակում մր աւելի կր ստորնացնէ ու չարութեան գրգիռ կ'րլյալ։ Հարսին սէրը կրպաղեցնէ ընտանիքին նկատմամբ, անոր մէջ վրէժիննդրութեան ոգին կըստեղծէ, րնտանեաց պատիւր կ'արատաւորէ, անօգուտ է, ւմիայն դատարկապորտներու խօսելու նիւթ Бι Թշնավեաց հաճոյք կրպատճառէ։ Ընտանիքը փոքրիկ պետութիւն մ՛է։ Անոր ոեւ է մէկ գաղտ-Նիքը, մամնաւորապէս տկարութիւնը հրապա~ րակուելու չէ։ ԼոուԹիւնը երբեմն, փրկուԹիւն է։ Կեսուրները զգո՜յշ ըլլալու են անուանարկելէ, անարգելէ Հարսին գերդաստանը կամ անոր անդամները։ Պէտք չէ ծաղրանօք խօսիլ անոնց Թերութիւններուն վրայ կամ հեգնել անոնց առաւե~ լուԹիւնները ։ Պէտը չէ անիծել , հայհոյել հարսին մայրը, աղջկան Հարկաւոր կրթութիւնը տուած չրլլալուն համար։ Հարսը, թեեւ մօր տնէն բաժ-Նուած է անդառնալի վճիռով մր, թէեւ անոնց ՀարստուԹիւնն ու վարկը իրեն ուղղակի օգուտ չունին, Թէեւ իր բաղդը նոր տան մը հետ կրց~ ուած է, սակայն եթել ազնիւ, համեստ է, չկրը-Նար մոռնալ իր ծնողքը, իր սրտէն փրցնել ա-

Նոնց յիշատակը։ Իր սրտին վէջ սրբազան ու անմոռաց լիշատակներ ծրարուած են հայրիկի, մայրիկի, եղբօր, քրոջ. դեռ անոնց սէրը կր յուզեն զինք։ Իր Հոգին երկու բեւեռ ունի․ Հին ու նոր գերդաստանը երկուքն այ զինք կրքար~ շեն, երկուքն ալ կր պաշտէ, չկրնար դիմանալ որ իր առջեւր անպատուուին անոնք։ Հարսիմը գերդաստանին տրուած յարգանքը կ'ուրախացնէ զայն, աւելի նոր սէր մր կըստեղծէ դէպի նոր րնտանիքը ։ Հարսին ազգականները պատուասի~ րելը , հիւրասիրելը ցնծուԹեան աղբիւր մ՚է հարսին համար։ Ատով կը ցուցուի Թէ հարսը ար~ ժանիք ու դիրք գրաւած է նոր տան մէջ, եւ կրցած է այնչափ մը սիրելի րլլալ որ լարգանքի ու սիրոյ ցոլացումներ կ'ուղարկէ իր գերդաստա-Նին ալ։ Ծնողը իրենց զաւկին այս կարգի յաջողուԹեան վրայ կ'ուրախանան ու պարծանքի պատճառ կ'ունենան դրացիներու առջեւ։

Կեսուրը Հարսը քաջալերելու ու անոր սէրը գրաւելու Համար յարմար առԹիւ անոր արժա-Նիքը երեւան բերելու է, անոր բարեմասնուԹիւն-Ները գովելու է։ Հարսը ասով կ'ոգեւորի, կ'օրհնէ իր բաղդը եւ աւելի եռանդով կ'աշխատի իրեն շռայլուած գովեստին ու սիրոյն արժանի ըլլալ։ Ինքն ալ փոխադարձաբար յարմար առԹիւ կը գովէ կեսուրր եւ կրգուրգուրայ տան անդամնե-

2400 NF 460NF P

րուն վրայ։ Կեսուրներ կը խորհին Թէ հարսները պարսաւելով՝ իրենց հեղինակուԹիւնը, իմաստու-Թիւնը ծախած կ'ըլլան, քանի որ հակառակը կ'ապացուցանեն․ կը ցուցնեն Թէ հարս մը կրԹելու ճարտարուԹիւնը, շահելու խոհեմուԹիւնը չունին։

Կեսուրներ պարտին գաւակգիլ իրենց Հարմներու մարմնաւոր ու հոգեկան դժբաղդութեանց պարագային։ Զանոնը սիրելու են սիրական զաւկի պէս, չէ Թէ օտարի պէս։ Պէտք է հետաքրքրին անոնց ցաւերը գիտնալ, շահագրգռին անոնց ուրախուԹեանգ։ Ամէն պարագայի տակ միեւնոյն պահանջը ընելու չէ։ Երբ մարմնոյ մասնաւոր ցա~ ւեր, հոգիի մասնաւոր վիշտեր ունին, պէտը չէ զանոնք խոցոտել կամ անտարբերուԹեամբ վարուիլ ։ Ցաւերու ատեն ցուցուած ներողուԹիւնն ու սէրը Հարսին մէջ Համակրութիւն կր շինէ։ Պէտք չէ հեգնել հարսին ցաւերը, գանոնք աւելորդ ու երեւակայական համարիլ։ Պէտք չէ որ կեսուրը իր անցեալ քաջուԹիւնը, գործունէուԹիւնն ու իմաստութիւնը զուգակշռէ Հարսին երկչոտութեան , ծուլուԹեան ու լիմարուԹեան հետ եւ անով պարծի։ Այսպիսի ընթացք մը Հարսին զայրոյթը կըգրգռէ ու հակառակ ազդեցութիւն կ'րնէ։ Այսպիսի ըն-Թացք մը բանաւոր ալ չէ, որովհետեւ մարմինի ոյժերը, կրթութեան եղանակը, խառնուածքները, դիտակէտները կը տարբերին ու նոյն կարգի պա~

հանջ մը չենք կընար ընել տարբեր անհատներէ։

Երբ Հարսին ազգականներէն մին կը մեռնի, պէտք է անոր հետ սուգ բռնել, անոր սուգը չծաղրել, անոր զգացումներուն հետ չխաղալ։ Երբ Հարսին էրիկը գործով ուրիշ տեղ գացած է ու յաջող վիճակ մը չունի, պէտք չէ առիԹէն օգուտ քաղելով երեսին զարնել, չարչարել՝ պաշտպան մը չունենալուն համար։ Անոր ցաւը արդէն հերիք է, անոր կսկիծը արդէն կը մորմոքէ իր սիրտը։ Բաժանումը, լքումը տեսակ մը երկրաւոր դժոխքներ են իրեն համար։ Այդ դժոխային հուրը արծարծելու չէ՝ անոր վրայ իւղ Թափելով, ընդհակառակն տառապանըները մեղմելու է։

ԵԹէ օր մը ճակատագիրը իր անողղը վճիոովը հարսին էրիկը առնէ տանի եւ մանկամարդ հասակին մէջ սեւերու ու սուգի մէջ Թաղուած այրի մը շինէ, այն ատեն ո՞րչափ փափկանկատուԹիւն, սէր պէտք է այդ Թախիծը մեղմելու համար։ Երբ հարսին սիրտը բզիկ բզիկ ըլլայ, երկինք իր լոյսերը զլանայ անոր, ապագան իր սեփ սեւ ամպերողն ու շանԹերողն կախուի անոր գլխին, երբ անոր Թեւն ու Թիկունքը կոտրի, ապրիլը անոր համար տեսակ մը նահատակու-Թիւն դառնայ ու ԹշուառուԹիւնը բիւրեղանայ անոր կհանքին մէջ, այն ատեն ո՞րչափ հանճար պէտք է գայն մխիԹարելու ու կեանքր անոր սիր-

ZUPU NE 4EUNEP

ցնելու։ Մանալանդ երբ քանի մր փոքր մանկիկ~ Ներ իր քղանցքէն կր կախուին ու իրմէ օգնու~ Թիւն, սէր, ապագայ երջանկուԹիւն կր մուրան, կեսուրներ ու տագը ի՞նչպիսի քաջալերիչ շեշտերով մօտենալու են անոր, գայն իրենց քաղցր խնամակալութեան տակ առնելով։ Տուներ կան որ, երբ Հարսին էրիկը մեռնի ու սուգի ձեւակերպութիւնները անցնին, կը սկսին աստիճանաբար լքել, իրենց զաւկին մահուան պատճառը Հարսը Համարիլ ու գայն վռնտել որ երթայ իր գլխին ճարը նայի, ստրկութեամբ, մուրացկանու~ Թեամբ զաւակներուն հացր ճարէ։ Ո՞հ, գԹացէք այդ զոհերուն, ո՛վ կեսուրներ ու տագրեր. կից մ՝ալ դուք մի զարնէք որ անյուսուԹեան ան~ դունդը գլորին։ Մտիկ ըրէք ձեր ազնիւ ԹելադրուԹեանց․ ձերն են անոնք, ձեր ընտանեաց ան֊ դամները, ձեր Հարազատ եղբայրներուն դժբաղդ այրիները ։ Դժոխքին Հուրը, երկնից շանԹերը օր մը ձեզմէ անոնց վրէժը պիտի լուծեն։ Ձեր մե~ ռած եղբօր ոգին, Հարսին ուրուականը ու ձեր խիղճը երեք կատաղի հրէշներ պիտի դառնան անվերջ յաւիտենականութեան մր մէջ կրծելու ձեր լեարդը։ ԵԹէ ձեր սրբազան պարտքը հաւատարմաբար կատարելով բաղդին ոճիրը քաւէք, երջանկութիւնը ձեր սրտին բաժինը պիտի ըլլալ, երախտագիտուԹեան, սիրոլ խունկը պիտի

խնկարկուի ձեր կեանքին ու լիշատակին։ այ իրենց պարտքերը ունին։ Հարսին վրայ փայ~ լելիք առաջին յատկանիշր համեստութիւնն ու ակնածանքն է։ Համեստ հարս մր քիչ անգամ կը զուզադրէ իր ունեզած կամ կարծեզեայ առաւելուԹիւնները ։ Իր արդուզարդը ցուցադրելու մաս~ Նաւոր պատեհուԹիւն չփնտռեր։ Լեզուն վանգակը կը դնէ, քիչ անգամ կը խօսի բայց ժպտուն ու քաղաքավար։ Շաղակրատութենէ, զրպարտու-Թենէ կը զգուշանալ։ Իր քայուածքին, նիստու~ կացին , դիմական արտայայտուԹեան մէջ մանիշակին շնորդքը կը փայլի։ Կեսուրի հովեր առնող իր դիրքէն ու տարիքէն վեր գործերու ձեռնարկող Հարս մը անշնորՀք կըկոչուի եւ անախորժ տպա~ ւորութիւն կրթողու ։ Հարսը յարգելու է կեսուր, կեսրայր, տագր. եւ այս յարգանքը արտայայտե~ լու է անոնց ծառայելու յօժարութեամբ։ Հարս մր, որչափ ալ Հարուստ, տոհմիկ, հանճարեղ եւ ուսեալ ըլլալ, նորէն պէտք է պատկառի ընտանեաց անդամներէն, Թէեւ անոնք խեղճուկ, գեղջուկ, տգիտուկ ոլյան ։ Հարս ոլյալը Նոր շրջավայը փոխադրուիլ, նոր պարտքեր ստանձնել է։ Հարս մր մոռնալու է իր մայրենի տան մէջ ունեցած ձոխութիւնը, դիրքն ու Համարձակութիւնը ։ Ամուս-Նացող աղջիկը կերպով մբ կր մեռնի մայրենի տան

ZUPU NE 460NEP

Համար։ Հարմներ կան որ անտանելի կրդառնան այս ճշմարտուԹիւնը անտեսելով, ատելի ալ կ'րլլան, որովհետեւ ակնածու հարս մր փոխադարձ հա~ մակրանը կրշահի եւ անդորը կեանը մը կ'ապրի։ Հարս մը Հնազանդ ըլլալու է։ Անհնազանդ Հարս մը մեղրով չուտուիր։ Իր խելքին Համսող ինքնահաւան հարսը, քմայքը շոյող ծոյլ հարսը, կեսուրը արհամարհող դէգ հարսը իր կոչումին բնաւ գիտակցութիւն չունի ։ Ընտանիքի մէջ կե~ սուրն է հեղինակութիւն․ տարիքը, դիրքը, փոր~ ձառութիւնը անոր կու տան իրաւունքը ։ Հարմներ Հնազանդելու են կեսրոջ Հրամանին։ Հակառակ պարագային աղմուկ, վէճ կը ծագի եւ տունը խառնարան կր դառնալ։ Հնազանդ Հարսը գո~ վեստ կը շահի եւ իր հռչակը համայնքին մէջ կր տարածուի։ Հնազանդ հարմներ դէգ կեսուր-Ներու բնուԹիւնն իսկ կրնան մեղմել, ամէն կարգի միջավայրի մէջ կրնան ապրիլ, խառ-Նուածքներու յարմարիլ, ամենէն սեւ ձակատա~ գիրներու համակերպիլ ու ընտանիքը փրկել։ Ան-Հնազանդ Հարմներ կռիւ կը ցանեն , զաւակը ծնողքէն կը զատեն՝ անոր խելքը գլխէն գողնալով ու այսպէս ընտանիքի մը, Թերեւս գերդաստանի մը կորստեան պատճառ կ'ըլլան։ Հարսներ զգոյշըլլայու են իրարու հետ կռուելէ, իրենց պարտքն ու յարաբերական արժանիքը ճանչնալով ։ Գոր-

ծունէուԹիւն, տնտեսուԹիւն, տնաշինուԹիւն հար~ սի մը անհրաժեշտ յատկուԹիւններ են, որոնց արդէն ակնարկած եմ կնոջ մը յատկանիշները Թուած պահուս. հարկ չկայ կրկնումի։

Հարս մը՝ պէտք է գաղտնապահ րլլալ ։ Տան գաղտնիքները — ՆիւԹական խեղճուԹիւնն ու ճոխուԹիւնը, տնտեսական վիճակը, առեւտրական խօսակցութիւնները, մտերմական գրուցատրու-Թիւնները , ընտանեկան տռաքները — վերջապէս րնտանիքի լատուկ ռեւէ գաղտնիք րսելու չէ ռեւէ մէկի, ընտանիքի շահն՝ ու պատիւր իրը նկատելով ։ Այս մասին զանցառուԹիւն մր ընտանեկան պառակտումներու պատճառ կ'րլլայ։ Ընտանիքն ալ պետուԹեան նման ունի իր գաղտնիքները, որոնզվէ կախուած է իր յաջողութիւնը ։ Գաղտնիք~ Ները, ըլլան անհատական, ընտանեկան, պետական, կեանքի ամրոցներ են, որոնց գրաւումը իսկական մահ կը նշանակէ ։ Գաղտնապահութիւնը խիստ գովելի յատկանիշ մ՚է, քանի որ նախանձոտ , նենգամիտ աշխարհի մը մէջ ապրելու ճակատագրուած ենք։

Հարսի մը պարտքն է յարգել ամուսնին ազգականները, բարեկամներն ու հիւրերը, զանոնք ժպտուն դէմքով հիւրասիրել եւ հարկ եղած ծառայուԹիւնը մատուցանել սիրայօժար, մտերմօրէն յարաբերիլ անոնց հետ ։ Ասանկ հարս մը պարծանքի առարկայ է ։ Ազգականներ իրարու հետ

UUU, SUS, DEP, SUL, ENUBLD

գժտին ալ, Հարմներ պէտք չէ որ կուսակցական պայքար մղեն․ գժտուԹիւնը օր մը կը դադարի, ազգականներ կը Հաշտուին եւ Հարսը կ'ըլլայ տուժոզը։ Հարսը այս պարագաներու տակ չէզոք ու Հաշտարար դիրք մը բռնելու է․ վերապահու-Թիւնր յարմարագոյն քաղաքականուԹիւնն է։

Կնճիռ, բարկուԹիւն, գանգատ հարսի մը վրայ տեսնուելու չեն, գէշ կ'ազդեն։ Մելամաղձոտ մեկուսացումը, չափազանց վերապահումը խորԹ տպաւորուԹիւն կը Թողու։ ԸնտանուԹիւն, քաղցրուԹիւն, արագաշարժուԹիւն, ճարպիկուԹիւն, հնարագիտուԹիւն գողտրիկ յատկուԹիւններ են հարսի մը համար. մաքրուԹիւն, ճաշակ՝ գերագոյն զարդեր։ ՔրիստոնէուԹիւնը գերազանց առաքինուԹիւն մ'է, բարեպաշտուԹիւնը չքնաղ գոհար։

ዓዮ

ՄԱՄ, ՏԱՏ, ՆԵՐ, ՏԱԼ, ԵՒԱՑԼՆ

Ընտանեկան յարկը ուրիշ յարաբերուԹիւններ ալ ունի—մամ, տալ, ներ, երբեմն հօրաքոյր, մօրաքոյր նոյն յարկին տակ կ'ապրին։ Մամն ու

տատր տեսակ մը պահապան հրեշտակներ են, որ շարունակ կը դիտեն իրենց յոյսերուն ծլիլը, անմահութեան բողբոջիլը, իրենց գերդաստանի շառաւիղներուն ուռճազումը ։ Անոնք մէկ կողմէն գերեզմանին սարսուռովը կը համակուին եւ լա~ ւիտենական ձեռք մր կր նշմարեն իրենց գլխին վերեւ, եւ միւս կողմէն իրենց անմահութիւնը կր գուշակեն Թոռներու, Թոռնիկներու ստեղծումովը։ Մանկական յիշատակներու, անցեալի ուրախ եւ տրտում յուշերուն, մահու մտածումին եւ յոլսե~ րու մարմնացումի բովքին մէջ անորակելի կեանք մը կ'անցնեն։ Կեանքի փիլիսոփայութեան վե~՝ րահասու , ունայնուԹեան գիտակից , իրենց իղ~ ձերուն հետամտելու անգօր եւ կրծող փափաքնե~ րու գերի՝ տեսակ մը մելամաղձոտ դիւրագրգռու~ Թիւն կը ստանան , որ անհաճոյ երեւոյթ մր կը շինէ րնտանեկան լարկին տակ։ Շարունակ հիւանդոտ ու տկար գնդասեղի հարուածներ կու տան ընտանիքի երջանկութեան ։ Հին Հաւատալիքներու եւ սովորոյԹներու ջերմ՝ պաշտպան՝ հեգնանք մր ունին նոր րմբռնումներու դէմ ։ Հաճոլը վայելելու անկարող՝ կը նեղարտին հաճոլքի հետամտողներու։ Տարիքի, կորովի, գաղափարի հակադրուԹիւնը, իղձերու տարասեռուԹիւնը, անխուսափելի բաղխում մը կ'արտադրէ ընտանիքին մէջ։ Եթէ համակերպու-Թիւն չըլլայ, այդ բաղխումները սոսկալի կռիւUUU, SUS, VEP. SUL, ENUBLY

ներու, անվերջ վէճերու կը յանգին։ Քանի որ ծերուԹիւնը իր բոլոր յատկանիշերով անԹեքելի է, քանի որ մամերն ու պապերը բնական հեղինակուԹիւն ու պահանջ ունին երիտասարդներու վրայ, պէտք է որ վերջինները համակերպին՝ զոհելով իրենց իրաւունքներն ու գաղափարները։ Ցարգանքով ու գուրգուրանքով վարուին երկինքի այդ հիւրերուն, յաւիտենականուԹեան ճամբորդներուն հետ։ Անոնց ծերուԹեան Նեցուկ ըլլան ու երախտագիտական գործերով անուշցնեն անոնց դառն կեանքը։ Ծերուկ մը երեսի վրայ ձգել՝ ոճիր է։

Ծերուկ մամերն ու տատերն ալ կրնան իրենց գթոտ խանդաղատանքովը օրհնել ու փայփայել իրենց թոռնիկները, յոյսեր ներշնչել անոնց, անոնց ապագային վրայ խոստմնալից գուշակութիւններ ընել։ Կրնան փորձառութեան ոսկի ու փրկարար խրատներովը ուղղութիւն տալ իրենց զաւակներու կեանքին, զանոնք զգուշացնել կեանքի խաբուսիկ երեւոյթներէն, մնամէջ երազներէն ու ահռելի պատրանքներէն, կեանքի փիլիսոփայութեան յստակ տեսութիւնը կրնան տալ անոնց, զգուշացնել զանոնք մեղքի, հաճոյքի հրապոյրներէն եւ պարտականութեան ներշնչումովը մկըրտել իրենց զաւակները։ Կրնան ցաւերու, դժբախտութիւններու, անկումներու գեղագիրը տալ ու այսպէս բեւեռային աստղ մր րլլալ անոնց յիշո-

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ղուԹեան մէջ։ Ձիւնափայլ մօրուքի մը մազերուն վրայէն կաԹկԹող գոհար խրատները ամենէն քար սրտերն իսկ կրնան կակուղցնել եւ մոլի հոգիները ապաշխարուԹեան բերել։

Ծերուկներ ու մամեր կընան իրենց օգտակար խրատներուն հետ խառնել զուարձալի նորավէպեր, անցեալի հետաքրքրական յուշեր, կեանքի տռամներ, առակներ, առածներ, պատմուԹիւններ՝ համեմելու անոնց կեանքը։ Այսպիսի ծերուկ մը զուարԹ բնաւորուԹեան սատար կ՛ըլլայ։ ԶուարԹ մամին, ուրախ տատին Թոռնիկներն ալ այդ բնոյԹը կ՛ունենան։ Երիտասարդներու պարտքն է հաճոյքով ունկնդրել եւ աւելին խնդրել։

Երբ ծերուկներ ու մամեր տեսնեն Թէ իրենց վերջին օրերուն մէջ իսկ մեր համակրանքը կը գրաւեն իրենց փորձառուԹեամբն ու հանձարովը, աւելի քաջալերուած ու գոհ՝ կը սկսին հատիկ հատիկ քակել իրենց փորձառուԹեան ոսկի ծրարները եւ Թանկագին հնուԹիւններ երեւան հանել։ Ասոնք ալ իրենց դերն ունին ընտանեկան տնտեսուԹեան մէջ։ Անոնք աւելորդ կոճղեր չեն տան անկիւնը դրուած ։

Գալով Ներերու, տալերու, անոնց առաջին պարտքն է գիտակցիլ իրենց իրաւանց ու պարտուց։ Սխալ ըմբռնուած արժանիքները ու գործածուած հեղինակուԹիւնները ընտանեկան գըժտուԹեանց գետինը կը պատրաստեն։ Պէտք եղած

በՐԲԵՒԱՐԻՆ 🕚

փոխադարձ յարգանքներն ու զոհողուԹիւններն ինքնաբերաբար պիտի ըլլան եւ խաղաղուԹիւնը, երջանկուԹիւնը պիտի տիրեն ընտանիքին մէջ։

ዓታ

በቦԲԵՒԱՐԻՆ

Ընտանեկան կեանքի ուրիշ մէկ տխուր իրողուԹինն է որբեւարի ըլլալու խնդիրը։ Ճակատագիրը անհամ կատակներ ունի ու կեանքը ահռելի անակնկալներ։ Որբեւարի ըլլալ յուսազուրկ ըլլալ է, սիրազուրկ ըլլալ է, կեանքի պայքարին մէջ միայնակ արցունքը ափով ըմպել է, նիւԹական ու բարոյական զրկումներու ամենէն տաժանելիին դատապարտուիլ է։ Որբեւարի ըլլալ՝ առանց ղեկավարի, նաւուղիղի նաւարկել է։

Որբեւարիի մը առաջին պարտքն է քաջու-Թիւն, յանդգնուԹիւն եւ համբերուԹիւն կեանքի պայքաբին մէջ։ Որբեւարին պէտք չէ որ հառաչանքով անցնէ իր օրերը․ կեանքը ողբերգու-Թեանց համերգուԹիւնը ըլլալու չէ։ Իր սիրելի ամումնոյն պատշաճ յարգանքը տալէ վերջ պէտք է գօտէպնդի՝ կեանքի պայքարը մղելու ։ Մշտնջենդի սուգն ու արցունքը չեն կրնար ողոքել մահը եւ ոչ ալ օգուտ մը արտադրել ։ Անոնք աւելի կը Թշուառացնեն կեանքը, քրոնիկ ախտերու, մե~ լամաղձոտուԹեան ու երբեմն անձնասպանուԹեան կ՝առաջնորդեն ։ Որբեւարին քաջուԹեամբ ու կորովով կրնայ իր օրապահիկը շահիլ եւ մուրաց~ կանուԹեան ու ստրկուԹեան չդատապարտուիլ ։

Որբեւարին երկեակ պարտականութիւն ունի . պարտի զաւակաց Հայր ու մայր րլյալ միանգա~ մայն։ Մօր նման զանոնը սիրելու, խնաժելու է. Հօր նման անոնց նախախնամուԹիւնը րլլալու է ապրուստ ճարելու, կրԹելով ու արտաքին յար~ Հակումներու դէմ՝ պաշտպանելով զանոնը։ ħρ անձէն գրկելու է, անոնց պատարագ րլլալու է, աչքին լոյսը, մատներուն ոյժը, ուղեղին կորովը անոնը համար մաշեցնելով, եւ այս երկար տա~ րիներ մինչեւ որ անոնք բաւական մեծնան ու ինքզինքնին ճարճրկեն ։ Որբեւարին ասոր համար խոհես՝ ու խոնարհ րլլալու է, որպէս զի կարե-Նայ ազգականներու, բարեկամներու եւ բարերար-Ներու ՆիւԹական ու բարոյական աջակցուԹիւնը վայելել ։ Որբեւարիներ , որ հակառակ իրենց Թըշ~ ուառութեան, վէս ընթացք ու խայթիչ լեզու ու-Նին, բնականաբար ինքգինքնին ու զաւակները կը զրկեն օգնուԹենէ։ Մարդ դժբաղդուԹենէ գէԹ

ՍՊԱՍԱՒՈՐ, ՍՊԱՍՈՒՀԻ, ՀՈԳԵԶԱՒԱԿ

խոնարհուԹիւն ու խոհեմուԹիւն սորվելու է․ ասոնք են իր օժանդակները ։ Երախտագէտ որբեւարին Նոր բարիքներու ու անակնկալ աջակցուԹեանց կ՚արժանանայ եւ կերպով մը մխիԹարական կէտեր կ՚ունենայ իր լքումի դառն օրերուն մէջ ։

ዋጉ

ՍՊԱՍԱՒՈՐ, ՍՊԱՍՈՒՀԻ, ՀՈԳԵՉԱՒԱԿ՝

Հարուստ ու բարեկեցիկ տուներ ընդՀանրապէս կ'ունենան սպասաւոր, սպասուՀի, որոնք ընտանիքին անդամները կը կազմեն՝ իրենց ձակատագիրը անոնց Հետ կցուած ըլլալով ։ Քիչ սպասաւորներ իրենց տէրերէն եւ սպասուՀիներ իրենց տիրուՀիներէն գոՀ են ։ ԸնդՀանրապէս շրԹներնուն վրայ բողոք, սրտերնուն մէջ ատելուԹիւն ունին անոնց դէմ ։ Ասոր պատձառը այն է որ սպասաւոր ու սպասուՀի չէ Թէ բանական ու բարոյական արարած, այլ շաՀագործելի մարդամեքենայ կը նկատուին ։ Այս կարծիքը Հիմնովին սխալ է ։ Անոնք ունին անբռնաբարելի իրաւունքներ եւ չափաւորուԹեամբ գործածուելու են : Տանը բոլոր ծանրաբեռնուԹիւնը անոնց ուսին վրայ դնելու չէ . ջրկիրին , բեռկիրին եւ ուրիշ աշխատաւորներու գործերը անոնց ընել տալու չենք՝ քանի մը դահեկան խնայելու դիտումով : Արշալուսէն մինչեւ կէս գիշեր հեւ ի հեւ հոս հոն վազցնելու չենք , որովհետեւ իրենց իրաւունքը պաշտպանելու քաջուԹիւնը չունին եւ տունէն վուստուելու սարսափը խրտուիլակի պէս կը կանգնի անոնց առջեւ ։

Աշխատանքին չափաւոր ըլլալէն զատ վար~ ձատրուԹիւսը լեցուն րլլալու է։ Քիչ ուղղամիտ մարդեր կան որ իրենց ծառաները կրվարձատրեն, գրեթե Հրի կամ չնչին գումարով մը զա-Նոնք կրպահեն։ Կծծի վարձատրութիւն մր մե~ քենական Թելով կր կապէ սպասուհին ընտանիքին հետ, քանի որ ճոխ վարձատրուԹիւն մր քիմիապէս կրկապէ ու անոր բոլոր ոլժերը կրգրգռէ գործի։ Սպասաւորին վարձ քր ատենին եւ ամբող 9 տալու է։ Ցապադում եւ տարիներով գյանալ ան~ տանելի կեղեքում են։ Ընտանեազ անդամ նկա~ տելու է զայն, չէ Թէ օտար․ ընտանիքի բարիք~ ներէն ու զուարձուԹիւններէն զրկելու չէ։ ป๊шน~ Նաւոր խնձոլքներու, պտոյտներու, ընկերոլԹնե~ րու մամնակից ընելու է։ Սէրը սէր կը շահի եւ յարգանքով ու զոհողութեամբ կ'արտայայտուի։ Զրկուած սպասաւորները իրենց ճակատագրին դառ-

ՍՊԱՍԱՒՈՐ, ՍՊԱՍՈՒՀԻ, ՀՈԳԵԶԱՒԱԿ

սութինսը կը զգան խորապէս։ Անոնք արդէն անիծուած են ճակատագրէն պէտք է պարբերաբար երջանկացնել։ Տօներու եւ ուրիշ նշանակելի օրերու առԹիւ արժէքաւոր պարգեններ տալու է որ ուրախանան եւ աւելի ջերմ սիրով, հարազատ ընտանութեամբ վերաբերուին դէպ ի ընտանիքը։ Ընծայի դրութիննը իր հոգեբանական հիմը ունի եւ աւելի անկեղծ ու ուրախացուցիչ է, երբ տէրերէ ստորակարգեալներու կը տրուի քան հակադարձաբար։ Պարգեւը մոգիչ ոյժ մը ունի եւ գործունէութեան զսպանակ մ՝ է։

Պէտը է որ յարգուի սպասաւորներու եւ սպասուհիներու արժանապատուուԹինը։ Այս մասին դժնդակ տառապանքներու ենԹարկուած են անոնք. քիչեր աղնուուԹեամբ կը վարուին։ Մարդիկ ընդհանրապէս կը քծնին, կը շողոքորԹեն իրենցմէ մեծերուն առջեւ, եւ կը յոխորտան, կը բռնանան իրենցմէ խոնարհագոյն դասակարգերու վրայ կամ անոնց՝ որոնք կերպով մը իրենցմէ կախում ունին։ Պէտք չէ ստորնացուցիչ մակդիրներ տալ անոնց կամ կոշտ վարուիլ։ Անոնք ալ իրենց զգացումները ունին որ կը վիրաւորուին եւ իրենց գործը ալ կորովով չեն կատարեր։ Պայմանաժամին լրանալուն կը սպասեն։ Հոս հոն կ'անուանարկեն իրենց տէրը՝ անիծելով իրենց բաղդը։ Մարդու մր ճշմարիտ ազնուութինը ծառաներու,

սպասուհիներու հետ ունեցած վարմունքէն կը չափուի, որովհետեւ միայն այն ատենն է որ իր հո~ գիին բոլոր գոյները, սրտին յոյզերը եւ կամքին որակուԹիւսը արձակ համարձակ երեւան կու գան, Նկարագիրը իր իսկատիպ երանգներովը կ'արտա~ յայտուի։ Ճշմարիտ տէրն ու տիրուհին նկատո~ ղութեան կ'առնեն իրենը սպասաւորներու իմա~ ցական ու Հոգեկան կեանքն ալ։ Անոնց դիւրու~ Թիւններ կու տան որ օգտակար ընԹերցումներով՝ իրենց միտքը մշակեն, մտքի նուրբ հաճոլքներ վայելեն եւ իրենց տաղտկալի տաժանքներուն մէջ զուարճալի ժամեր ունենան, մտքի մշակութեամբ այնչափ մր բարձրանան որ կարենան ծառայու~ Թեան ստրկուԹենէն ազատիլ եւ աւելի դիւրին ու անկախ գործ մը ընել։ Թողելու է որ անոնք խղձի ազատուԹիւն վայելեն ու համարձակ պաշ~ տեն իրենց Աստուածը իրենց ըմբռնումով։ Թողելու է որ եկեղեցի լաճախեն, Թէեւ գործ այ ու-Նենան։ Սպասաւորներ ու սպասուհիներ կան որ ստիպուած են իրենց կրօնական զգացումները խորել, Հաւատայիքները ծայլել, որովհետեւ ան~ տարբեր, անկրօն տուներու մէջ կ'աշխատին ու անոնց ծաղրին ենթեակայ կ'րլլան։ Բնաւ Համակերպելու չէ այդ մասին, համարձակ յայտարարելու է Թէ կրօնն այ ծախուած չէ։

Սպասաւոր ու սպասուհի ալ իրենց փոխա~

ՍՊԱՍԱՒՈՐ, ՍՊԱՍՈՒՀԻ, ՀՈԳԵԶԱՒԱԿ

163

դարձ պարտքերն ունին դէպի իրենց տէրերն ու տիրուհիները ։ Իրենց առաջին պարտքը հասապար «արչեն է։ Առաջին պարծանքը նոյնն է։ Անհա սատարիմ տնտեսները, որչափ ալ խորամանկ ու ճարպիկ ըլլան, ուշ կամ շուտ կը նշմարուին եւ օր մը խայտառակուելով տնէն կը վռնտուին՝ իրենց դիրքը, պատիւը, ապագան վրայ տալով։ Հաւա տարիմ սպասուհին ամենէն կը փնտռուի լեցուն վարձատրութեամբ ։ Տնական ամէն կարգի գործ ու աւանդ կը յանձնուի անոր եւ օր մը ծառայու թենն, կը բարձրանայ ։

๗๓๛๏๛๛๛ฅ๚๛๛ ΠL վեղուաջան --չի-----լեի-ուրիշ կարեւոր լատկանիշներ են։ Արդէն այս կարգի անհատներ տան մէջ առնելուն նպատակը տանտիրոջ ու տիրուհւղն աշխատանքը ԹեԹեւցրնել է, եւ եթե ծույօրէն կը շաղփաղփեն, գործերը կը ձգձգեն եւ Հակառակ յորդորներու ու յանդիմանութեանց՝ իրենց ընթագքը չեն փոխեր, տան տէրը պիտի ստիպուի անոնց տեղ յարմարագոյն մը ընտրել։ Պահանջուած երրորդ բանն է +*++------ նչ----- Սպասաւորներ կան որ իրենց տիրոջ դրամը անխնայ կը շռայլեն․ կտորուանքներ բանի տեղ չեն դներ ու ընտանիքի պիւտճէին «պարտի»ի էջը կըծանրաբեռնեն։ Անշուշտ կը խորհին թե իրենց տիրոջ Հարստութիւնը անսպառ է եւ իրենք իբրեւ ծառայ իրաւունք ունին վայելելու։ Սպա-

ሮՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

սուհին ալ առտնին տնտեսուԹեան մէջ մեծ խնայուԹիւն կընայ ընել, եԹէ հոգածուԹեամբ վարուի իրեն յանձնուած բաներուն հետ եւ զանոնք իմաստուԹեամբ գործածէ։ Տան տնտեսականին նեցուկ, ինչպէս նաեւ ցեց տնտեսներ կան։

Գաղորհապանո-ըչ-որ փնտռուելիք ուրիշ կարեւոր յատկանիշ մ՚՚է։ Ամէն ընտանիքի մէջ ալ պարբերաբար խօսը, վէճ, կռիւ ու տռամներ կր պատահին ։ Ընտանիքներ կան որոնց ներքին կեանքը յուզումներու շարք մ՚է․ տան ծառային չվայելեր ասոնք հրապարակել, որովհետեւ ընտանիքի մր պատիւը անբռնաբարելի է։ Ընտանիքը գաղտնիք~ Ներ կ'ունենալ նաեւ ճամբորդուԹեան, պանդրխտութեան, նշանտուքի, ամուսնութեան, պարտքի, առնելիքի, ներքին հիւանդուԹեանց․ խնդիրներ՝ որոնց եւ ոչ մին արեւ տեսնելու է տան ծառանե~ րու լոյծ շրթունքներէն, որովհետեւ տխուր ու կործանիչ հետեւանքներ կ'ունենան եւ նորանոր փոր~ ձանքներ կրբերեն ընտանեաց։ Գաղտնապահու-Թիւնը իմաստուԹեան ու ՀամակրուԹեան նշան մ'է ծառային՝ համար, եւ զինք աւեյի սիրելի կ՛րնէ։ Սպասաւոր մր պէտք է համակրի ընտանեաց ցա~ ւերուն, ուրախակցի ցնծառիԹ պարագաներուն։ Չէ Թէ միայն մնաս հասցնելու չէ ընտանեաց պատուոյն, հապա զայն պաշտպանելու է լռու~ Թեամբ, լեզուով, ընԹացքով։ ԼռուԹեամբ կրնան

ՍՊԱՍԱԻՈՐ, ՍՊԱՍՈՒՀԻ, ՀՈԳԵԶԱԻԱԿ

պաշտպանել, երբ կը նեղուին իրենց տիրոջ նկատմամբ գէշ ակնարկուԹիւններ լսելէ։ Լեզուով կըրնան պաշտպանել, երբ կը յանդիմանեն զրպարտողները։ ԸնԹացքով կրնան պաշտպանել, երբ անբարոյացուցիչ գործերէ, անպարկեշտ ընկերներէ, վատահամբաւ վայրերէ զգուշանան եւ իրենց պարկեշտ նկարագրովը, առաքինի գործերովը փայլին իրենց շրջանակին մէջ։ Շատ անգամ տան մը ծառաները այդ ընտանիքի ներքին կեանքին չափանիշները նկատուած են։ Հետեւաբար զգուշուԹիւն պէտք է Թիւր ըմբռնումներու տեղի չտալու եւ պատիւ բերելու համար։

Ք------Հար---Շի--- ալ կը փնտռուի անոնց վրայ, յարգալիր ՇնԹացք Մը դէպ ի ընտանեաց ամենէն փոքր անդամները եւ քաղաքավար ըն-Թացք Մը ընտանեաց ազգականներուն, բարեկամներուն ու հիւրերուն հանդէպ։ Քաղաքավարու-Թիւնը համակրանք կը շահի եւ շնորհ ք կը դնէ նկարագրին վրայ։ Բարեկամներու ու հիւրերու ցուցուած յարգանքն ալ տան տիրոջ երեսը կը հերմկցնէ եւ պարծանքի առիթ Մը կ'ըլլայ։ Սպասաւորն ու սպասուհին նաեւ պէտք է ուշիմ, մտացի, ճարպիկ ըլլան, որ առանց մասնաւոր պատուէրներու կամ ԹելադրուԹեան, իրենք անձամբ իրենց անկախ դատումովը պարագաներէ օգուտ քաղեն եւ ամէն բան ճարտարուԹեամբ

կարգադրեն։ Այս գնահատելի յատկուԹիւն մ՚է, որ տիրոջ խորհելու եւ խօսելու աշխատանքը կը Թե-Թեւցնէ ու կը Թուլատրէ որ աւելի կարեւոր խընդիրներու վրայ մտածէ։

Հոգեզաւակ պահելը իր մէջ ազնուութեան, գութի ծայրագոյն աստիճանները ունի։ Կամաւոր գոհողութինն մ՛՛է, նախախնամութինն մր բաղդէն գրկուած եւ մարդերէ լ քուած որբուկներու։ Անոնք որ ճոխութեան հացր ունին եւ երկինք գիրենք զրկած է հրեշտակներ ունենալու բաղդէն, իրենդ րնտանեկան բոյնին մէջ կրնան պահել հոգեզաւակներ անոնցմով մխիթարուելու։ Բնական է որ Հոգեզաւակը զաւակի մը չափ չփակչի սրտերու, անոնը չափ զոհողութիւն չպահանջէ, բայց ջանա~ լու է զաւկի պէս սիրել։ Անոր լիշեցնելու չէ իր որբուԹիւնը, անոր մէջ կրելիք դառն ճակատա~ գիրը. գայն չարաչար աշխատցնելու չէ։ Հոգեզաւակը իր անձին մէջ նուիրականութիւն մը ունի. ան Աստուծոյ զաւակն է, անոր հետ վերջին ծայր փափկանկատութեամբ վերաբերուելու է։ Հոգեզաւակն ալ փոխադարձ պարտքեր ունի։ Ազնուու-Թիւն, խոնարհուԹիւն, փոխադարձ սէը, թժար ՀնազանդուԹիւն, երախտագէտ սիրտ ու կենցաղ որակելու են զինը, եւ մինչեւ խոր ծերուԹիւն իր բարերարներուն անունն ու յիշատակը պաշտումով արտասանելու է, իր սիրտր տաճար մր րլլայու է

ርህՏԱՆԵԿԱՆ **ԶՈՒԱՐՃՈՒ**ՔԻՒՆՔ ՈՒ ԵՐԵԿՈ8₽ՆԵՐ 167

խնկարկելու իր բարերարներուն անմահ յիշատա֊ կին։ Դէգ ու ապերախտ հոգեզաւակ մը անքա֊ ւելի ոճրագործ մ՚է, ու շատ մը բարերարներու ազնիւ զգացումները կը չորցնէ։ Երբ անձնուէր բա֊ րերար մը եւ երախտագէտ հոգեղաւակ մը զիրար կը գտնեն, իրաւ որ հրեշտակային օԹեւան մը կը դառնայ այն ընտանիքը, առաքինուԹեանց խորան մր, երջանկուԹեանց կայարան մր։



ሮՆՏԱՆԵԿԱՆ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՔ ՈՒ ԵՐԵԿՈՑԹՆԵՐ

Քանի որ ընտանիքը տեսակ մը ընկերուԹին է եւ մարդս չկրնար անընդհատ գործել, բնական է որ իր պարապոյ ժամերուն մէջ ուզէ ինքզինքը արտայայտել ու զբօսնուլ։ Ընտանեկան զբօսանք~ ներ ամենէն անուշն են ու բարոյական նշանա~ կուԹիւն կրնան ունենալ։ Անուշ են, որովհետեւ հահոյքը անհրաժեշտօրէն փոխադարձ է։ Բարո~ յական նշանակուԹիւն ունին, որովհետեւ այն տու~ ներ ուր զբօսանքը կը բացակայի՝ տեսակ մը ճգնա~ րաններ են , վանականի խուցեր՝ որոնց անդամները տխուր ու մելամաղձոտ բնութիւն մր կր ստանան, յարաբերական աշխարհին մէջ իսկ կը մեկուսա-ՆաՆ, կ'ատեՆ ընկերակցակաՆ կեաՆքը եւ մեՆա~ մոլութենք բռնուած լոռետեսութեան ու թշուառութեան կը յանգին։ Այս կարգի տան մր անդամները տունէն դուրս պիտի ուզեն փնտռել իրենց հաճոլքը, դուրսի մարդերուն հետ լարաբերական կապեր հաստատել եւ ընտանիքը՝ իբը՝ ճաշարան ու պանդոկ նկատել։ Եւ քանի որ տունէն դուրս փնտռուած հաճոլքները մարդս կ'առաջնո**րդեն** ծուլուԹեան, շուայտուԹեան, ԹուլամորԹ Նկա~ րագրի ու կենաց խորտակումին , ծնողաց պարտքն է տունը հրապուրիչ շինել՝, նորանոր զբօսանքներ Հայթնայթել, տանը պատերը եղ ու մեղը քսել որ րնտանիքի անդամները չսիրեն անկէ հեռանալ, ախորժով վերադառնան հոն եւ անվեց qpo~ սանքներու, բարձրագոյն հաճոլքներու ճաշակը առած՝ իրենց կեանքին մէջ ալ միայն այդ կարգի Հաճոլքներու Հետամտին։ Գինետունը, խաղատունը, հանրատունը անոնց համար արգիլեալ վայրեր րլլան ու ընտանիքը դրախտի մր Համթ տայ։ Լուսատրեալ կեդրոններու մէջ շատ մը միջոցներ ու դիւրուԹիւններ կան ընտանեկան յարկը գրաւիչ ընող։ Դժբաղդաբար մեր մէջ կը պակսին անոնք. բայց մենք ալ, եթե րմբռնենք խնդրոյն

ርՆՏԱՆԵԿԱՆ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՔ ՈՒ ԵՐԵԿՈՑԹՆԵՐ 16

կարեւորութիւնը եւ հաճինք քիչ մը զոհողութիւն յանձն առնել, կրնանը չափով մր յաջողիլ։ Արդէն մեր շրջավայրի զբօսարաններն այ եւրոպականներու չափ չեն մագնիսեր, հետեւաբար կեդ~ րոնաձիգ ոլժը մեծ ըլլալու չէ։ Անգամ մը իսպառ Դնջելու ենք վեր մտքէն սա գաղափարը Թէ ընտա-Դիքի մէջ լրջուԹիւնը բլլալու է տիրող կանոնը։ Թէ համեստուԹիւնը կըպահանջէ որ հարմները ւթօդ քուած համը դառնան, տղալը արձանագած ձեռք կապեն, կամ պատերուն անկիւնները գամ~ ուին, կիներ քիչ անգամ ընդմիջեն տան Հօր ողիմ~ պական պատգամները ու իրենց անձնական տե֊ սուԹիւնը արտայայտելու կոշտուԹիւնը ունենան։ Տունը սիրալիր յարաբերութեանը, Համարձակ վերաբերումներու վայր մը րլլայու է, հաճոլքը հոն է միայն ։ ԽօսակցուԹիւն , բանակռիւ , գաղափար-Ներու փոխանակուԹիւն, բնական երեւոյԹներու վրայ տեսուԹիւններ կամ ընկերային իրադարձու-Թիւններու վրայ ինքնատիպ Հայեացքներ գերա~ զանցօրէն հաճոյառիթ պատճառներ են։ Պահիկ մը մոռցնել կուտան ցաւերը, Նուրբ հաճոլք կր պատճառեն, միտքը կը սրեն եւ մտածելու ողջ~ միտ եղանակը կ'ուսուցանեն։ Շատ մբ տուներու մէջ կիները գաղափարի աշխարհէն, ընկերական կեանքէ բնաւ լուր չունին, որովհետեւ այս կարգի ՆիւԹերու Նկատմամբ խօսակցիլ կամ գաղափա֊

րակցիլ՝ ՀամեստուԹեան դէմ նկատուած է, ու այրեր այնպէս կր խորհին Թէ կիները ուղեղ չու~ Նի՞ս, անոնք փոքրիկ յիմարներ են։ Միակ համոլքը, որուն ըմբռնումը ունինք, որը լաւ մը սերտած ենք, որը ընթացիկ ու ծաւալուն բնութիւն մը ունի մեր բարքերուն մէջ եւ կը մշակուի մեր րնտանեկան յարկերուն տակ , բութոուծ է է, գձուծ . ոգիէ բղխող այն ջրդեղուած մոլութիւնը, որ կր Թունաւորէ մեր ընտանեկան լարկը, կ'անդամատէ մեր Հանրային կեանքը ու սեւ մուր մր կրքսէ մեր տոհմին ճակտին օտայիներու առջեւ։ Մեր սրտմաշուքին մէկ կարեւոր մասը, մեր լճացումին խոշոր պայմանը, մեր ԹշուառուԹեան գաղտ~ Նիքը եւ օտար կլիմաներու տակ մեր խայտա֊ ռակմանը բուն պատճառը՝ ընտանեկան յարկերու տակ անինալ մշակուած այս սովորոյթն է։ Բամբասանքը կը չորցնէ ազնուութեան սերժերը, կը վերցնէ վեհանձնուԹեան գիծերը, անաչառ դատո~ ղութիւնը անկարելի կ'ընէ եւ կը գունաւորէ մեր վճիռները, ուրիշին արժանիքը գնահատելու կարողութենչն կը գրկէ մեզ, գրպարտութեան, քսու-Թեան, մատնուԹեան ոգին կը մշակէ։ Վստահու-Թեան ոգւոյն արմատական Թշնամին է ու այսպէս կ'անդամալուծէ բարեկամուԹիւնը, ընկերակ~ ցուԹիւնները առեւտրական ու բարոյական․ ու մեր Հանրային կեանքին վրայ մեռեյուԹեան դայուկը

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՔ ՈՒ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ 171

կը զարնէ։ Բամբասանքը գժտութեանց, խուլ ատելուԹեանց պատճառ կ'րլլայ ։ Ընտանեկան տխուր տռամներ, պատուղ անկումներ, պաշտօ-ՆանկուԹիւններ, ուժի ամլուԹիւններ այս անիծեալ միքրոպէն կը սերին։ Երանի՞ Թէ ուրիշներու միսը, պատիւր, արժանիքը ծամելու այս վատ սովորուԹիւնը, այս անպիտան մոլուԹիւնը բոլորովին խեցեվճիռ ընէինք մեր ընտանեկան յարկե~ րէն եւ աւելի բարձր հաճոլքներէ սնունդ առնէինը։ Երանի Թէ մեր բեմերը, մամուլը եւ ազդեցիկ ականաւոր մարդիկ բարի օրինակ ու հզօր գործիչ-Ներ րլլային այս քրոնիկ ախտր բուժելու եւ կեն~ սատու արիւն ներարկելու՝ մեր ընտանեկան ու ւներական վատասերած կեանքի երակներուն մէջ։

Թուղթ ու նարտ խաղայու սովորութիւնը՝ կարգ մը ընտանիքներու ձմրան երկար գիշերները սպաննելու եւ հաճոյանալու ընթացիկ միջոցը նկատուած է։ Այս խաղը Թէեւ ինքնին անմեղ է, բայց ունի իր ստորին զուգորդուԹիւնները, hp տափակուԹիւնները։ Աւեյի ժամանակ կը սպաննէ քան հաճոլք կ'առԹէ, միտքը կը բԹացնէ քան կը սրէ, բաղդախաղի լառաջաբան է եւ Հաձոլքի գռեհիկ ճաշակ մը կը շինէ խաղցողներու մէջ։ ԵրեկոյԹներու պատուական ժամերը այս կերպով անցնել իմաստուն կերպը չէ, եւ ընտանեկան կեանքի բարձրացնող ոյժ մր չկրնար նկատուիլ։

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԸՆտանեկան երեկոյԹներ աւելի ոգեւոր bι հրահանգիչ կրնան րլլալ, եթե ընտանեաց մեծ անդամները իրենց գերագոյն պարտքն ու Հաձոյ**քը** Համարին շահագրգռիլ փոքրիկներու կեանքին, սնոնց երջանկութեանը միջոց ու սատար ըլլալ՝ պատմելով Նորավէպեր, Նախահարց կեանքէն դէպ-_pեր, օրուան անցուդարձէն յուզիչ եւ օգտակար իրողուԹիւններ։ Մանուկ միտք մր աւելի նկարագ~ րական ու պատմական երեւոլԹներ կ'րմբռնէ, անոնցվէ կ'ախորժի։ Այս պատմութիւնները թե անակնկալ հաճոլը մը կուտան, Թէ երեւակայու-Թիւնը կ՛րնդյայնեն եւ Թէ նկարագրի կարեւոր կէտեր կը շօշափեն ու տղուն կամքը առողջ սկրգբունքներով կ'ուղղեն դէպ ի առաքինուԹիւնը ։ Ինչպես ակնարկած եմ, հանելուկ, առած, առակ միտքը աւելի Թարմ ու կեանքը գնծաւէտ կր *պահե*ն ։

Տան մէջ մանուկներու յատուկ գրադարան մը զուարձուԹեան կարեւոր աղբիւր մ'է։ Այդ գրատան գրքեր կրնան ըլլալ տոհմային պարզուկ պատմուԹինններ, բարոյական գողտրիկ վիպակներ, մանկանց պարտքը շօշափող գրքոյկներ, յստակ ու գողտրիկ ոճով գրուած պատկերազարդ բանաստեղծուԹինններ, ճամբորդուԹեան գրքեր եւ բոյսերու, կենդանիներու կեանքէն առնուած հետաքրքրաշարժ իրողուԹինններ։ Գրքերը ըլլալու են

ርህՏԱՆԵԿԱՆ ՉՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՔ ՈՒ ԵՐԵԿՈՑԹՆԵՐ 173

կարճ, պարզ, գեղեցիկ եւ պատկերազարդ։ Այս կարգի հաճոյքի աղբիւը ունեցող մանուկ մը քիչ անգամ փողոցի ստորին հաճոյքներէն համ կ՛առնէ կամ՝ իր նկարագիրը վրայ կուտայ։ Այս գրքոյկ-Ները տղուն միտքը բաց կըպահեն ճշմարտու~ Թեան եւ լաւկեկ օժիտ մր կ'րլլան իրեն, երբ դպրոց լաճախէ։ Մանկան իրեն լատուկ գրադարան մը ունենալը իր ՀպարտուԹիւնը կըփայ~ փայէ եւ անոր ուսումնական մր րլյալուն գրգիդը կուտալ։ Տղալը այ ընկերոլԹին զուարԹ գոյն մը կընան տալ իրենց կեանքին լուզիչ դէպքերը պատմելով, իրենց միտքը նեղող Հարցումներ Հարցը-Նելով, երգ երգելով, գոց րսելով։ Երբեմն մա-Նուկները կրնան ինքնին հանդէս մը սարքել անկախօրէն եւ ընտանիքը զուարձացնել։ Մարվինը ύωραση, ύμωρη կազդուրող եւ վիշտերը լիշողու-Թենէն հեռացնող խաղեր այ կան ։ Արեւմուտքի ազգեր այս մասին շատ յառաջադէմ են․ մենք այնչափ, նախապաշարուած ենք որ կրխորհինք Թէ մանուկներու հետ խաղայր մեր մեծանձնու-Թեանը կը դպչի եւ զանոնը լուրջ մարդեր ըլլալէ կ'արգելէ։ Պարտէզ ունեցող ընտանիքներ ձոխ պա՛տեհութիւններ ունին զուարճանալու։ Խաղ, վազք, լոգանը, ծառի մագլցում, ծաղկեմշակուԹիւն, ըն~ տանեկան հաճոլքի անզուգական աղբիւրներ են։ Թէեւ ամէն տուն չունի պարտէզ, սակայն կրնալ

ունենալ ծաղկանոց մր կամ գէխ ծաղկի քանի մր Թաղար, մանուկներու հոգածուԹեան յանձնուած։ Մանկունք այս միջոցով Թէ գեղարուեստից ճաշա**կը** կը մշակեն, ԹԷ շարունական հաճոյք մը կ'ունե-Նան, բան մր Հսկելու, անոր աճումին հետեւելու Հակումը կը գօրանայ եւ մանուկը փողոցի աղտոտ ընկերուԹենէն անջատող եւ ընտանիքի նուիրական յարկին կցող կապ մը կը շինուի ։ԵրաժշտուԹիւնը ընտանեկան կեանքը անուշցնող ամենէն գերա-Նուրբ Հաձոյքն է։ Այն տունը ուր մանկան վեղվիկ մրվունջը, Հայրիկին սրտառուչ աւաչը, մայրիկին յուզիչ մեղեդին չբարձրանար, այն տունը ուր Հա~ ռաչն ու ճռուողը, Սաղմոսն ու ալէլուիան չեն գրկախառնիր, այն տունը կազդուրիչ ներշունչէ զուրկ է։ Դիտուած է Թէ երաժշտական գործիք ու-Նեցող տուներու դաւակունք աւելի զուարԹ բնա~ ւորուԹիւն կ'ունենան և Հացող սրինգը , մարեցնող քնարը, յուզող ջութակը, վերացնող դաշնակը եւ սրտի ձայնը ամենէն հասարակ խրճիթն իսկ երջանիկ բնակարանի կր փոխարկեն։ Երգերու մէջ այ ընտրութիւն կարեւոր է։ Անբարոյիկ, լպիրշ խաղեր բնաւ պղծելու չեն մանկան անմեղ շրը~ Թունքը ու երեւակայուԹիւնը ։ Սիրահարական եղա-Նակներ կանխահաս հուր մր վառելու չեն անոնց սրտին մէջ, ոչ ալ մելամաղձոտ եղանակներ խլելու են անոնցվէ կեանքի կորովը։ Աւելի զուաթթե

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՔ ՈՒ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ 175

լուրջ, խորհրդաւոր երգեր, սրբազան Սաղմոսներ եւ անուշ յիշատակներ յուզող գողտրիկ բանաս~ տեղծուԹիւններ տպաւորուելու են մանկիկներու յիշողուԹեանը մէջ իբր օժիտ անոնց կեանքին։

Երանի Թէ ձայնական ու գործիական երաժըշտուԹիւնը տիրող հաճոյքը ըլլար ընտանիքի . այն ատեն կարգ մը գռեհիկ հաճոյքներ ինքնին պիտի բացակայէին ։

Խնձոլը, այցելուԹիւն, տօնախմբուԹիւն Հաձոյքի ուրիշ նոր աղբիւրներ են։ Խնձոյքը իրեն հետ զուարԹուԹիւն, ժպիտ, ոգեւորուԹիւն ųп բերէ. Թէ միտք եւ Թէ ստամոքս նոր ուժով մր կը կազդուրուին , մանաւանդ մանկիկներ զուար~ ճութեան նոր պարագայ մր կ'ունենան։ Այցելու-Թիւնները զով ու Թարմ օդի մր տպաւորուԹիւնը կը Թողուն ընտանեկան միօրինակ կեանքին մէջ։ ԱյցելուԹիւններ ունին իրենց հետ փոխադարձ ժպիտը, սիրալիր յարաբերութիւն, քաղգր կատակ, Նոր պատմուԹիւն։ Ցաճախ այցելուԹիւն ընդու-Նող ընտանիքներ ու զաւակները աւելի զուարԹ, ուշիմ, քաղաքավար կ'րլյան ու կեանքի վրայ այ լաւկեկ ՀմտուԹիւն մը կ'ունենան; կեանքի փիլիսոփայուԹեան նկատմամբ այ սկմնակ դասեր մր կ'առնեն։ Աշխարհի մէջ բան մր այնչափ հաճոլը չտար որչափ գիրար Հասկցող ու սիրող խմբակի մը փոխադարձ այցելուԹիւնները։ Ամէն ընտանիք նեղ կամ լայն յարաբերական ընտիր շրջանակ մը ունենալու է։

Անձնական, ընտանեկան ու կրօնային տօնախմբուԹիւնները իրենց մէջ կազդուրող, յուղող, վսեմացնող Հանգամանք մը ունին։ Կեանքի անապատին մէջ ովասիսներ են, որոնց մէջ պահ մը կը ժպտինք։ Իրենց յիշատակներու երեքժանիովը մեր սրտին ավենէն Թագուն յուշերը, երազները, հասառքներն ու յոյսերը կը խառնեն։ Տօնախմբու-Թիւնք մտքի դադարին, ընկերական յարաբերու-Թեան, պերձանքի հահոյքներն ալ ունին։ ԵԹէ պատշահ եղանակաւ յարգուին, մառախլապատ երկինքէ մը վերջ ծագող ժպտուն արեւի մը տպաւորուԹիւնը կ'ընեն։

Անշուշտ դեռ շատ ուրիշ հաճոյքներ կան ընտանիքի երջանկուԹիւնը շինող, որոնք ծնողքներու խոհական ընտրուԹեանը, լուրջ մտածուԹեանը եւ մեղուաջան աշխատուԹեանը կը յանձնենք, պընդելով Թէ մանուկներու մեծնալը այնչափ կախում ունի ժպիտէ ու ցնծուԹենէ որչափ հացէ ու արեւէ։ Անշող երկիրը դրախտ ու անժպիտ կեանքը ծաղկաստան չդառնար։

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

ዓያ

ԱԶԳԱԿ8ԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Այս խորագրին տակ կրնանք խմբել արենակցական ու ինամիական յարաբերութինն, որոնք իրարու հետ սերտ առնչութին ունեցող ընտանիքներու խումբը կը շինեն։ Գերդաստանի մը անդամները եւ իրարու հետ խնամիական թելով կըցուող գերդաստանները բնական է որ փոխադարձ պարտքեր ու իրաւունքներ ունենան, որոնց չգիտութենկն մեծամեծ պառակտումներ կը ծագին։ Անշուշտ գերդաստանի մը վերաբերող անհատները ընտանիքի մը անդամներուն չափ անխուսափելի թելով մը կապուած չեն։ Բայց գերդաստանին պատիւը, հասարակաց կարծիքը եւ խիղճը հոս ալ իրենց հրամայական պահանջումները ունին, որոնք դարերու ընթացքին մէջ սրբագործուած են։

Գերդաստանի մը անդամներուն առաջին պարտքն է զիրար եօԹՆ–օտար չնկատել այլ եղբայրակից։ Բնական, անպայմանադրական սիրով կապուիլ իրարու հետ։ Ոեւ է պարագայ պէտք չէ որ այս ըմբռնումը ջնջելու բնուԹիւնը ունենայ։ Սոսկալի վէճերէ ու կռիւներէ վերջ, երբ պարա-

303 --- (" +++ " L+++- *+++

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

գան գալ, դարձեալ հաշտուելու է մոռնալով ամէն բան։ ՆերողամտուԹիւնը ազգակցական կապեր ամրապնդող լաւագոյն միջոցն է։ Շատ անգամ խնավիներ գիրար խծբծելու մասնաւոր մղում մր կը զգան ։ Մամնաւոր պահանջկոտութիւն մր ու-Նին իրարու Հանդէպ։ Քաղաքավարական փոքրիկ զանցառութիւն մը, անխորհուրդ վարմունքի փորրիկ միջադէպ մը, պարտուպատշաճի օրինաց զարտուղութիւն մր պատճառ կ'րլլայ որ մեծ վլվլուկ մը փրԹի, անյարմար խօսքեր փոխանակուին երկուստեք, եւ խնդիրը աւելի լուրջ գոյն մր առ-Նելով առժամեայ ու երբեմն մնայուն քէն մի շինուի ։ ԲծախնդրուԹիւնը սիրող ու Հեռատես ոգիէ չբղխիր, այլ՝ պաղ սէրէ ու անձուկ րղեղէ։ Մնայուն յարաբերուԹեանց մէջ զոհողուԹիւնը հրամայական ու ներողուԹիւնը օրէնք է։ Մտքի տարբեր տրամադրուԹիւնները, զարգացումի չափը, նկարագրի մասնաւորուԹիւնները, պարտքի տարբեր րմբռնումները եւ խառնուածքի զանազանութինը բնականաբար բաղխումներ յառաջ պիտի բերեն գերդաստանին մէջ։ Բայց ներողութեան լայն զգազումը ու հեռատեսութիւնը հաշտարար եղանակով կարգադրելու են այս ամէնը, որովհետեւ ոեւ է բաղխում իր անախորժ հետեւանքը՝ կ'ունենայ եւ գերդաստանական սրտէն տկար Թելը խզելու պատ~ ճառ մը կ'րլյայ։ ԽոհեմուԹիւնն ու խոնարհու-

ԱԶԳԱԿ8ԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Թիւսը մեծ անպատեհուԹեանց առաջքը կընան առնել։ Խնդիրը խնամուԹեանց մասնաւորելով՝ պէտք է շեշտել սա կէտը Թէ անոնք զիրար կողոպտելու վատ ունակուԹիւնը ձգելու են։

Պարտուպատշանի օրինաց կռթնած, գիրար կեղեքելու չեն, ոչ այ իրարմէ մեծ զոհողութիւն-Ներ ակնկայելու են։ Խնամութիւնը Հանք մր նկատելով՝ զայն շահագործելու գձուձ միջոցներուն դիմելու չեն, իրարու շահ նկատելով՝ աւելորդ ծախսեր արգիլելու են եւ բարեկամական զուտ, Հարազատ սիրով կապուելու են։ Համերաշխութեան արմատական Թշնամին շահախնդրական ոգին է, արծաթայան արդան արդան հայտուն արդան հայտուները երթալով կ'աւեյնան կեանքի պալքարին խրստութենկն ու եսապաշտական դաւանանքներու համարձակ ծաւայումէն։ ԳէԹ գերդաստանական ու խնամիական լարաբերուԹիւնները զուրկ ըլլային այս ազդեցութենէն եւ անուշ յարաբերութեանց լայնկեկ շրջանակ մը ունենայինը այս աշխարհի մէջ։ Ցարաբերութիւնը ջերմ րլլալու համար շարունական րլլալու է։ Առանց շարունական տեսակցութեան ամենէն մտերիքներն իսկ իրարմէ կ'օտարանան ։ Որչափ այցելուԹիւնները կանոնաւոր եւ յաճախ րլլան՝ նոյնչափ կապը կ'ամրապնդի, որչափ սակաւ՝ Նոյնչափ բարեկամուԹիւնը օտարուԹեան Հանգամանքը կ'առնէ։ Պարբերական կա֊

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ՆոՆաւոր այցելուԹիւնը պէտը են աչքի — լոյսի, տօնի, նշանտուքի, Հարմնիքի եւ դժբաղդու-Թեանց առիԹներով։ Այդ առիԹներով պէտք է երԹալ, որովհետեւ առանց բարեկամներու ներ~ կայուԹեան անոնը ՀեգնուԹիւն կ՛րյլան ու անտանելի վիշտ կրպատճառեն։ Ոեւէ չքվեղանք չկրնար արդարացնել անոնցվէ բացակայելու պա~ րագան, ոեւէ զոհողութիւն բանաւոր պատճառ մը չէ որ մեկուսի քաշուինք։ ՈւրախուԹիւն շեշտող հանդեմներու մէջ բարեկամական խնդակցու-Թիւնները անհրաժեշտ են Թէ անձի ներկայու-Թեան եւ Թէ ընծայի ձեւին տակ։ Այս մասին ոեւէ խնայութիւն բարեկամներու սրտին սեւու~ Թիւնը, սիրոյն պաղուԹիւնը կըցուցնէ եւ տխուր մտածումներու, անպատեհ ընթագքներու գրգիռ կ'րլյալ։ Ո եւ է ուրախառիԹ պարագայի տակ առա՞- 🗉 ջին խնդակցողը բարեկամը րլլալու է — ասոր զանցառութինը նախանձ ու անհոգութին կր մատնէ։ ԽնդակցուԹիւնը կը բազմապատկէ ուրա~ խուԹիար։ Դիտուած է Թէ ազգականներ աւելի Նախանձոտ աչքով կըՆային իրարու յաջողու-Թեանը վրայ քան օտարներ։ Անոնց բարձրացումը իրենը անպատեհուԹիւնը կընկատեն։ Կ'ուզեն որ մակարդակէն վեր չբարձրանան։ Գռեհիկ իրենգ մտածումի, գձուձ Հոգիի ծայրագոյն աստիճանին վրայ կը կենան։ Ազգականներու բարձրագումը

180

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

իրենց փառը նկատելու են եւ հոգեւին ողձայու են ակոնց առաջդիմութեան։ Այս կարգի նախանձ մը բարեկամունեան մահ կընշանակէ։ Ա՛լ անկարելի է որ սրտով զիրար սիրեն, Թէեւ պայմա-Նադրական յարաբերուԹիւններ մշակեն։ Դժբաղդութեանց պարագային Համակրող, խրախուսող ազգական մը տրտում սրտին վրայ ճառագայթեող ծիածան մ՚է։ Օտարին Համակրանքը վայրկենական, պայմանադրական ու մեթենական է․ չկրնար դարմանել դժբաղդուԹիւններու Թողուցած խորունկ վէրքը ։ Ազգականներու քաջալերուԹիւնը երկար ու ի սրտէ րլլայու է։ Ազգականին սրտաբուղիս Համակրանքը ցաւերու սպեղանի մ՚է։ Դժբաղդու~ Թեանց առԹիւ ինքզինքը մինակ զգալուն չափ սարսափելի բան չկալ։ ՎշտակցուԹիւնը երկնային բալասան մ՚՚է, խնդակցութիւնը՝ օծում մր։

Ş

Ազգականական յարաբերուԹեանց մէջ Թընձկոտ հարց մը կայ, որ կ'արժէ մասնաւոր ուշադրուԹեան առարկայ ընել, այսինքն Թէ ի՞նչ աստիճանի զոհողուԹեան յանձնառու ըլլալու է ազգական մը ԹշուառուԹեան ճանկերէն ազատելու, պարտքերը վճարելու, երաշխաւոր ըլլալու անոր վարկի մահացման ըոպէներուն։ Անոր դրամագլուխ տալո՞ւ է որ անկախաբար գործէ եւ տա-ժանքոտ զբաղումէ ազատի։ Անոր ընտանեաց օգնելո՞ւ է, եԹէ ինքզինքը գինեմոլուԹեան, խաղա-

ւսջասիքի ՎերլուԾՈՒՄՆԵՐ

մոլուԹեան եւ շուայտուԹեան անձնատուր ընելով՝ զանոնը չքաւորուԹեան կը մատնէ։ Ազգականի մը մահէն վերջ անոր Թշուառ ընտանիքը ապրեզնելու հոգը ստանձնելո՞ւ է։ Ասոնը կենսական խրնդիրներ են , որոնք բացարձակապէս չենք կրնար լուծել, այլ մերձաւորապէս։ Անշուշտ եԹէ երկու ազգականներն ալ չքաւոր են, խնդիրը ինքնին կր լուծուի բացասօրէն։ ԵԹէ մին չափազանց ունեւոր է, Նորէն կըլուծուի հաստատական կողմը։ Բայց եթե բարեկեցիկ կեանք մր կ'ապրի կամ՝ Հագիւ օրապահիկը կը ճարէ, խնդիրը կը դժուարանալ, որովհետեւ նշանակելի օգնուԹիւն մը իրեն ալ կործանման պատճառ կ'րլլալ, քանի որ անձ-ՆապաշտպանուԹիւնը մարդուս առաջին պարտքն է։ ԵԹէ ազգականի մը գործ կամ դրամագլուխ կըը~ Ծանք տալ որ անկախօրէն իր ապրուստր ճարէ, լաւագոյն կարգադրուԹիւնը րրած կ'րլլանը, Ъι զանոնք կեանքի պայքարին դէմ զինենք՝ գիտու-Թեամբ՝ օրհնեալ կարգադրուԹիւն մը ըրած կ'ըլ~ լանք։ ԵԹէ այս չենք կրնար՝ անշուշտ պարբերաբար դրամ կամ նպաստ տալու պարտաւոր ենք որչափ որ մեր տնտեսականը կըներէ։ Պարտքի եւ երաշխաւորուԹեան խնդիրը բարդ խնդիր մ՚՚է։ ԵԹէ մեր բարեկամը բարդին մէկ անակնկալէն ինկած է ու յոյս ունինք Թէ մեր ձեռնտուուԹիւնը զինք կրկանգնեցնէ եւ մեր իրաւունքները կրկին

ԴՐԱՑՈՒԲԵԱՆ ԽՆԴԻՐ

կը վերստանանք, դարձեալ պէտք է օգնել։ Իսկ եթէ մեր երաշխաւորութինը սոսկ զգացում մը պիտի փրկէ եւ մեզ ալ իրեն հետ մնանկութեան անդունդը ընկղմէ, պէտք չէ որ օգնենք։ Այս կարգի խնդիրներու մէջ հեռատեսութինը ու եղբայրսիրութինը միասնաբար գործելու են եւ հաշտարար կէտի մը յանգելու են։ Եթէ մեր ձեռքը չհամնիր բարոյական աջակցութեն անդին, պարտք *չծանրանար մեր ուսերուն վրայ։ Բարոյական աջակցութինը պակաս հրաշքներ չկատաբեր։ Թելադրութինն, գործի մը գաղտնիքը սորվեցնել, մութ խնդիրներու մասին ազգականի մը միտքը լուսաւորել՝ կեանք ապրեցնել է։

ታት

ԴՐԱՑՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Խնչպէս համայնքներ իրենց միջազգային յարաբերուԹիւնը՝ Նոյնպէս տուներ իրենց դրացիա կան յարաբերուԹիւնը ունին։ Կ'արժէ այս ալ Նկատի առնել իբր վերջինը մեր բրքրած խընդիրներուն։

Տան մը երջանկուԹիւնը չափով մը կախում ունի դրացիներու որակէն եւ մեր անոնց հետ ունեցած յարաբերուԹենէն։ Լաւ դրացիներ ունենալ՝ դրախտն ապրիլ կը նշանակէ։

Դրացիներ կ'ազդեն իրարու։ Քաղցր դրացին անուշուԹիւն կըբուրէ, գէշը գարշահոտուԹիւն։ Ջանալու է լաւ դրացի ունեցող տան մը տիրանալ։

ԴրազիուԹեան մէջ նկատելիք՝ առաջին կէտը • յարաբերուԹեան խնդիրն է։ Դրացի կայ որ տա~ րիներով իր դրկիցին տունը ոտք չկոխեր։ Մար~ դեր կան որ աւելի կր Հետաքրքրին Չինու անցուդարձէն քան դրացւոյ կացուԹենէն։ Սա տեսակ մեկուսացում՝ մը բնաւ չարդարանար ոեւէ մէկ երկրի բարքովը։ Մարդուն միջավայրը մարդն է։ Դրացիներ զիրար այցելելու են , ցաւակցելու եւ խնդակցելու։ Երեկոյթ, տօն, ժամանց, Հարսա-Նիք միասին ընելու են։ Համակիր դրացին հարազատ եղբայր մը կ'արժէ։ Այս այցելուԹիւնք իրենց չափը ունին։ ՎերապահուԹիւնն այ պէտք է։ Պէտը չէ դրացի մը ձանձրացնելու աստիճան անոր տունը յաճախել ։ Դրացւոյ մը տան ներքին գաղտնեաց Թափանցելու պէտք չկայ։ Անքաղաքավա~ րութիւն է։ Ամէն տուն ունի իր ներքին ինքնուրոյն գործերը։

Դրացիներ չափով մ՚ալ զոհելու են իրարու

ԴՐԱՑՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Համար նիւթապես ու բարոյապես։ Դրացին դրացւոյն մոխիրին կարօտ է։

Դրացիներու Հետ Հաշտարար ոգւով ապրելու է։ Ավէն փոքրիկ բանի Համար վէձ, քէն ընելու չէ. քննադատօրէն յարաբերելու չէ, շատ անգամ զանցառուԹեանց եւ վնասներու աչք գոցելու է։ Հաշտարար ոգին պատաՀական ծանր խընդիրներ իսկ կընայ կարգադրել։ Դրացւոյ Հետ կռիւի բռնուիլ լաւ ելք չունենար, եԹէ մեր դատը շահինք իսկ։ Երբ դրացիդ անխղձօրէն ու չարակամուԹեամբ կը սկսի ծանր վնամներ տալ, վարկիդ դպչիլ, գաղտնիքներդ հրապարակել, այն ատեն հաշտարար ոգին մէկդի ձգելով լուրջ ու կտրուկ ընԹացք մը բռնելու է որ իրաւունքը ոտնակոխ չրլլայ եւ անիրաւուԹիւնը չտիրէ։

Դրացիներու մէջ միշտ կռիւ կը պատահի, երբ տան մը մէկ մասը նորոգելու կամ նոր յաւելուած մը շինելու պարագան գայ։ Այս ատեն քաղաքային օրէնքի տրամադրուԹիւնը որոշ գիտնալով՝ անոր համեմատ շարժելու է։ Ատեն ատեն խղճի օրէնքին ալ դիմելու է, երբ քաղաքային օրէնքը յարգելով իսկ մեր դրացւոյն մեծ վնաս տուած կ'ըլլանք եւ անոր բարեկամուԹիւնը կը մահացնենք։ Ճշմարիտ ընկերսիրուԹիւնը մսոտի վէճեր ու ծանրակշիռ կռիւներ իրենց բոյնին մէջ կը խղդէ։

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Դրացւոյ բարձրացումին խորԹ աչքով նայելու չենք, ոչ ալ ակնարկուԹիւններ ընելու ենք այս մասին։

ՀամակրուԹիւն, կենցաղագիտուԹիւն, պարտուց եւ իրաւանց յստակ ըմբունում ԹԹուներ են որ դրացիական ամէն կարգի խնդիր կրնան լուծել ։

ԱՆուշ յիշատակ մը Թողելու է դրացիներու վրայ․ երբեմն անոնցմէ կախում ունի մեր համբաւը։ ԱՆոնք են որ մեր գերեզմանին վրայ անէծք կամ արցունք պիտի Թափեն։ Մեր բարի վարքը Թող ինկէ մեր յիշատակը, երբ շիրմին քարը մեր վրայ հանգչի։

8	Ա	Ն	Ч

.

•~ · ·

•

-	8 Ա Ն Կ
	· · ·
ԴԼՈՒԽ	<u>ይ</u>
U.	Գէոք է ամուսնանալ եւ երբ · · · · · 7
ß	Ամուսիններու ըն ցրուն իւն ․ ․ ․ ․ ․ ․ 12
Գ	Նշանախօսունիւն ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ 22
ጭ	՝ Գսակ ու հաrսանիք · · · · · · · · · 27
Þ	Գաբեիք առն ու կնոջ • • • • • • • • 33
2	Հայր ու զաւակունք ․ ․ ․ ․ ․ ․ ․ . 44
Է	Մայր ու զաւակունք
C C	Ծնողքիք orինակ
P	Զաւակաց պաrsիք առ ծնողս · · · • • 115
ቆ	Եղբայրական ու քրոջական յարաբերուԹիւնք 👘 131
ታሁ	Հաrս ու կեսուբ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ 137
ታ ሉ	Մամ, sաs, նեr, sալ, եւայլն ․ ․ ․ ․ ․ ․ 153
ፊԳ	Ո ւ բեւաւին ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ 157
ታት	Սպասաւոr, սպասուհի, հոգեզաւակ 🛛 . 🔹 159
ዋይ	Ըն sանեկան զուա բճուԹիւնք ու եբեկոյԹնե բ · 167
ታ ዳ	Ազգակցական յառաբեռութիւնք 🦾 🗤 😽 177
ፊቲ	Դոացունեան խնդիր ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ 183

.

• ✓

